

ԷԶՄԻԱԾԻՆ



1963

ՌՆԺԲ
Ի ՏԱՐԻ
Ապրիլ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Դ

1963





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Կյանքի և լույսի հաղթանակը	էջ 3
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՏ գերագույն սովետի նախագահության հորհրդի նախագահ Նազուկ Հաբուբյանյանի միջև փոխանակված հեռագրերը	5
Փրկչի հրաշափառ և Սուրբ Հառուբյան տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրաքաղաք Պատմա-բնակավայրի և Կաթողիկոս Նաթին Սուրբ Ոձնարյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և բոլոր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված հեռագրերն ու գրությունները	6
և Սուրբ Հառուբյան տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրաքաղաք Պատմա-բնակավայրի և Կաթողիկոս Նաթին Սուրբ Ոձնարյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ռդյույնի հեռագրերն ու գրությունները	12
Փրկչի հրաշափառ և Սուրբ Հառուբյան տոնի առթիվ հայրապետական սուրբ պատահազ և քաղաք Մայր Տաճարում	14
Հայրապետական կոչ հայ ժողովուրդին ու ի սփյուռք աշխարհի	17
Մ Ա Յ Ր Ա Ք Ո Ռ Ո Ւ Մ	19
Դիպլոմային աշխատանքների պաշտպանություն և վկայականների բաշխման հանգիստ Հոգևոր ճեմարանում	20
Սուրբ Հառուբյան Տաճարի հորհուրդան ի խնդիր հանգանակության ձևերի հիմունքները	21
Հ. Ջ. ՍԻՐՈՒՆԻ— Պոլիս և իր դերը	24
Ա. ՇԱՀԻՆՅԱՆ— Մեկաց աշխարհի Սուրբ Կառապետ վանքի ձևագրերը	42
Ս. ՓԱՅԱՋՅԱՆ— Նյութեր թուղթի մասին գաղափարի պատմություններ	47
ԱԼԱՆԱԿՐԿՈՒ— Հայկական առաջնախաղի մր Կառնոթագի (Բուզադիա) Առկուլու զորքին մեջ	50
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	52
Յուզակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձևագրերի	56

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՏ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“.

Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1963 թ.



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱԹՆ ՀԱՅՈՑ



Ն Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԿԶԱՆՔԻ ԵՎ ԼՈՒՅՍԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Սուրբ Հարության տոնն է այսօր, Ջատիկ։ Եկեղեցու սրբապան բեմերից հնչում է դարձյալ կյանքի և լույսի մեծ ավետիսը՝ «Ջրիստոս յարեալ ի մեռելոց»։

Մեր մտածումներն ու պզգացումները նորից թևածում են Ջրիստոսի թափուր բայց լույս գերեզմանի շուրջ, որտեղ «ի կոյս վիմէն» բացվում է մեծ արշալույսը մարդկանց փրկության, հոգևոր ազատության, բարոյական վերածննդան։

«Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ լիցուք ի սմա» (Սաղմ. ճԺԸ 24)։

Հին կրոնների պատմությունը և ժողովուրդների բանավոր ստեղծագործությունները հարուստ են եղել հարության մշուշոտ գաղափարներով։

Միայն քրիստոնեական կրոնն է, որ Ջրիստոսի հարությամբ, անորոշ այդ գաղափարները դարձրեց ճշմարտություն՝ Ջրիստոսի իսկ վկայությամբ. «Ես իսկ եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ լիս, թէպէտ և մեռանի, կեցցէ» (Յովհ. ԺԱ 25)։

«Այսօր մահը իր վախճանին կհասնի հարության հաղթանակով և կյանքի լույսը, գերեզմանի քարերը ճեղքելով, թափք կանոն դեպի երկինք ու կճառագայթե հորիզոնէ հորիզոն, լուսավորելով աշխարհը ամբողջ և հոգիները մարդոց», — ասում է Վեհափառ Հայրապետը իր այս տարվա պատկական քարոզի մեջ։

Հարության տոնը քրիստոնյա աշխարհի մեծագույն և համաժողովրդական տոնն է։

Եկեղեցին ունի, հարության հրաշալի դեպքին նվիրված, տոնական օրերի մի ամբողջ շրջան, որ սկսվում է Ծաղկապարոյից և շարունակվում է մինչև հոգեգալուստ։

64 օր ընդգրկող Հարության այս ժամանակաշրջանը հայ հավատացյալի համար միաժամանակ զարնան տոն է։ Ծաղկապարոյ, Ջատիկ, Կանաչ և Կարմիր կիրակի ցույց են տալիս և նշում, որ այս հորջորջումները «ամենքն այլ զարնան տոնի բնապաշտական հին հանդիսավորություններ կհիշեցնեն» («Սուրբք և տոնք», 1939, Երուսաղեմ, էջ 295)։

Պատահական չէ, որ տարվա բոլոր կիրակիները ևս նվիրված են հարության հիշատակին և խորհուրդին, ամեն կիրակի Յուդաբերից Ավետարանի ընթերցումով։

Ս. Հարության տոնը մարդու հոգևոր վերածննդան, բարոյական կատարելության տոնն է, տոնը հավատի, կյանքի և սիրո։

Արդարև, Ջրիստոսի հարության ավետիսը խոստումնալից սկիզբը հանդիսացավ նոր կյանքի, առավել կյանքի, և մղիչ ուժը քաղաքակրթության։

Հոգեպես և բարոյապես սնանկացած հին աշխարհը վերակենդանացավ Ջրիստոսի հարության լույսով և զորությամբ. «Արի՛ որ ննջեսդ և կանգնեաց ի մեռելոց և լուսաւորեսցէ պեզկ Ջրիստոս»։

Ջրիստոսի հարությունը կյանքի հաղթանակն է մահվան վրա, լույսի հաղթանակը խավարի դեմ, սիրո հաղթանակը ատելության դեմ, հավիտենականության հաղթանակը մեռելության դեմ։

«Աղամով մահը ժառանգեցինք նյութին մեջ, Ջրիստոսով՝ անմահությունը, ոգիին մեջ», — ասում է պատկական իր քարոզի մեջ Նորին Ս. Օծությունը, Պողոսյան հարապատ ոգով բայց յուրահատուկ ձևով, խտացնելով հարության մեծ խորհուրդը։

Ջրիստոնեական եկեղեցին հարության ավելի-տիսով և լուսով անցավ քան դարերի իր փառքի ճանապարհը:

Արդարև, ինչպիսի՜ ճակատագրական դժբախտություն կլինե՞ր մահը աշխարհի և մարդկանց համար, եթե չլինե՞ր հարության սփռարար գաղափարը, անմահության գիտակցությունը, որը լուսավորում է մահվան սարսափելի և անթափանցելի խավարը:

Առանց հարության սրտապնդող գաղափարի, կյանքը իրապես կդառնար, բանաստեղծի բառերով, «Աստծու ծաղրը», իսկ աշխարհ՝ «արցունքի ձովիտ»:

Հարության վարդապետությունը ջրիստոնյա մտածողության հիմնաքարն է: Ջրիստոսի մահն ու հարությունը Եկեղեցու քարոզության ուղն ու ծուծն են կապում: Որքա՜ն ճիշտ և իրավացի էր Պողոս առաքյալը երբ գրում էր. «Եթե Ջրիստոս չիցե՞ յարուցեալ, ընդունալն է քարոզութիւնն մեր, ընդունալն են և հաւատքն ձեր» (Ա Կորնթ. ԺԵ 14):

Ջրիստոսի հարությունը պատմության մեջ նոր շարժման, նոր կյանքի, բարձրագույն բարոյականի հիմքը դրեց գալիք բոլոր սերունդների համար: «Ջրիստոնեությունը հաղթանակի կատարվել է, մարգկային կյանքի մեջ բարոյական կարգի մը հաստատման ճանապարհին վրա», — ասում է Վեհափառ Հայրապետը: Հարուցյալ Փրկիչը հեղաշրջեց պատմության ընթացքը, նոր և լուսավոր կյանքի ուղիներ բացեց մարդկության հոգևոր և բարոյական կատարելության համար, և համամարդկային գաղափարներով իմաստավորեց կյանքի նշանակությունը:

Դարերով մարդկության գերագույն իղձն է եղել ապրել, ապրել հավերժորեն, հույսով նայել անվախճան կյանքի հորիզոններին:

Արդարև, մարդը չի ստեղծվել այս անցավոր, այս տառապալից կյանքի համար, և գերեզմանով չի վերջանում նրա կյանքը: Երկրավոր կյանքը և գերեզմանը գրավականն են հարու-

թյան, որովհետև մարդը ծնվել է ստեղծագործելու և հավերժորեն ապրելու համար:

Հարության տունը անվախճան կյանքի տունն է: Այսօր էլ աշխարհը, իր հոգևոր հավասարակշռությունը, հոգեկան խաղաղությունը վերագտնելու համար, իր ամենօրյա մտահոգությունների, որոնումների և տագնապների մեջ, ավելի քան երբեք կարիքն ունի հարության ոգեշնչող, ապրեցնող լույսին և պատգամին:

«Ջրիստոս յարեա՜լ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ վկեանս պարգևեաց»:

Ջրիստոսի Հարության տունը, իր սրբազան խոհերով, ամենից շատ խոսում է նաև ջրիստոնյա հայ մարդու սրտին: Ջատիկը հարության տունն է գերազանցապես, մեր ազգային, եկեղեցական վերածննդի տունը: Հայ հավատացյալ ժողովուրդը, Ջրիստոսի հրաշափառ Հարության տունի մեջ, ամեն տարի տոնել է ի՞ր հարության տունը, ի՞ր փրկության տունը:

«Հայ ժողովուրդ, ահավասիկ օր ուրախության, ահավասիկ օր հաղթության: Ահավասիկ նորեն Ջատիկ է այսօր, նորեն Ջրիստոսի հարության տունն է այսօր, և Ս. Էջմիածնեն՝ Հայոց Հայրապետը ձեզի ամենուր ողջո՛ւյն և օրհնություն կբաշխե՛ վերաշինված Մայր հայրենիքեն, խաղաղ ու ապահով, շեն ու ծաղկած Մայր Հայաստանեն», — ասում է Վեհափառ Հայրապետը:

Ս. Հարության տունի առթիվ, սրտագինս շնորհավորում ենք հայ ժողովրդի եկեղեցական այս տունը մաղթելով, որ հարուցյալ Տերը խաղաղության, բարգավաճման մեջ պահի և պահպանի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ: Աստուծո փառքի և մեր ժողովրդի մխիթարության համար:

Շնորհավոր Ս. Ջատիկ:

«Ջրիստոս յարեա՜լ ի մեռելոց»:





Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ
ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

Ուրախ սրտով շնորհավորում ենք Ձեր ընտրությունը և ողջունում Ձեզ իբրև
Նախագահության Նախագահը մեր երկրի գերագույն խորհրդի:

Ջերմապես մաղթում ենք Ձեզ արևշատություն և աշխատանքի անսպառ կորով,
որպեսզի լիակատար հաջողությամբ պսակվեն Ձեր հայրենանվեր իղծերն ու ծրա-
գրերը:

Թո՛ղ անսասան մնա մեր վերածնված Մայր Հայրենիքը, խորհրդային Հայաս-
տանի Հանրապետությունը, ու հավետ ծաղկի խաղաղության և բարօրության մեջ
խորհրդային Միության եղբայրացած ժողովուրդների փառապանծ միության դրո-
շի ներքև:

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

9 ապրիլի 1963 թ.
Էջմիածին

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Վ Ա Ջ Գ Ե Ն Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Խնդրում եմ ընդունեցե՛ք իմ խորին շնորհակալությունը այն բարի մաղթանք-
ների համար, որ Դուք հղել եք ինձ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռես-
պուբլիկայի գերագույն սովետի Նախագահության Նախագահ ընդվելու ամօթիվ:

Ն. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ գերագույն սովետի
Նախագահության Նախագահ

10 ապրիլի 1963 թ.
Երևան





ՓԻԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Ջ Գ Ե Ն Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ԶՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մոսկվայի և Ռամայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն
Ա Լ Ե Զ Ս Ի Ի Ն (Մոսկվա),
Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն
Ա Թ Ե Ն Ա Գ Ո Ր Ա Ս Ի Ն Ստամբուլ),
Ալեքսանդրիայի և Ռամայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն
Զ Ր Ի Ս Տ Ա Փ Ո Ր Բ-ին (Ալեքսանդրիա),
Անտիոքի և Ռամայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն
Թ Ե Ո Դ Ո Ս Ի Ո Ս Զ-ին (Դամասկոս),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն
Ե Փ Ր Ե Մ Բ-ին (Թբիլիսի),
Քենտրբերիի Արքեպիսկոպոս, Ռամայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ
Մ Ա Յ Զ Լ Ռ Ե Մ Զ Ի Ի Ն (Լոնդոն),
Ռուսիին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
Հ Ո Ւ Ս Տ Ի Ն Ի Ա Ն Ի Ն (Բուխարեստ),
Բուլղարիայի Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
Կ Ի Ր Ի Լ Ի Ն (Սոֆիա),
Անթիպիայի Պատրիարք Նորին Սրբություն Հ Ե Ր Մ Ա Ն Ի Ն (Բելգրադ),
Աթենքի և Ռամայն Հելլադայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
Խ Ր Ի Ս Ո Ս Տ Ո Մ Ո Ս Ի Ն (Աթենք),
Նիգոպիայի Արքեպիսկոպոս, Ռամայն Կիպրոսի Առաջնորդ և Նախագահ
Նորին Սրբապետություն Մ Ա Կ Ա Ր Ի Ո Ս Ի Ն (Նիգոպիա),
Եթովպական Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
Բ Ա Ս Ի Լ Ի Ո Ս Ի Ն (Ադդիս-Աբեբա),

Հնդկական Մալաբար եկեղեցու Կաթողիկոս Մար ԲԱՍԻԼԻՈՍ
 ԳԵՎԱՐԳԵՍԵ Բ-ին (Կերալա),
 Արևմտյան Նյու-Յորքի Եպիսկոպոսական եկեղեցու Առաջնորդ
 ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՋԵՅՅ
 Եպիսկոպոսին (Նյու-Յորք),
 Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լութերական եկեղեցու Արքեպիսկոպոս
 ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (Ռիգա),
 Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լութերական եկեղեցու Արքեպիսկոպոս
 ՅԱՆ-ԿԻՅՎԻՏԻՆ (Տալլին),
 Մխիթարյան ուխտի Աբբաճայր Գերհարգելի Հայր ՍՐԱՊԻՈՆ Վարդապետ
 ՌԻԼՈՒԶՈՃՅԱՆԻՆ (Վենետիկ),
 Մխիթարյան ուխտի Աբբաճայր Գերապայծառ Հայր ՄԵՍՐՈՊ Վարդապետ
 ՀԱՊՈԶՅԱՆԻՆ (Վիեննա),
 եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ.
 ՎԻԼՅԱՄ ՎԻՍՍԵՐ Գ' ՀՈՒՅՏԻՆ (Փրնկ),
 Ամերիկայի Միացյալ Նահանգների եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ
 ԷՐՎԻՆ ՄԻԼԼԵՐԻՆ (Նյու-Յորք):

Ուրախ սրտով կողջունենք Ձեզ մեր Տիրոջ և Փրկչի հրաշափառ հարության
 ավետիսով, և Ձեր կողքին կաղոթենք, որ Ս. Գերեզմանեն ճառագայթող լույսը,
 հզորապես հաղթական, չողա ամբողջ աշխարհի վրա և բոլոր մարդոց սրտերեն
 ներս, ի կենսագործումն ավետարանական սիրո և խաղաղության պատգամներուն,
 որոնց համար Որդին Աստուծո Գողգոթա բարձրացավ և իր մահով մահը հաղթեց,
 որպեսզի մարդիկ ավելի կյանք ունենան և որպեսզի այդ կյանքը ըլլա ավելի բարի,
 ավելի արդար և ավելի երջանիկ:

Այս ավետիսով և այս աղոթքներով գոտեպնդված, կմաղթենք Ձեզ անասան
 առողջություն և երկար ու բեղմնավոր տարիներու գործունեություն՝ ի փառս Զրիս-
 տոսի եկեղեցիին և Ձեր աստվածասեր ժողովուրդին:

«Զրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Եղբայրական ջերմ սիրով՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
 ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Ձերդ Արքություն.

«Զրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ընդունեցեք մեր սրտագին ողջույնները Զրիստոսի հրաշափառ հարության
 տոնի առթիվ: Թո՛ղ Տիրոջ հոգևոր ուրախությունն ու պերը առաջնորդեն մեզ հա-
 վիտենական կյանքի հույսով, նրա երկնային արքայության համար:

Թո՛ղ Տերը մեզ օրհնի և պահպանի այդ սուրբ ուրախությունն ու սերը մեր սրտերի մեջ մեր ամբողջ կյանքի օրերում. որպեսզի քարոզությամբ և օրինակելի գործով տարածենք Նրա սուրբ անունը մեր սերունդների մեջ. որոնք հանձնված են մեր հոգևոր հոգատարության Աստուծո կողմից:

Եղբայրական սիրով ի Զրիստոս՝

ԱԼԵՔՍԻ

Մ Ո Ս Կ Վ Ա

Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսիո

Ձերդ Սրբություն.

Ձեր սրտագին եղբայրական ողջույնը մեզ պատճառեց հոգեկան խորին ուրախություն: Ամբողջ հոգով շնորհակալ ենք և փոխադարձաբար շնորհավորում ենք՝

«Օրհնեալ է յարութիւնն Զրիստոսի»:

Ձերդ Սրբության մաղթում ենք բազում տարիների հովվապետական բեղմնավոր գործունեություն խաղաղ, քաջամոռջ և բարօր պայմաններում:

ԹԵՈՂՈՍԻՈՍ Զ

Ղ Ա Մ Ա Ս Կ Ո Ս

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

Ձերդ Սրբություն.

Ուրախությամբ դիմավորելով Զրիստոսի Հարության տոնը, սրտանց աղոթում ենք Նրան՝ իր խաղաղությունը շնորհելու համայն մարդկության: Թո՛ղ հարուցյալ Տերը բոլորիս պարզևի ուժ և կարողություն, կատարելու մեր պարտականությունը ուղղափառ Ա. Եկեղեցու համար:

Այս մաղթանքներով և զգացմունքներով, Վրացական Ուղղափառ Եկեղեցու կողմից իմ եղբայրական ողջույնն եմ հղում Ձերդ Սրբության, Հայաստանյայց Ա. Եկեղեցուն Զրիստոսի Հարության տոնի առթիվ, խնդրելով Ձեր աղոթքները մեզ և մեր Ուղղափառ Եկեղեցու համար:

«Օրհնեալ է յարութիւնն Զրիստոսի»:

Մնամ Ձերդ Սրբության եղբայրական սիրով ի Զրիստոս, աղոթակից՝

ԵՓՐԵՄ Բ

Թ Բ Ի Լ Ի Ս Ի

Պատրիարք-Կաթողիկոս համայն Վրաց

Ձերդ Սրբություն.

«Զրիստոս յարեալ ի մեռելոց»:

Սա այն բերկրալի պատգամն է, որով հրեշտակը ողջունեց լուղաբեր կանանց Զատիկի առաջին առավոտյան: Արդարև, սա այն պատգամն է, որ Զատիկը բերում է ամբողջ մարդկության:

«Մի՛ երկնչիք դուք, գիտեմ զի զԹիսուս զխաչելեալն խնդրէք: Չէ աստ, քանզի յարեալ, որպէս ասացն. եկայք, տեսէք զտեղին ուր կայր Տէրն: Եւ վաղվաղակի երթայք, ասացէք աշակերտացն նորա թէ յարեալ ի մեռելոց» (Մատթ. ԻԸ 5—7):

Սա հրեշտակային ողջույնն էր, որ աշխարհին ավետում էր, թե մեր Տերը Հիսուս Զրիստոս հարություն էր առել, որպեսզի Իր Հոր Աստուծո փառքը փայլի աշխարհի մթության մեջ: Մարդկանց մեղավոր հոգիները հավիտենապես լուսավորված են Սրա հարության ճառագայթներով:

«Քեպէտ և Որդի է, ուսալ ի չարչարանաց անտի գինապանդութիւն: Եւ իբրև կատարեցաւ, եղև ամենայն հնապանդելոց իւրոց պատճառք փրկութեանն յաւիտեանից» (Եբր. Ե 8—9):

Մենք որ կրում ենք իր տառապանքի նշանը մեր ճակատին վրա, պետք է միշտ կատարենք Նրա կամքը և հռչակենք բոլոր մարդկանց առաջ Նրա հաղթանակի ավետիսը: Մարդկանց մեղքերի հետևանքով ապականված և ապերջանիկ, բաժանյալ այս աշխարհում պետք է մենք հայտարարենք, որ մարդիկ փրկված են Աստուծո սիրո ճամբով, մեր Տիրոջ Հիսուս Բրիստոսի տառապանքի և Նրա հարության զորության միջոցով:

Բրիստոս հարյավ: Արդարև Նա հարյավ: Ալելուիա:

Եղբայրական սիրով և մաղթանքով, Ձեզ սիրող եղբայր ի Բրիստոս՝

ՄԱՅՁԼ

Արքեպիսկոպոս Զենտրներիի,

Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ Ռամայն Անգլիո

Լ Ո Ն Ն Ո Ն

Ի սրտե շնորհակալություն ենք հայտնում Ձերդ Սրբության եղբայրական շնորհավորանքների համար և սիրով և ուրախությամբ ողջունում ենք Ձեզ և առաջում զատկական ողջույնը, Փրկչի Ս. Հարության տոնի առթիվ մեր ջերմագին մաղթանքներով հանդերձ:

Եղբայրական սիրո ողջագուրմամբ՝

ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

Պատրիարք Ռումինիայի

Բ Ո Ւ Ն Ա Ր Ե Ս Տ

Ձերդ Սրբություն.

«Բրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Բրիստոսի հարության ավետիսը (Մատթ. ԻԸ 5—6) մեր հոգին լցնում է ուրախությամբ և խորին խորհրդով մարդկային երկհազարամյա պատմության մասին:

Բրիստոս հարյավ: Նա կենդանի է մեր Ս. Եկեղեցու մեջ, գործում է իր կենսաբար ուժով մեր հոգու մեջ, ինչպես մեզ խոստացել էր (Մատթ. ԻԸ 20):

Բրիստոսի Հարության տոնը գործող տոնն է Աստուծո ուժի՝ սիրո աշխարհում և պատմության մեջ:

Այս ուրախ առթիվ, սրտանց շնորհավորում եմ Ձերդ Սրբության, հոգևոր դասին, Ձեր քրիստոսասեր հոտին: Մաղթում եմ Ձեզ, իմ և Սրբազան Սինոդի անունից, մեր Տիրոջ և Փրկչի հարության շնորհիվ, առողջություն և երկար կյանք:

Ս Ո Յ Ի Ա

ԿԻՐԻԼ

Պատրիարք Բուլղարիայի

Ձերդ Սրբություն.

Եղբայրական սիրով և զատկական ուրախությամբ, հոգևոր համբույրներով շնորհավորում ենք Ձեր և միաբանության Ս. Հարության պայծառ տոնը, մաղթելով Ձեզ բեղմնավոր հովվապետություն և ամենայն բարիք Աստուծուց Ձեր Ս. Եկեղեցու համար:

«Բրիստոս յարեաւ ի մեռելոց»:

ՀԵՐՄԱՆ

Պատրիարք Անթիպի

Բ Ե Լ Գ Ր Ա Ն

Վեհափառ Տեր.

Հարության լուսավոր և աշխարհ փրկող տոնի առթիվ, երբ գերեզմանից արդարության արեգակը Ջրիստոս փառավոր կերպով հարյալ, երբ խավարի ուժերի դեմ հաղթական, մահվան գերությունից և ոչնչացումից մեկ փրկեց, այս սուրբ օրը Եկեղեցու հաղթական ծայնով Ձերդ Արքունության ավետում ենք «Ջրիստոս յարեալ»:

Միևնույն ժամանակ խոնարհաբար մաղթում ենք, որ կյանքի Տերը հովանի լինի, պահպանի և օրհնի Ձեր հովվապետական գործերը, պարզևի առողջություն և երկար տարիներ՝ Տիրոջ հարությունը տոնելու համար:

Ձերդ Ա. Օծության խոնարհ եղբայր ի Ջրիստոս՝

ԽՐԻՍՏՈՍՏՈՍՈՍ

Ա. Թ. Ե. Ն. Բ.

Արքեպիսկոպոս Աթենքի և համայն Հունաստանի

Ձերդ Արքություն.

Սուրբ ողջուն ի հարուցյալ Ջրիստոս:

Հաղթելով մահվան, մեր Տերը և Փրկիչը հարյալ ի մեռելոց, խորտակեց դժոխքի իշխանությունը և բացեց դրախտը և մեկ իր թագավորության ժառանգներ նշանակեց:

Երկինք և երկիր, հրեշտակներ և մարդիկ ուրախանում են և ամբողջ աշխարհի հավատացյալները այսօր ցնծությամբ են տոնում Տիրոջ հրաշափառ հարությունը:

Մենք ևս մեր քրիստոսավանդ ժողովրդի հետ տոնելով և փառաբանելով մեր Տիրոջ և Աստուծո խոնարհությունը և մարդասիրությունը, գալիս ենք մտքով հանդիպելու Ձերդ Արքության հետ և եղբայրորեն կոչելու՝ «Ջրիստոս յարեալ», ջերմորեն մաղթելով Ձեզ առողջություն և հաստատություն և Ձեր իմաստության վստահված Հայաստանյայց Եկեղեցուն ծաղկում և բարգավաճում:

ՄԱԿԱՐԻՈՍ

Ն. Ի. Գ. Ո. Զ. Ի. Ա.

Արքեպիսկոպոս Կիպրոսի

Ողջուն և խաղաղություն Աստուծո Հոր և մեր Տիրոջ Հիսուսի Ջրիստոսի:

Մեր Տիրոջ և Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ, ողջունում ենք Ձերդ Արքության հանուն Եպիսկոպոսական Եկեղեցու:

Տարիների ընթացքում, Ա. Հոգու առաջնորդության շնորհիվ, եղբայրության և բարեկամության սերտ կապ է հաստատվել մեր եկեղեցիների միջև՝ Հիսուս Ջրիստոսով մեր միության համար: Ջրիստոնեական սիրո մեր փոխադարձ պաշտօնները ավելի խորն են գնում մեր սրտերի մեջ, որովհետև մենք իրոք մեկ ենք, ընդունելով սուրբ առաքյալների կողմից բացատրված և ժողովների մեջ սահմանված հավատը:

Այս տարի, մինչ մենք միասին ենք տոնում Ա. Զատիկը նույն թվականին, խնդրում ենք Ձեզ աղոթքով միանալ, որպեսզի երկնավոր Հայրը լցնի մեզ իր շնորհքով և երկնային օրհնությամբ, որպեսզի կարենանք լինել Նրա հետ տեսանելի մեկ մարմին և Նա բնակվի մեր մեջ և մենք՝ Նրա մեջ, Նա, որ իր Միածին Որդու միջոցով կործանել է մահը և մեզ համար բացել է հավիտենական կյանքի դռները:

Ձերդ Արքության առողջության մաղթանքներով և Ձեր մեծ Եկեղեցու և ժողովրդի բարօրության աղոթքներով կմնանք Ձեզ սիրող եղբայր ի Ջրիստոս՝

ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՋԵՅՅ

Եպիսկոպոս Արևմտյան Նյու-Յորքի,
ատենապետ Օրթոդոքս և Հին Կաթոլիկ
եկեղեցիների միացյալ հանձնախմբի

Ն. Թ. ՈՒ. Գ. ՈՐ. Զ.

Ընդունեցեք, Ձերդ Սրբություն, իմ սրտագին եղբայրական ողջունները և շնորհավորանքները Ս. Հարության մեծ տոնի առթիվ: Թող հարուցյալ Փրկչի պայծառ լույսը առաջնորդի Ձեզ և Հայ հնադարյան Եկեղեցին, Արարատի հովանու ներքո:
«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լուսերական
Եկեղեցու արքեպիսկոպոս

Թ Ի Գ Ա

Ձերդ Սրբություն,

խնդրում եմ ընդունել իմ ջերմ շնորհակալությունը ուշադրության համար: Հարության տոնի ուրախ առիթով, ամբողջ հոգով ողջունում եմ Ձերդ Սրբությանը և բարեմաղթում, որ հարուցյալ Քրիստոսի ողորմությունները լինեն Ձեզ հետ Ձեր ամբողջ կյանքի ճանապարհին:

ՅԱՆ ԿԻՅՎԻՏ

Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լուսերական
Եկեղեցու արքեպիսկոպոս

Տ Ա Լ Լ Ի Ն

Թող Ջատիկով ծնունդ առած կենդանի հույսը ոգևորի Ձեզ և Ձեր Եկեղեցին:

ՎԻՍՍԵՐ Ղ՝ ՀՈՒՅՏ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
ընդհանուր քարտուղար

Ժ Ը Ն Ե Վ

Ձերդ Սրբություն,

ես խորապես հուզվեցի և երախտապարտ եմ ստանալով Ս. Ջատիկ Ձեր ջերմ շնորհավորանքները:

Էջմիածնում մեր այնքան հյուրասեր ընդունելության և Ձեր ներկայացուցիչ Պարգև Եպիսկոպոսի այս երկիրը դսռ վերջերս կատարած այցելության հիշատակը հավիտյանս մնալու են մեր սրտերի մեջ:

Երբ ամենուրեք բոլոր քրիստոնյաները հրճվում են Փրկչի հարության հավիտենական նշանակությամբ, մենք հիշում ենք նաև մեր հասարակաց պատասխանատվությունը ամբողջ աշխարհում Իր խոսքի և Իր օրինակի տարածման համար:

Մենք երախտապարտ ենք Ձեր աղոթքների համար և աղոթում ենք վասն սիրույն Աստուծո բոլոր մարդկանց համար:

Քրիստոնեական սիրով:

ԷՐՎԻՆ ՄԻԼԼԵՐ

ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների
ազգային խորհրդի նախագահ

Ն Յ ՈՒՑՈՐԸ

Շնորհավորում ենք Ձեզ և հավատացյալ հայերին Ս. Հարության տոնի առթիվ: Մաղթում ենք Ձեզ և համայն հայ եղբայրական ժողովրդին երջանկություն և հաջողություն խաղաղության համար մղվող պայքարում:

Շելյուպիսկամ ՀԱՔԻՄՁԱԴԵ
Մուֆտի ՎԱԼԻՋԱԴԵ

ԲԱՐՈՒ





**ԹՐԱԿՏԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՒՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամենապատիվ Տ. Եղիշե Պատրիարքին, Երուսաղեմ.

Ամենապատիվ Տ. Շնորհք Պատրիարքին, Ստամբուլ.

Ամենապատիվ Տ. Խաղ Արքեպիսկոպոսին, Բեյրութ.

Բարեխնամ բոլոր թեմակալ առաջնորդներին:

«Ջրիստոս յարեալ ի մեռելոց»:

Ս. Էջմիածնեն, ուրախ սրտով, Ձեզի ավետիսը կրերենք մեր Փրկչի հրաշափառ հաղթության, ջերմագին մաղթանքով, որ Ս. Գերեզմանեն ճառագայթող լույսը, հպոր ու հաղթական ջողա ամբողջ աշխարհի վրա և բոլոր մարդոց սրտերեն ներս, ի պտղավորումն և ծաղկումն ավետարանական սիրո և խաղաղության պատգամներուն, որոնց համար Ինքը Որդին Աստուծո՝ Հիսուս, Գողգոթա բարձրացավ և Իր մահով՝ մահը հաղթեց, որպեսզի մարդիկ ավելի կյանք ունենան, և որպեսզի այդ կյանքը ըլլա ավելի բարի, ավելի արդար ու ավելի երջանիկ:

Մեր հոգին լեցուն այս լույս ուրախությամբ, կաղոթենք Ձեր տիրախնամ թեմի եկեղեցիներու պայծառության և համայն հավատացյալ Մեր վավականներուն արևշատության և անոնց առաքինի ու ազգանվեր գործոց հաջողության համար:

Նաև ողջույն և օրհնություն Ձեզ, Ձեր Ս. Սեղաններու նվիրյալ հոգևոր սպասավորներուն, թեմական և եկեղեցական վարչությանց և եկեղեցասեր կապմակերպությանց աստվածասեր անդամներուն, որոնք Ձեր ջուրջ համախումբ, շեն և անսասան կպահեն Ս. Եկեղեցին, Ձեր բարեխնամ երկրի հյուրընկալ ափերուն վրա:

Հարուցյալ Փրկչի սուրբ և անմահ պտրությունը թող Ձեզ բոլորդ պահե պահպանե ամբողջ ու անխռով, սիրով միաբան, որպես որդիք լուսո և ժառանգորդք երկնից արքայության, զի ճշմարտության «յարեալ Ջրիստոս» և «յարութեամբն իւրով յեզ վկեանս պարգևեաց»:

Օրհնությամբ՝

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Փրկյի հրաշափառ և Ա. Հարության տոնի առթիվ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կրոնական խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլ-պենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ալեքերեդ Պերտիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբի նախագահ պր. Երվանդ Աղաճանյանին (Նյու-Յորք), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովին (Բեյրութ), Վարդանանց ասպետների կազմակերպության (Նյու-Յորք), հայրենակցական, մշակութային, տիկնանաց, երիտասարդաց և օրիորդաց կազմակերպություններին, Մայր Աթոռի բաղնիքներին և ծանօթ ապագային դեմքերի:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Մեր Տիրոջ հարության երջանիկ առիթով մեր, միաբանության և համայնքի կողմից կներկայացնենք Ձերդ Սրբության մեր ամենաանկեղծ և հարգալից շնորհավորանքները, մաղթելով Ձերդ Ա. Օծության մշտական քաջառողջություն և Մայր Աթոռին՝ բարգավաճում:

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԸ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Սուրբ Զատիկի տոնին առթիվ կառաջենք մեր և Պատրիարքությանս հոգևոր դասուն և պաշտոնական մարմիններուն և համայն հավատացյալ հոտին սրտագին շնորհավորությունները և որդիական հարապատ սերը, մաղթելով Մայր Աթոռին անասանություն և Վեհիդ երջանիկ պատկական տոնակատարություն:

ՇՆՈՐՀԸ ՊԱՏՐԻԱՐԸ

Ս Ե Ա Մ Բ ՈՒ Լ

Վեհափառ Տեր.

Ա. Հարության տոնին առիթով հաճեցեք ընդունիլ շնորհավորանքս և սրտագին մաղթանքներս Վեհիդ քաջառողջության, արդյունաշատ գործունեության, Մայր Աթոռի անսասանության ու պայծառության համար:

ԽԱՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Բ Ե Յ Ր ՈՒ Թ

Ամենայն Հայոց Հայրապետի անունով ստացվեցին նաև հարգալից պգացմունքներով և ամենաջերմ սրտով գոված բավաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին բոլոր թեմերից, թեմակալ առաջնորդներից, ապգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և ոտար պաշտոնական անձնավորություններից:





ՓՐԱԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԶԱՐՈՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ապրիլի 14-ին, կիրակի, Զատիկ, Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Առաւելոյ ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետը, նոր Վեհարանից, հայրապետական լրիվ զգեստավորման մեջ, ամպհովանու տակ, եկեղեցական թափորով առաջնորդվում է հանդիսավորութեամբ Մայր Տաճար, Զատիկյա տոնի առթիվ սուրբ պատարագ մատուցելու:

Սուրբ Սեդանին սպասարկում են գերաշնորհ Տ. Հայկազուն և Տ. Ասողիկ սրբազանները, հոգեշնորհ Տ. Մեսրոպ, Տ. Ներսես վարդապետները, Տ. Արսեն արեղան, արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարտիրոսը և սարկավագները դասը:

Սուրբ պատարագին ներկա է հավատացյալների և ուխտավորների բազմութիւն:

Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել Գերագույն Հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ընթարանի դասախոսական կազմը և այլ պաշտոնական անձինք:

Սուրբ պատարագի Կոմիտասյան երգեցողութիւնը կատարում է հաջողութեամբ Մայր Տաճարի երգեցիկ խումբը, խորեն Հակոբյանի ղեկավարութեամբ:

«Տէր ողորմեա»-յից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:

Ամէն:

«Քրիստոս յարեալ մեռելոց»:

Սուրբ հարության ուրախութեամբ կողջունենք և կօրհնենք Ձեզ բոլորդ, հավատացյալ վավակներ Հայոց Սուրբ Եկեղեցւո, որ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

Այսօր մեր Փրկչի, Հիսուսի Քրիստոսի հարության սուրբ կիրակին է: Սուրբ կիրակին՝ մեծ հաղթության:

Այսօր մահը իր վախճանին կհասնի հարության հաղթանակով և կյանքի լույսը, գերեզմանի քարերը ճեղքելով, թօյլք կաանե դեպի երկինք ու կճառագայթե հորիզոնէ հորիզոն, լուսավորելով աշխարհը ամբողջ և հոգիները մարդոց:

Կյանքի մշտանորոգ ուժերը, տիեզերքի անհուն ակունքներն և մարդու ոգեկան աշխարհներն ապառ ու առատ կ'հոսին այսօր, կաճին, կուճանան, ծաղիկ կկայեն, երգեր կհյուսեն հալար ձևերով, հալար գույներով:

Այսօր արդարության արեգակը կբարձրանա մարդկային խղճի հորիզոնին առջև, ապառության դողը կծածանի մեր սրտերն ներս և խաղաղության ծայրը կհնչե աշխարհի բոլոր ճամբաներուն վրա:

Այսօր սերն ու հաճությունը ի մարդիկ, յւրն երկնային պարգև, կիջնեն առատապես ու կբաշխվին մեզի ամենուս, բոլոր մարդերուն, բոլոր ազգերուն, բոլոր սահմաններուն վրա, բոլոր սահմաններն անդին:

Մենք կհավատանք Քրիստոսի հարության, մենք կհավատանք մարդու բարոյական ուժերու հաղթության: Քրիստոնեությունը հաղթանակի կատար մըն է, մարդկային կյանքին մեջ բարոյական կարգի մը հաստատման ճանապարհին վրա: «Ջի որպէս յարեալ Քրիստոս ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս և մեզ ի նորոգումն կենաց շրջեցուց: Ջի եթէ տեկակից եղեաք նմանութեան մահու նորա, այլ և յարութեան նորա լինիցիմք» (Հովմ. Զ 4—5):

Ադամով մահը ժառանգեցինք նյութին մեջ, Քրիստոսով՝ անմահութիւնը, ոգիին մեջ:

Բայց միայն թե ամուր մնանք հավատքի ծայրին վրա և կենդանի պահենք զՀիսուս մեր սրտերուն մեջ: Հիսուս կենդանարար պորութիւնն իսկ է, որ ահա երկու հալար տարիներն ի վեր կապրի ու կապրեցնե, և ամենուս ցույց

կուտա մարդու կյանքի ճամբան, ճշմարիտ մարդու ճշմարիտ ճամբան, մեզի գոչելով. «Ես կենդանի եմ և դուք կենդանի լինելուց եք»:

Մեր կյանքի մեջ իրավ մարդկայինը սկիզբ կառնե նյութին սահմաններեն վեր, այնպես ինչպես Զրիստոսի հարությունը ճառագայթեց գերեզմանի քարերեն դեպի կատարները հավերժության:

— «Այսօր Զատիկ մեր զենմամբ Զրիստոսի, արասցուք տօն ցնծութեամբ, նորոգեալքս ի հնութենէ մեղաց, ասելով՝ Զրիստոս լարեաւ ի մեռելոց»:

Սիրեցյալ զավակներ Մեր, սուրբ հարության ավետիսով կողջունենք և կորհնենք ձեզ բոլորդ, ամենայն հայոց լուսաշող Տաճար Սուրբ Էջմիածնեն, մեր արդար հավատքի աստվածատուր այս սուրբ տեղեն, որ այս աշխարհի վրա ամենահին և ամենավաղերական վկաներեն մեկն է Զրիստոսի հարության: Զի հարուցյալ Փրկիչը, Միածին Որդին Աստուծո, այս քարերուն վրա իջավ, լուսաշող կերպարանքով, և իր իսկ ձեռքով վառեց հայոց կյանքի կանթեղը, Լուսավորչի կանթեղը անմար, որ կտեսնենք ահա, թե ինչպե՞ս լույս կուտա Հայոց աշխարհին, հայոց հոգիներուն, հայոց բոլոր հոգիներուն, Արարատի փեշերեն մինչև ափերը հեռու, հեռու՝ աշխարհներու: Այս կանթեղեն՝ լույս, ավելի լույս ամենուս և ամենուն, առանց խտրության, և մանավանդ Մեր հեռավոր պանդուխտ զավակներուն:

Մեր հավատավոր ժողովուրդի համար, Հայաստանյայց Եկեղեցին կենդանի իրականություն մըն է իր աստվածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, որ ահա ավելի քան հազար և վեց հարյուր տարիներն ի վեր կա ու կմնա հայ քրիստոնեության վեմը այս աշխարհի վրա:

Սուրբ Էջմիածնի ոգեկանությունեն դուրս, և առավել ևս անոր դեմ, չկա ճշմարտապես հայկական քրիստոնեական ոգի, չկա վավերական Հայկական Եկեղեցի:

Փրկչի իջման այս սրբազան Տաճարը, մեր հայրենի ապառաժա հողին վրա, կանգուն ու ապահով, անխորտակելի պատվանդանն է մեր Սուրբ Եկեղեցվո, մշտադուս աղբյուրը մեր լույս հավատքին, մեր հոգևոր կյանքին, անստգուտ գործակալը մեր քրիստոնեության իսկության, անսպառ շտեմարանը հայ ժողովուրդի ոգեկան թաղուն ուժերուն:

Երանի անոնց, որ գիտեն ուղիղ կարգալ և հասկնալ մեր պատմության գիրքը, և գիտեն իրենց կյանքը և իրենց աշխատանքը ամուր կապել Սուրբ Էջմիածնի գոյության և անոր հավերժության հետ:

Ի սփյուռս աշխարհի ցրված հայության կյանքին մեջ շարք մը անհարապատ կացությանց հետ կարելի է գուցե հաշտվիլ: Սակայն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն հոգևոր բաժանումի մը փորձի հետ՝ երբե՛ք: Ով որ Հայ Եկեղեցվո Սրբալույս

Մեռնի դրոշմը իր ճակատին վրա կկրե, չի կրնար բաժնվիլ Սուրբ Էջմիածնեն:

Այս ճշմարտության լույսով է, որ առաջնորդվեցանք և պիտի առաջնորդվինք Մեր գործունեության ճանապարհին՝ Մենք, իբրև Հայոց Հայրապետ: Այս ճշմարտության լույսին տակ է, որ Մենք կտեսնենք մեր եկեղեցական կյանքը ու կդատենք դեպքերը և մարդիկն ու անոնց գործունեությունը, ըլլան անոնք հոգևորականներ թե աշխարհականներ:

Եվ նույն այս ճշմարտության լույսով է, որ անխախտ կպահենք Մեր լավատեսությունը, թե վերջ պիտի գտնե Սփյուռքի մեր եկեղեցական կյանքի վնասարեք տագնապը և պիտի վերականգնի ներքին միությունը մեր եկեղեցվո կամարներուն տակ, և համերաշխ գործակցությունը մեր նվիրապետական պատմական Աթոռներուն միջև, ամեն մեկը իր իրավասությանց սահմաններուն մեջ:

Ու պիտի գա այդ օրը, պիտի գա իբրև հայ քրիստոնեական հավատքի ներքին անհրաժեշտություն, իբրև հրամայական թելադրանք հայ եկեղեցական և ազգային գերագույն շահերու գիտակցության, իբրև պայման Սփյուռքի հայության գոյատևման և ազգապահպանման: Այո՛, պիտի գա այդ օրը, վասնզի Մենք կհավատանք, թե առողջ է և կենսունակ Սփյուռքի մեր ժողովուրդի մարմինն ու հոգին:

Սուրբ Էջմիածնով և Ամենայն Հայոց Հայրապետությամբ գլխավորված Հայաստանյայց Եկեղեցվո հոգևոր միությունը է և կմնա գերագույն կանոնը և հրամայականը մեր եկեղեցական ու ազգային կյանքին:

Հավետ փա՛ռք և պատի՛վ աստվածակառույց Սուրբ Էջմիածնին: Հավետ փա՛ռք հայ հավատավոր ժողովուրդին, որ Սուրբ Էջմիածինը անսասան ու կենդանի պահեց դարեր շարունակ, իբրև Սրբություն Սրբոց, հաճախ իր իսկ մարմնույն նահատակության գնով, արյան ծովերու ընդմեջեն: Փա՛ռք և պատի՛վ նաև այսօր Սուրբ Էջմիածնի հավատարիմ և հարապատ Մեր զավակներուն, որոնք հեռավոր երկնակամարներու տակ, երբեմն լքվարին պայմաններու մեջ, բարձր և սուրբ կպահեն անմահ անունը Միածնա՛յջ այս Սուրբ Տաճարին:

Զեպի ամենուդ, սիրելիներ՝ Մեր, ողջո՛ւյն և օրհնություն կբերենք նաև Արարատյան աշխարհեն, մեր վերածնած Մայր հայրենիքեն: Մենք և դուք բոլորդ քաջ գիտենք, թե մեր նահապարհները, երկար դարեր շարունակ, Զրիստոսի հարության ավետիսը տոնախմբած են անմար հույսովը, թե հարություն պիտի առնե օր մը խաչված ու թաղված ժողովուրդը հայոց, անտեր ու թշվառ երկիրը Հայաստան: Շարան-շարան մեր նախնից արդարության ծարավի իրենց աչքերը այդ հույսով փակեցին: Ու երկար, շատ երկար ու տանջալից տևեց սպասումը հայուն:

Սակայն եկավ այդ օրը, հարության օրը մեր ազգին, վերջապես և ճշմարտապես:

Հայ ժողովուրդ, ահավասիկ օր ուրախության, ահավասիկ օր հաղթության: Ահավասիկ նորեն Ջատիկ է այսօր, նորեն Զրիստոսի հարության տոնն է այսօր և Սուրբ Էջմիածնեն՝ Հայոց Հայրապետը, ձեպի ամենուդ ողջույն և օրհնություն կբաշխե՝ վերաշինված Մայր Հայրենիքեն, խաղաղ ու ապահով, շեն ու ծաղկած Մայր Հայաստանեն:

Այսպես է, որ հայ ժողովուրդը կտոնե այսօր Զրիստոսի հարության կիրակին:

Մենք կաղոթենք, որ Տերը հաստատ և անշարժ պահե նոր կյանքի կոչված Մայր երկիրը մեր և անփորձ ու անվտանգ պահե ժողովուրդը հայոց, որպեսպի ան վերջնապես բուժե իր վերքերը հին, իր վերքերը խոր, որպեսպի ան աստիճան առ աստիճան բարձրանա միշտ դեպի վեր, դեպի նորանոր նվաճումներ մայրենաշեն կյանքի բոլոր բնագավառներուն մեջ, իրեն՝ եղբայրակից ժողովուրդներու մեծ միության դրոշին ներքև:

Կաղոթենք նաև համայն աշխարհի խաղաղության համար, որ մանավանդ մեր օրերուն բոլոր ազգերու կյանքի ապահովության առաջին և գերագույն պայմանն է արդեն: Հանուն մեր քրիստոնեական հավատքին, հանուն մեր Սուրբ Եկեղեցիին, Մենք սրտագին կոչ կուղղենք մեր սուրբ սեղաններու սպասավորներուն և Մեր բոլոր հավատացյալ սպավանդներուն, որ ամենքը աղոթեն ու աշխատին՝ աշխարհի խաղաղության և ժողովուրդներու բարեկամության դատին համար: Խաղաղություն և բարեկամություն և համերաշխ գործակցություն ազգերու և պետություններու միջև:

Պատերազմ երբեք, պատերազմ ոչ մեկ սահմանի վրա, պատերազմ ոչ ոքի դեմ:

Եթե Աստված խաղաղության Աստված է, ինչպես կհավատանք մենք քրիստոնյաներս, ուրեմն խաղաղությամբ լավագույնս փառավորած պիտի ըլլանք վԱստված: Եվ մենք կհավատանք նաև, թե Աստված պորավիզ է բոլոր աշխարհին, որոնք խաղաղության համար կգործեն:

«Երանի խաղաղարարաց, Վի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

Արդ, Սուրբ Զատիկ այս լուսաբացին, երբ ցնծությամբ կփառաբանենք հրաշափառ հարությունը մեր Փրկչին Զրիստոսին, հաղթական հոգիով երգենք միաբերան.

«Խաղաղութեան ձայն հնչեցաւ,

Սուրբ ողջունի հրաժան տուաւ.

Թշնամութիւնն հեռացաւ,

Աերն լընդհանուրս սփռեցաւ»:

Բայց մանավանդ դուք, սիրեցյալ պանդուխտ սպավանդներ Մեր, որ ի Սփյուռս աշխարհի, խա-

ղաղ հոգիով եկեք, մոտեցեք իրարու բոլորդ անխտիր, եկե՛ք, միացե՛ք՝ միասիրտ ու միակամ եկե՛ք մաքուր ձեռքերով, բարի մտածումներով, սուրբ տեսիլքներով և միացյալ ճիգերով ամրապնդեցե՛ք մեր Սուրբ Եկեղեցւոյ ներքին միությունը, և առավել պորացուցե՛ք ու ծաղկեցուցե՛ք պայն: Օտար փնիրու վրա համերաշխ գործակցությամբ և բոլոր կենդանի ուժերու մեկտեղումով, առավել ամուր հիմքերու վրա դրեք ալ՝ զապահպանման նվիրական գործը, և ձեր պալակները մեծցուցե՛ք և դաստիարակեցե՛ք, ընծայաբերելու համար պանոնք հայ ժողովուրդին և Մայր Հայաստանին:

Աղոթեցե՛ք և գործեցե՛ք նաև աշխարհի խաղաղության և ժողովուրդներու բարեկամության համար, որպեսպի մեր ազգն ալ ծաղկի խաղաղ ու ապահով, որպեսպի Աստված՝ արարիչը մեր. օրհնե այս աշխարհը և մարդկությունը համայն: Եվ որովհետև Ջատիկ է այսօր և հարության ավետիսով կուրախանան երկինք և երկիր,

«Այսօր և մեք պուարճացեալք, պայծառասցուք տօնիւս,

Ընդ հաշտութեան Աստուծոյ միմեանց արկցուք զիրկս սիրով Եւ սիաբան գոչեսցուք՝ Զրիստոս յարեաւ ի մեռելոց» (Շարական):

«Եւ որից, սեր և խաղաղութիւն յարուցեալ Փրկչին մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և յաւիտեանս»:

Ամեն:

Նույն օրը, երեկոյան ժամը 11.30-ին, Երևանի ռադիոկայանից՝ ձայնասփռվում է Վեհափառ Հայրապետի զատկական քարոզը.

Հավարտ սուրբ պատարագի, Նորին Ս. Օծուխունը առաջնորդվում է Վեհաբանի հաւարահր, ընդունելու շնորհավորութիւնները. Հանուն Մայր Աթոռի միաբանության և պաշտոնական անձանց, Վեհափառ Հայրապետի Զատկական տոնը շնորհավորում է գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը:

Այնուհետև Նորին Ս. Օծուխունը խոսք առնելով, օրհնում է բոլոր ներկաներին և շնորհավորում բովանդակ հայության Զատիկ տոնը, բարեմաղթութիւններ անելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անասանության, Հայ Եկեղեցու պայծառության, Մայր հայրենիքի և հայ ժողովրդի բարօրության և աշխարհի խաղաղության համար:

Ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը բարձհաճում է զատկական իր սեղանին մասնակից դարձնել Մայր Աթոռի միաբանության, պաշտոնական անձանց և հյուրերի: Խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով փակվում է զատկական ընդունելությունը:



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈԶ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՈՐ Ի ՍՓՅՈՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Արտասահմանի հայ կյանքը բազում տարիներն ի վեր ալեկոծված է վատաժողջ հակամարտություններով և գոյության իմաստն Կուրկ որոշ հարցերով, որոնք երբեմն կհանգին թշնամական արարքներու և նուրիսկ եղբայրասպանության:

Եվ ահա, մինչ Ս. Զատիկի օրերուն, Մենք, Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ կաղոթեինք վասն խաղաղության և միասնության մեր Եկեղեցիին ու մեր ազգին, չարաղետ նոր դեպք մը եկավ ցնցելու Մեր խիղճը, համայն հայության խիղճը:


Դամասկոսի հոգևոր առաջնորդ գերաշնորհ Շավարշ եպիսկոպոս մահափորձի ենթարկվեցավ հայ սարդոց ձեռքով, որ ձանրորեն վիրավորված, այս պահուս կմաքաթի մահվան դեմ:

Ինչպե՞ս է որ հնարավոր կդառնան նման արարքներ և ո՞ր կուպեն հասցնել ոմանք հայ Սփյուռքը այս ընթացքով: Ո՞ր է հայության սիրտը, ո՞ր է հայկական արժանապատվության զգացումը, ո՞ր է հարգանքը դեպի Ս. Եկեղեցին և անոր բարձրաստիճան սպասավորները:

Մենք դառնորեն կողբանք ու կղատապարտենք սույն անպատվաբեր արարքը, որ սև մուր կքսն հայ ժողովուրդի պայծառ ճակատին: Բավական է այլևս: Խնայեցե՛ք հայ ժողովուրդին, խնայեցե՛ք Հայ Եկեղեցիին:

Մենք, խորապես վշտահար, Ս. Էջմիածնեն կոչ կուղղենք Սփյուռքի Մեր բոլոր զավակներուն անխտիր, բոլոր անոնց, որ հայու անունը կկրեն, բոլոր մեր նվիրապետական Աթոռներուն, թեմերուն և եկեղեցական համայնքներուն, բոլոր հայ կապմակերպություններուն ու հայ մամուլին, որպեսզի իրենց խղճի արդար ծայնը լսելի դարձնեն ու հայ կյանքեն ներս այլևս վերջնապես արմատախիլ ըլլան նման բարբարոս կիրքեր, որոնք բնավ երբեք արտահայտությունները չեն հայ ժողովուրդի հոգիին:

Արդեն իսկ խոզվահուլզ այս աշխարհիս վրա, հյուրընկալ ժողովուրդներու ծոցին մեջ, հայ ազգի զավակները պարտին ապրիլ իբրև օրինապահ, խաղաղասեր քաղաքացիներ, համախմբված իրենց կրոնական ու մշակութային հաստատություններու շուրջ՝ առանց աղմուկի,



առանց անկարգություններու, առանց իրենց վրա հրավիրելու ասպնջական երկիրներու դժգոհությունը:

Անցյալ բազում ողբերգություններն ու փորձանքներն հետո. սպասելի է, որ արտասահմանի Մեր ժողովուրդը դառնա ավելի շրջահայաց, ավելի հեռատես, ավելի հավասարակշռված իր ապրումներուն և իր գործունեության մեջ, և թույլ չտա, որ իր ծոցին մեջ կատարվին կուսակցական պայքարի աղետաբեր ծայրահեղ արտահայտություններ:

Խաղաղություն, սեր և միություն ազգիս հայոց, ահա Մեր աղոթքը, ահա Մեր պատգամը: Փրկարար ու շինարար պատգամ՝ որ հին դարերեն մեզի կուգա որպես գերագույն իմաստություն, և որ մեր օրերուն կդառնա առավել այժմեական ու հրաժայական, հեռավոր ավերու վրա ցիրուցան ապրող Մեր պանդուխտ զավակներուն համար:

Այս չէ՝ արդյոք նաև պատգամը մեր բյուրավոր նահատակներուն, որոնք մանավանդ այս

ապրիլյան օրերուն իրենց անհայտ գերեզմաններն կաղոթեն վերածնած հայ ժողովուրդի զավակներուն միասնության ու խաղաղ, համերաշխ կյանքին համար. ի խնդիր մեր Եկեղեցվո ու ազգի գերագույն շահերուն:

Հավատացե՛ք, հարազատներ Մեր, «Եթե սիրեսցուք զմիմեանս՝ Աստուած ի մեզ բնակէ և սեր նորա ի մեզ կատարեալ է» (Ա Յովհ. Դ 12):

Ավելի լույս, ավելի սեր և ավելի խաղաղություն հայոց հոգիներուն, հայոց սրտերուն: Եվ բոլորին, բոլորին անխտիր օրհնություն աստվածային՝ ամենայն հայոց Մայր Աթոռ հավերժական Ս. Էջմիածնեն: Ամեն:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱԹՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

25 ապրիլ 1963

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Ապրիլի 2-ին, հիւնգզաբքի, հոգեշնորհ Տ. Ներսէս վարդապետ Պողոսեան վանքին մեկնեց Մոսկվա, ապրիլի 7-ին, Սաղկազարդի առթիւ, պատարագելու և Բանին կենաց քարոզութեամբ մխիթարելու համար Վատաքլայներին:

Ապրիլի 7-ին, կիրակի, Սաղկազարդի Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգեւոր Ընծարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արքայաւանդի ֆարոգի բնաբանն էր ճիշդմեայ մեզ, Որդի Դաւթի:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 5-ին Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրութեամբ, տեղի ունեցավ Գեորգիեւս-ի հանդիսավոր արարողութիւնը:

Ապրիլի 11-ին, Ավագ հիւնգզաբքի, «Յիշատակ ընթերցեց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսին», Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը:

Ապրիլի 13-ին, Ավագ շաբաթ, «Ժրագայտց Ջատիկ», Երեկոյան ժամերգութեան ընթացքում Հոգեւոր Ընծարանի ուսանողները ընթերցեցին Դանիելի գիրքը: Այնուհետև Մայր Տաճարում Ժրագայտցի հանդիսավոր սուրբ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղադարյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ապրիլի 14-ին, կիրակի, «Ջատիկ, յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսին», Ստեփանավանի Ս. Աստվածածին եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրի-

գոր վարդապետ Ողիայանը, որը Մայր Աթոռից մեկնել էր այնտեղ պատարագելու և Բանին կենաց քարոզութեամբ մխիթարելու համար Վատաքլայներին:

Ապրիլի 15-ին, երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց», Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Ներսէս վարդապետ Պողոսեանը:

Հավարտ սուրբ պատարագի, հոգեհանգրտան պաշտոն կատարվեց Վասն համայն նշեցնելու ազգիս Հայոց:


Ապրիլի 21-ին, «Նոր կիրակի», Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Ողիայանը «Տօնեացի ցնծութեամբ զնաւակատիս հոգեւոր մերոց, նորոգեալ ի հնութենէ մեզաց բնաբանով»:


Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ապրիլի 23-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրութեամբ, Մայր Աթոռի միաբան բարեշնորհ Զոհրապ սարկավագ Շամլյանը, հաջողութեամբ ավարտելով Հոգեւոր Ընծարանի յսարանական բաժինը 1961—1962 ուսումնական տարում, մեկնեց Բեյրութ, շարունակելու իր ուսումը Անգլիայում:

Ապրիլի 27-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ, երեկոյան ժամը 6-ին, Վեհարանում տեղի ունեցավ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նիստը:

Ապրիլի 29-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիւ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը:





ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏԱՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԵՍ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 2-ին, հինգշաբթի օր, ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ 1961—1962 ուսումնական տարվա շրջանավարտներ բարեջնորդ Զոհրապ սարկավազ Շամլյանի և բարեջնորդ Կարպիս սարկավազ Սարալդարյանի դիպլոմային աշխատանքների պաշտպանությունը և վկայականների բաշխման հանդիսությունը:

Ըստ Հոգևոր Ժեմարանի ծրագրի, այն ուսանողները, որոնք հաջողությամբ հանձնում են իրենց ավարտական քննությունները, ներկայացնում են նաև Հոգևոր Ժեմարանի վերատեսչության կողմից հանձնարարված աստվածաբանական, եկեղեցա-պատմական, մատենագիտական որևէ թեմայի շուրջ գրված դիպլոմային աշխատանք, 40—50 մեքենագրված էջերի ծավալով:

1961—1962 թվականի շրջանավարտ սարկավազներից երկուսը ներկայացրել էին իրենց դիպլոմային աշխատանքները:

Զոհրապ սարկավազի նյութն էր «Հայ երաժիշտ վարդապետները Ե—Ժ դար», իսկ Կարպիս սարկավազի թեման էր «Ս. Գրիգոր Նարեկացու մատենագրական վաստակը»:

Վերատեսչի նախագահության տակ կազմված քննիչ հանձնաժողովը, ծանոթանալուց հետո ներկայացված դիպլոմային աշխատանքներին, ապրիլի 2-ին նշանակում է դիպլոմաների հրապարակային պաշտպանություն:

Վերատեսչի գլխավորությամբ քննիչ հանձնաժողովը (գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան, Արթուր Հատիտյան, Պարգև Շահբազյան) վարում է նաև դիպլոմաների կանոնավոր պաշտպանությունը:

Երկու շրջանավարտ սարկավազները փայլուն հաջողությամբ պաշտպանում են իրենց դիպլոմային աշխատանքները, պատասխանելով մի շարք հարցերի:

Վերջում քննիչ հանձնաժողովի դիտողություններն ու գնահատականները հրատարակում է վերատեսուչ սրբազանը, խնդրելով Վեհափառ Հայրապետի օրհնությունները Հոգևոր Ժեմարանի և նոր շրջանավարտների վրա:

Այնուհետև շրջանավարտները աջահամրուրով Վեհափառ Հայրապետից ստանում են իրենց վկայականները, ներկաների բուռն ծափերի ներքո:





Ս Փ Յ ՈՒ Ռ Ք ՈՒ Մ

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ Ի ԽՆԴԻՐ
ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՋ

Ամիսներ առաջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Սփյուռքի բովանդակ հայության ուղղած իր սրբատառ կոնդակով, սրտագին հրավեր կուղղեր Հայաստանյայց եկեղեցւոյ բոլոր հարազատներուն, որ Ս. Հարության Տաճարի նորոգութեան գործին բերեն իրենց ամբողջական մասնակցութիւնը: Ուրախ ենք այս առիթով հոս հայտարարել կարենալու՝ որ նորին Ս. Օծութիւնը ստանձնած է նույնպէս Հյուսիսային Ամերիկայի մեջ արդեն իսկ կազմված Կեդրոնական հանձնախումբի նախագահութիւնը, և իբրև պետ՝ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին ղրկած է առանձին գիր, հրավիրելու համար բոլորը իրենց պարտականութեան, ինչպէս նաև հրահանգելու ամենքը, որ քաղցր հոգարութեամբ կատարեն իրենց բաժին ինկած մասը, ազգային և եկեղեցական այս նվիրական սրբավայրի նորոգութեան ի նպաստ ըլլալիք հանգանակութեան ձեռնարկին մեջ:

Կեդրոնական հանձնաժողովի կազմը կրաղկանա, Ամենայն Հայոց Հայրապետի զխաւորութեամբ, հետեյալ անձնավորութիւններն.

Նորին Ս. Օծութիւն Ս. Ս. Վազգէն Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց,

Ամենապատիւ Ս. Նիդիշ արքեպիսկոպոս Տերտերյան, պատրիարք հայոց Ս. Երուսաղեմի,

Գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան, առաջնորդ Հյուսիսային Ամերիկայի,

Գերաշնորհ Ս. Սերոբբե արքեպիսկոպոս Մանուկյան, կաթողիկոսական պատմիչ-
Եւրոպայի,

Գերաշնորհ Ս. Բաբգեն եպիսկոպոս Ապատյան, կաթողիկոսական պատմիչական Հարավային Ամերիկայի,

Մեծահարգ տիար Հայկ Գալուքճյան,

»	»	Ալեքս Մանուկյան,
»	»	Զարլզ Գարակոյճյան,
»	»	Հովհաննէս Տիարպե- քիւրյան,
»	»	Տատուր Տատուրյան,
»	»	Տիգրան Պոյաճյան,
»	»	Երվանդ Հյուսիսյան,
»	»	Սարգիս Զարդարյան,
»	»	Ջան Քյուրքճյան,
»	»	Ջեկ Շահինյան,
»	»	Ժորժ Ռեզգալլահ,
»	»	Վոլտեր Վարդան,
»	»	Եղվարդ Մարտիկյան
»	»	Հարութիւն Հայրա- պետյան:

Կեդրոնական այս հանձնախումբը հունվար 28-ին գումարած է արդեն առաջին իր նիստը, զրաղելու համար Հյուսիսային Ամերիկայի զանազան հայաշատ կեդրոններուն մեջ կազմվելիք ենթահանձնախումբերով, ինչպէս նաև մտածելու վերոհիշյալ կեդրոններու մեջ ըլլալիք հանգանակութեան կերպերու մասին: Իսկ Հյուսիսային Ամերիկայի մեջ գործող տեղական Կեդրոնական հանձնաժողովը կրաղկանա հետեյալներն.

Տիար Հայկ Գալուքճյան՝ Ա տտնապետ,

» Տատուր Տատուրյան՝ Բ »

» Նշան Շահինյան՝ Ա տտնապետի,

» Տիգրան Պոյաճյան՝ Բ »

» Զարլզ Գարակոյճյան՝ գանձապահ,
Օրիորդ Լեյլա Գարակոյճյան,

Տիկին Զյուրա Սարգսյան,
 » Մարբուհի Հովսեփյան,
 Տիար Ալեքս Մանուկյան,
 » Եղվարդ Մարտիկյան,
 Զորավար Սարգիս Զարդարյան,
 Տիար Հարություն Թադևոսյան,
 » Ռիչարդ Գ. Գրեկորի,
 » Վոլտեր Վարդան,
 » Զորք Պաշյան,
 » Լետ Շահբազյան,
 » Տիգրան Սմաթրյան:

Հանգանակության այս գործին համար, տեղովյն վրա, կեդրոնական հանձնախումբին իրենց ժառանգ մասնակցությունը կրեին Ս. Աթոռույս միաբաններին հոգեշնորհ Տ. Շահնե և Կյուրեղ վարդապետները և Ս. Հարություն մեր ճարտարապետ մեծահարգ տիար Եղվարդ Ութունյանը, որոնք իրենց բանախոսություններով, պատկերներու ցուցադրություններով և զանազան կարգի լուսաբանություններով կատարաստեն ու կհրահանգեն Հյուսիսային Ամերիկայի մեր հասարակությունը, հանգանակության այս ձեռնարկի համազգային բնույթի և կարևորության շուրջ:

Ս. Հարություն Տաճարին ի նպաստ հանգանակության գործը, առաջիմ Հյուսիսային Ամերիկայի մեջ, իր ընդհանուր գիծերով ամփոփելի վերջ, իրավունք ունենալ կկարծենք ըսելու, թե համազգային այս ձեռնարկը ամենուրեք արթնցուցած է մեծ շահագրգռություն, ինչպես նաև պատրաստակամություն, ի գին ամեն բանի հայթայթելու պահանջված գումարը, որպեսզի ամենադուրս շափովն իսկ ընկալի մեր Եկեղեցիին ու ազգին դիրքը, կրոնական ու ցեղային իրավունքներու մրցաբանը հանդիսացող Ս. Երկրին մեջ: Աշխարհի շուրս ծագերուն ցրված Սփյուռքի մեր ժողովուրդը, որուն համար շատ անգամ շոր ու շուկայիկ մտածումներն տարվող միտքերը կխորհին, թե ան իր նյութական ապրուստին հոգը միայն ունի ի նկատի, գիտն մեկ սիրտ և մեկ հոգի դառնալ, ի խնդիր իր մտավոր և հոգեկան արժեքներու պաշտպանության: Վասնզի մեր ժողովուրդը գիտն իր պատմութենեն, ինչպես նաև հանապազօրյա իր ապրումներեն, թե հավատքը, հոգեկան արժեքները, շատ ավելի կարևոր են ժողովուրդի մը գոյության համար, քան նյութական առօրյա մտախոհանքը: Ի վերջո հավիտենական է ճշմարտությունը, թե ռոշ միայն հացի կեցցե մարդը:

Հրաշալի է երևույթը, որ մեկ կողմն օտարներու առջև կհայտնաբերեն մեր տկարություններուն ներքև անտեսանելի դարձած հոգեկան գեղեցկություններ, մյուս կողմն կրնա զմեզ սրտապնդել այն մտածումով, թե

հակառակ ամենուրեք մեր այժմու անմիաբանության, մեր մեջ կան տակավին միության առիթներ և կետեր, որոնց շուրջ կարելի է համախմբվիլ ազգովին, զիրար հասկնալու և անցյալի նվիրականությանց հուշով կազդուրելու ներկայի զգացումը և ապագայի հույսը:

Երկրորդ պարագան, զոր անհրաժեշտորեն կուգենք մատնանշել հոս՝ իբրև բուն գաղտնիքը մարդը Սփյուռքի այս խանդավառության, կրոնական և ազգային արժեքներու և անոնց շուրջ անշփոթ միավորությամբ զգացված այն ոգին է, որ մեր պատմության և ճակատագրին բոլոր ելևէջներուն վրա, մեր տխուր և պայծառ թվականներուն վերև սավառող խորհուրդը եղած է շարունակ: Կրոնական հավատքին զգացումն է, որ թե կուտա դեռ մեր հոգիներուն, նկատի ունեցնք, որ հարցը մեր հավատքի դարավոր կոթողին՝ աշխարհամատուռ Ս. Հարության Տաճարին կվերաբերի, որ ամեն բանն ավելի և վեր մեր կրոնքին ու հոգիին մարտկոցն է, և ոչ թե պարզ շենք մը: Այս է զգացումը Սփյուռքի բովանդակ մեր ժողովուրդին անտարակույս, և անոնց՝ որ լծված են այս գործին, ինքզինքնին մտադուր ենթարկելով անոր պարտադրած մարդկային տաժանքին:

Ըսած ենք ու նորեն կկրկնենք, անցյալին մեզի եկած թանկագին և սրբազան ժառանգություններ են Ս. Տեղյաց մեր իրավունքները, մեր հավատքին անփշրելի անոթները: Կրոնը և անով Հայ Եկեղեցին մեր կյանքին լուսաշավիղն է: Դարերու ընթացքին, հակառակ մեզի պարտադրված դժնակ պայմաններուն, տիեզերական բռնակալության, մեր ցավին հանդեպ եղեռնային անտարբերության, հայ ժողովուրդը, շնորհիվ իր Եկեղեցիին և պապերու ոգիին, պահեց իր ինքնությունը և անդենականի հույսին և հավատքին գեղեցկությունը: Մեր հոգեկան և իմացական արժեքներու գուրգուրանքը ավելի քան երբեք պետք է տևական մտասնեռումը ըլլա մեզի համար, ազով արժեքներու մեր ներքե ցնդելի այն ոգին, որ այսօրվան մեծ և փոքր ժողովուրդները այրող տենդն է:

Դժնդակ օրեր ճամբա են ելած դեպի մեր հավաքական գոյության մերձավոր ապագան: Դեռ նվիրական սրբություններուն ու մեր Եկեղեցիին, մեր լեզվին և ավանդություններուն, աննահանջ, միակետուր, ալլամերժ և վայրագ պաշտամունքը՝ դրոշակն է մեր քաղաքավոր համախմբումին և գոյատևման: Իր հայրենի Աստվածը և անցյալի նվիրականությունները ուրացող մարդը իր հայրերու հիշատակը կոխկրտող սիրտ մըն է:

Երրորդ կետը, որ այս գործի հաջողության մղիչ ու պայծառ զգացումը կհանդերձեն, Ամեն-

նայն Հայոց Հայրապետի անձին ու փափուգին հանդեպ ցույց տրված հարգանքի, սիրուն հնազանդության կեցվածքն է՝ բովանդակվող Սփյուռքի մեջ՝ «Հրաման ի Տեառնէ», երբ միածինն է որ կպատվիրե, Մոր ձայնն է, որ կարձագանքե հոգիներուն խորը, ծեկալք շինհսցուք սուրբ դիտորանն լուսոյ՝ Եվ այդ ձայնը, արևոտ ճամբա մը ինչպես, կերկարի ժամանակներու և միտքերու բոլոր փուլզումներուն մեջն, դեպի մեր ավանդական ու նվիրական զգայնությանց փրկարար ամբողջը, մյուսոնի սրբությանմ կաթկթելով ամեն հայու սիրտին ներս։

Նույնքան քարենշան է անտարակույս համերաշխ ջահագորգության այն երևույթը, զոր մեր ժողովուրդի բոլոր հատվածները ցույց ափին և կուտան, իրենց թերթերուն միջոցով, արտատպելով բոլոր հաղորդագրություններն ու հոգվածները, և լուսարանելով հանրությունը Ս. Հարության Տաճարի Հայոց բաժնի նորոգության շուրջ և անոր կարևորություն մասին, խորապես զգալով և զգացնելով բոլորին, թե այս գործը սրբազան պարտականություն մըն է, կարոտ բովանդակ հայ ժողովուրդին օժանդակության։

Չէինք խաբված մեր զգացումներուն և ակնկալություններուն մեջ, երբ Ս. Հարության Տաճարի նորոգության մեծագումար ծախքի մասին գրելով, կհայտնեինք, թե Սրբոց Հակոբյանց Միաբանության ուսերուն դրված այս ծանր բայց սրբազան պարտականությունը միայն մերը չէ, այլ բովանդակ հայ ժողովուրդին, և վստահ էինք, որ մեր ազգային հաստատությունները, կրոնազգած և ազգանվեր ունենորները, և առհասարակ բովանդակ հայությունը միահամուռ, թույլ պիտի չտային, որ Հայ Եկեղեցիով նվիրապետության մեջ այնքան կարևոր այս Աթոռին կապված, սակայն բովանդակ ազգին պատկանող, Ս. Տեղյաց մեր իրավունքները մնային անպաշտպան և անվճար, և պիտի ընեին իրենց առավելագույնը, լավագույնս հոգալու Ս. Հարու-

թյան Տաճարի Հայոց բաժնի նորոգությանց ծախքը և ապահովելու մեր իրավունքները։

Այժմ ուրախ ենք հայտարարելու, որ Ս. Հարության Տաճարի վերանորոգման համար ձեռնարկված հանգանակության գործը իր հաջող և արդյունավոր ընթացքին մեջ է, Հյուսիսային Ամերիկայի մեր պատվական հասարակության ջանքերուն շնորհիվ՝ «Սիոնա»-ի օգոստոս—սեպտեմբեր միացյալ թիվի խմբագրականին մեջ ուրախությամբ և երախտագիտությամբ անգորադարձած էինք արդեն Գալուստ Կյուպենկյան հիմնարկության բերած իշխանական մասնակցությանը, որ Ս. Հարության Տաճարի հայկական բաժնի նորոգության կհատկացներ 100 000 անգլիական ոսկիի գումար մը, մեկ երրորդը Երուսաղեմի հայ Պատրիարքարանին բաժին ինչպես ծախքին, հիշյալ Տաճարի վերանորոգությանը մեջ։ Բնավ չենք տարակուսիր, թե Սփյուռքի մեր մյուս կեդրոններուն մեջ ևս, երբ հանուն Երուսաղեմի՝ բայց մանավանդ Ս. Հարության Տաճարի նորոգության դիմվի մեր բարեկրոն և իր սրբություններուն նկատմամբ պաշտամունք ունեցող հարազատներուն, անոնք պիտի գիտնան բանալ իրենց սիրտները, նյութական այս նվիրաբերման մեջ, վճարելու համար հոգեւորքը իրենց կրոնի այս աշխարհամատուռ կոթողին, որ մայրն է քրիստոնեական բոլոր եկեղեցիներուն։

Լավ սկզբնավորություն մը, ինչպես կրսե առածը, լավագույն վերջավորության մը հավաստիքն է։ Աղոթենք ի սրտե, որ եկեղեցական և ազգային այս ձեռնարկը, շնորհիվ մեր ժողովուրդի ամենածանոթ նվիրաբերման, հաջողությամբ պսակվի, և ասիկա նախ ի փառս Աստուծո և ապա ի պարծանս և ի վայելումն մեր հոգեռանդ և եկեղեցանվեր ժողովուրդին։

(Խմբագրական Երուսաղեմի ճայաց Պատրիարքության պաշտօնաբեր «Սիոն» ամսագրի 1963 թվականի փետրվարի համարի)։





ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

6. «ԱԼՔԸ ՋԵՄԱԱԹ» ԵՎ «ՕՒՏԸ ՕԴԱԼԱՐ»

Այսպես կազմվեցավ Պոլսո հայ կորիզը, և այսպես սկսան հայերը հետզհետե համախմբվիլ եկեղեցիներու շուրջ, կամ ավելի ճիշտ՝ իրենց համախմբված վայրերուն մեջ ազոթատեղիներ սկսան ճարել իրենց, և որովհետև արտոնված չէին իրենց սեփական եկեղեցիները կառուցանելու, օտար եկեղեցիներ ապահովել, թուրք իշխանութիւնը իսկ հոգարութիւնը:

Օրմանայան կրսե, թե Պոլսո առումեն յոթը-ութը տարի հետո հետզհետե բերված կամ եկած գաղթականութիւնները հայաբնակութիւն լավ բազմութիւն մը կազմած էին, և Յաթիհ զանազան հետզհետե կզետեղեր քաղաքին պարիսպներուն ներքեւ կարեւոր դռներուն մոտերը, թե՛ Մարմարայի ծովեզերքին, թե՛ ցամաքակողմի գիծին և թե՛ Ոսկեղջյուրի եզերքներուն ուղղութիւնով, որոնք ռազմագիտութիւն և ապահովութիւն տեսակետեն մեծ կարևորութիւն ունեին, և ուր հարմար չէր նկատվեր պահել հուլն տարրը¹⁰⁰:

Ըստ Հրանտ Ասատուրի, Յաթիհ հրամանով Գարամանեն բերված հայերուն իբր բնակավայր Սամաթիան հատկացվեցավ, ուր անոնք բնակեցան Ղաադրիւ մենաստանին

առջև գտնվող անտառի մը մեջ, վրաններու տակ և հետո է, որ եկեղեցվո շուրջը քիչ-քիչ տուներ շինեցին¹⁰⁰, Անոնք սկիզբը ապրած են այնպիսի վատթար պայմաններու մեջ, որ քիչ հետո ժանտախտի մեծ համաճարակի մը զոհ գացած են անոնցմէ շատերը¹⁰¹:

Հայաթիայեն ու Սամաթիայեն հետո, ուր հայեր կորիզ կազմած էին եկեղեցիներու շուրջ, Պալաթն է, որ հայեր համախմբեց իր ժողը, էդիրնեքափուի Ս. Նիկողոս եկեղեցվո շրջանակները:

Յաթիհի շրջանին Պոլսո մեջ գտնված հայ թաղերը ճշտելու առթիվ մեզ օգնութիւն կհասնին Յաթիհի կողմէ շինել տրված մըզկիթներուն՝ «վաքըֆնամե»-ները: Յաթիհի կողմէ մզկիթի վերածված Այա-Սոֆիայի «վաքֆիյե»-ն չէ հասած մեզի: Փոխարեն, Պոլսո դիվանատուններուն մեջ երեսն հանվեցան էյուր-Սուլթան և Յաթիհ մզկիթներուն «վաքֆիյե»-ները: Այս վերջին մզկիթին «վաքֆիյե»-ները, զորս հրատարակեցին Քահսին Օզ 1935-ին և Օսման էրզին 1945-ին, իհրեն վեց հայ թաղեր՝ էրմենի Բազմենո մահալլեսի, էրմենի էթմեքճի Անդրեա մահալլեսի, էրմենի Հաջիգեր մահալլեսի, էրմենի Եադիրեյ մահալլեսի, էրմենի Յենավեյ մահալլեսի և էրմենիյան մահալլեսի:

* Ետբնակված «էջմիածին» ամառգրի 1902 թվականի ՊՊ Բ-ից, ԺԲ-ից և 1903 թվականի ՊՊ Ա-ից, Բ-ից և Գ-ից:

¹⁰⁰ «Ազգապատմ», Բ, էջ 2154:

¹⁰⁰ 2. Ասատուր, «Ընդարձակ օրացույց», 1901, էջ 81—82:

¹⁰¹ Գ. Չեառեւ, «Բազմավեպ», 1928, էջ 210:

Արձանագրելով թաղերու այս անունները, որոնցմե ոմանք իսկապես անվերածանելի կմնան, Գրիգոր Ապառքյան հետևյալ դիտողությունները կկցեք. «Այստեղ հիշված անունները նորություններ են մեզի համար և այդ պատճառով կարելի չեղավ առայժմ ճշտել այդ անուններուն պատմության հետ ունեցած աղբյուրը, թե այս հայերը—որոնցմե մին իսլամական անուն կկրե—ուրկե՝ և ի՞նչ առիթով եկան իսթանպուլ և ի՞նչ պատճառներ գոյություն ունեին անոնց անուններով մկրտելու բաղադրին մեջ հայոց հատկացված առաջին թաղերը, Ֆաթիհի «վազֆիյե»-ի օրինակներուն մեջ միայն ասոնք են, որ կհիշվին իբրև հայոց թաղեր, բայց մենք կենթադրենք, թե կային նաև այսօրինակ ուրիշ թաղեր ալ, որոնք աղբյուր չունենալով Ֆաթիհի կտակած կալվածներուն հետ, շին հիշված «վազֆիյե»-ին մեջ, նույնպես ուղարկավ պարագա մըն է այդ թաղերն միույն «էրմենիյան» մահալլե-սի» (Հայոց թաղ) անունը կրելը, մինչ մյուսները կկրեն հայ անհատներու անունները, Դժբախտաբար կարելի չեղավ որոշել անոնց քաղաքին որ մասերուն մեջ գտնվիլը»¹⁸²:

Ավելցնենք մենք ալ մեր կարգին, թե պետք չէ դարձանալ իսլամական անուններ գտնելով հայոց մեջ: Ղրիմի հայերը հաճախ կրած են նման անուններ, ինչպես որ շարունակած են կրել Ղրիմեն գալով Գալիցիա և Մոլդովա հաստատված հայ գերդաստաններն շատերը: Մեր պրպտումներու ընթացքին Մոլդովայի, մինչև անգամ Տրանսիլվանիո մեջ հաճախ հանդիպած ենք ոչ միայն թաթարական ծագում ունեցող աղզանուններու (Ասլան, Չոմաք, Չուլաք, Թոսուն, Լաթիֆ, Խոնդեթար, Խուդավերդի, Ալթուն, Աղբեյ, Հուլուբեյ, Ուլուբեյ, Յուբեյ, Էդիբեյ, Օզբեյ, Խուլթուբեյ, Ղարիբ և այլն), այլև ըլլա արաբական ըլլա կանացի մկրտության անուններ ալ, որոնք նույնպես թաթարական են (Ամիրա, Թամուր, Խուխարար, Դոմլաթ, Մելիթ, Մուրադ, Սինան, Ազիզ, Աղաջան, Խաթուն, Խանում, Յադութ, Չմուրթ, Թուֆան, Արմա և այլն): Եվ ինչ որ ավելի բնորոշ է, Շատիրեյ անունը, որուն կանխարկն հաճախաբար հոգվածագիրը, անունն է ծանոթ հայ գերդաստանի մը, որ նույնպես Ղրիմեն կանրի և հասած է մինչև մեր օրերուն: Ֆաթիհի «վազֆիյե»-ին մեջ հիշված «էրմենի Շատիրեյ մահալլե»-ն կրնա այսպես կոչված ըլլալ 1475-ին Ղրիմեն բերված հայու մը անունով: Կրնա նաև ալ Պոլիս եղած ըլլալ ավելի կանուխ և ըլլալ այն հայ երեսնին, որուն նվիրելու համար էր, որ Ամիրդովլաթ Ամասիացին հորինեց իր «Ռուսումն բժշկութեան» անուն երկը 1459-ին, թի

վայելումն պարոն Շատիրայէկին, որդոյն պարոն Կարգին»:

Ճարտարապետ Ալի Սաիմ Ուլզեն ժն և ԺԶ դարերու հատուկ Ֆաթիհի «վազֆիյե»-ներուն մեջ Ղալաթի կողմը հիշատակված կգտնե կարգ մը թաղեր, առանց կարենալ ճշտելու անոնց ներկա վայրը: Այդ թաղերուն մեջ են էրմենի «քմեքի» Անդրեա մահալլեսի, էրմենի «աղմինուր» մահալլեսի և էրմենիյան մահալլեսի¹⁸³:

Արդ, սույն երեք թաղերը կերևան Ֆաթիհի մզկիթին «վազըֆ»-ներուն մեջ ևս, «Պաղմի-նուր»-ը «Պաղմենու» ձևով, ինչ որ ցույց կուտա, թե հիշյալ մզկիթին կապված «վազըֆ»-ներուն մեջ Ղալաթի երեք հայ թաղերն ալ կային:

Ժամանակի ընթացքին հայերը ցրվեցան Պոլսո զանազան թաղերուն մեջ, բայց իշխանությունաց աչքին սկզբնական Ալթընմաթն (զոց հասարակություն) էր հայության կորիզը, և տնոնք չին, որ հայ համայնքը կենդանացնեին պաշտոնապես: Այդ վեց հասարակությանց գլխավորներն էին, զորս պետությունը կանանչար իբրև հայոց գլուխ, և անոնց հաճությամբն էր, որ կընտրվեր նոր պատերազմը: Այնպես որ Ալթընմաթ բառը նվիրագործված մնաց Պոլսո հայ համայնքը հատկանշելու համար և զայն գործածված կգտնենք անցյալ դարու սովորական ֆերմաններուն մեջ իսկ:

Ֆաթիհեն երկու դար հետո Էվլիյա Չելեբին, ակնարկելով Պոլիսը բնակչությամբ օժտելու համար նույն սովթանին թափած ջանքերուն, կթվե Ռումելիի և Անադոլիի այն քաղաքները, ուրկն բնակչություն բերվեցավ Պոլիս և թաղերը, ուր զետեղվեցան անոնք, Էվլիյան շատ ալ վստահելի աղբյուր մը չէ, երբ մանավանդ կխոսի երկու դար առաջվան վրա: Այսուհանդերձ շահեկանութենն զուրկ չէ հիշել, թե Եվլիյային ու Սեբաստիային եկած հայերը կգետնեին Սուլումանաստերի մեջ, իսկ առանց ազգություն հիշելու, բրուսացիները կգետնեին Էյուր, քարամասցիները՝ Բյուլուք Բարաման, կոնիացիները՝ Բյուլուք Բարաման թաղերուն մեջ և այլն¹⁸⁴:

Ալթըն-ջեմաթի կողքին ժամանակի ընթացքին նվիրագործում պիտի ստանար նաև ուրիշ բառ մը՝ Օխտը օդալար, միշտ հատկանշելու համար թաղերը, ուր զետեղված էին հայերը Պոլսո մեջ: Օդալարը նույնինքն խումբն էր բնակարաններուն, ուր կապրեին հայերը տվյալ թաղին մեջ, և յոթն էին սկիզբը: Ու թեև անոնց թիվը շատցավ հետագա-

¹⁸³ Mimar Ali Saim Olgen, „Faith devrinde Istanbul (1453—1481), Ankara, 1939, p. 41.

¹⁸⁴ Էվլիյա Չելեբի, «Սելահաթնամե», Ա, էջ 128.

¹⁸² Գ. Ապառքյան, «Շողակաթ», Պոլիս, 1954, էջ 70.

ին, բայց բառը՝ Օխտը ողալար, մնաց ժողովրդադական գործածության մեջ:

2. Ղուկաս ինձիճյան հետևյալ կերպով մեզ կպատկերացնեն Օխտը ողալարը:

«1. Կուրա կիւմրիւք օտալարի ի մաքսանոցի մերձ յետքէն՝ զափուսիին»:

2. Մալլա օտալարի ի Մալլա շարշուսին մերձ ի սուլտան Մեհմէմէտ»:

3. Վարշէնային օտալարի մերձ ի ֆէթհիէ ճամխին»:

4. Թէֆիէ օտալարի ի տեղուր որ կուի Քիւշիս Մուստաֆա փաշա, ի ներքին կողմն Այա գափուսիին»:

5. Քէօմիւրնի օտալարի ի գափուգ պաղարին ի փողոցի դարբնոց որ է մօտ ի Վէզիր խան և ի Օսմանիէն»:

6. Ի ներքա կոյս Ախոռ Գափուիին»:

7. Ոմանք յաւելուն և զծօթներորդն որ ի Դոփխանէն, յանցանել ընդ խէնտէկն ի ճանապարհին որ ելանէ ի Տէօրթ հօլ աղզի Պէյօղլուին»:

Այժմ ամենայն օտալարք են ի մէջ քնակութեանց տաճկաց որ է ցոյց ի վաղուց անտի քնակելոյ նոյն հայոց լայն տեղիս: Այլ այժմ փոխանակ նոցին՝ վեց ժողովրդեամբ իմանան զժողովուրդս ի թեմի 6 եկեղեցեաց հայոց յորոց 3 են ի քաղաքին, և 3 յարուարձանայս»¹⁶⁵:

Ինչպես ըսինք, հայ ռազարա-ներուն թիւը աճեցաւ հետզհետեւ: Այսպիսով կըսեն, թէ Ղալաթիո և Բերայի մեջ 1500—1800 շրջանին հայերը քնակած են 12 ռազարա-ներու մեջ, որոնցմէն մեկուն անունը Սարգիս է: Մյուս 11-ին անուններն էին Զեքեհի, Տափուտ, Նրանոս, Մեստէի, Բաստրմաճի, Փեշկիրճի, Թեք-խույուդու, Տիպեք, Քերան, Զախմախ, Կուրճուս, Կարնիլի՝ է ենթադրել արդոյք, կըսեն Այսպիսով, թէ Սարգիս ռազարա-ը կապ մը ունի անհետ կորսված (Ղալաթիո) Ս. Սարգիս եկեղեցւոյն հետ¹⁶⁶:

Խոսելով հայոց ռազարա-ներուն մասին, ուրիշ հայ բանասեր մը կըրն. «Պատմութենէն գիտենք, թէ հետ գրավման քերված գաղթականները զետեղվեցան հույներն պարպված շենքերու կամ պիտական և անհատական ձեռնարկներով յինված օղալարներու մեջ: Թե՛ն շատոնց կորսված են այդ օղալարներուն հետքերը և ճշտիվ չենք գիտեր, թէ ինչ տեսակ շինվածներ էին անոնք, սակայն այս մասին գոյություն ունեցող ավանդութենէն դատելով կրնանք ըսել, թէ խնդուկրակ խրճիթ-

ներու շարքեր էին անոնք, շինված սուղ ժամանակի մեջ. ժողովուրդը քացօղյա շճելու գիտավորությամբ և նման՝ այսօրվան գիշերաբույս տուններուն»¹⁶⁷:

Գրիգոր Ապաճյան թուրք աղբյուրներն քաղելով, երեսունի մօտ ուրիշ օղալարներ ևս կ'իշխե Պոլսո գանազան թաղերուն մեջ, ընդունելով հանդերձ, որ բանոցմէն ոմանց մեջ դուռներ, հրեաներ, հույներ, սերբեր, ալիսաններ կրնակեն, և որ բայց օղալարներուն մեկ մասը շինված է հետ գրավման, իսկ մյուսներն ալ հետզհետեւ հաստատված՝ երբոր նոր-նոր գաղթականական ալիքներ եկած են հաստատվելու Իսթանպուլ»¹⁶⁸:

Այսուհանդերձ իր հիշած այդ օղալարներուն մեջ հհանդիպինք էրմենի օղալարի մը Թոփքափուի հայոց եկեղեցւոյ քով, և ուրիշի մը էլուրի կողմը, Իսլամբյ թաղին մեջ: Մնացյալներին ոմանց մեջ ալ հայեր կրնան քնակած ըլլալ՝ նկատի ունենալով անոնց հարկանութիւնը հայ եկեղեցիներու:

Կարելի չէ ճշտել հայկական ռազարա-ներուն ճշգրիտ սահմանը, որովհետեւ արդարեւ հայկական թաղեր միշտ շմանցին անոնք: Ռազարա-ներուն շատեր ցրվեցան տարրեր թաղեր, ու երբեմնի հայ ռազարա-ներուն մեջ հետզհետեւ թուրքեր եկան բնակիլ: Բայց ռազարա կոչումը մնաց. զայն իրենց հետք տարին հայերը, երբ տեղափոխվեցան ուրիշ թաղեր. բառը սկսավ հատկանշել այլևս Պոլսո բնիկ հայը համախումբ քնակած իր թաղերուն մեջ:

«Օղալարքի»: Այս բառը կապերն և մեր օրերուն, Կոչական մըն էր ան, որով կորակեին գոհճիկ դասը:

Մեր օրերուն ռազարաքի էին, օրինակ, Բերայի ծայրամասի ժողովրդական Թաղերու հայերը, գոլարդերեցին, ենիշեհիբցին ու գոնավուպցին, կամ անոնք, որ վաղեմի Պոլսո ժողովրդական ինչ-ինչ թաղերը կրնակեին դեռ, ինչպես սալամթամրութեան և էդիր-ներափուցին:

Կենթադրվի, թէ նույնիսկ Պոլսո առումին ատեն հայեր գոյություն ունեցած են Ղալաթիային ավելի վեր, Բերայի մեջ ևս, սակայն պատմական ոչ մեկ փաստ կարելի է գտնել այս մասին: Միայն սա ստույգ է, որ ժՁ դարուն, երբ սկսեցին իրենց քնակությունը Ղալաթիային կփոխադրել Բերա և հոն կհիմնեն եկեղեցիներ և դեսպանատուներ, հայերն ալ, դեսպանատուներու մեջ ծառայող խոհարար, դռնպան, սպասավոր և այլն, քնակութիւն կհաստատեն Բերայի մեջ: Այդ ժամանակէն հետո հետզհետեւ կշատնար թի-

¹⁶⁵ 2. Ղուկաս ինձիճյան, «Այսպիսով գործիւն շորից մասանց աշխարհիս, Ե, Վենետիկ, 1804, էջ 115—116»:

¹⁶⁶ Ս. Այսպիսով, «Պալաթի թաղի կազմութեանը», «Երեւոյան պատմութիւն Պալաթի Ս. Զեքեղեցւոյն անուանումով», Կ. Պոլս, 1881, էջ 161—162»:

¹⁶⁷ Գ. Ապաճյան, «Շոգակաթ», 1854, էջ 71»:

¹⁶⁸ Անդ, էջ 72»:

վել հայերուն, քաղկացած ընդհանրապես գա-
վառացիներն, որոնք կգործեն իր շրկիր,
պահապան, դոնապան, մշակ, դարբին, բո-
նակիր և այլն և կբնակին գլխավորաբար
ողալաւ կոչված տնականներու և խաներու մեջ.
կայաթա սիրային սկսյալ մինչև Գոնավուլա-
յի կողմերը: «Այսօր Թալքքազարի այն փո-
ղոցը, որ կրացվի Ս. Երրորդութիւնն եկեղեց-
վո դեմ, և կվերջանա անգլիական դեսպանա-
տան դռան առջև, կկոչվի Դուլաւ օղալաւ, որ
անշուշտ նույն ժամանակներն մնացած ա-
նուն մըն է, իսկ Գոնավուլա Դիվրիկի հու-
նավիլ գլուղի անունով մկրտված թաղ մըն է,
ուր ըստ հայերէն խոսենք 169:

«Պոլսո հայեւթաւար»-ը առավելապես կապ-
ընդ հայ նոր ժողովար»-ներուն մեջ և Պոլսո
տեղական բարբառը զննելու համար մարդ
ստիպված է հետևիլ անոնց խոսակցական
լեզվին մնացած հետքերուն:

Թվական տվյալներ չունինք հայոց համ-
ընթերցան մասին Յաթիհի օրով: Հարեանցի
հիշված է միայն, որ Կաթայն բերված գաղ-
թականները, որոնց մեջ զգալի էր հայոց թի-
վը, տասնյակ հազարներու կհասնէին

Դ. ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹՈՒՆԸ

Պոլսո հայ գաղութի պատմութեան հետ
կապված կարևոր խնդիրներն մեկն ալ Պոլ-
սո հայ Պատրիարքութեան հիմնարկութեան
հարցն է, դեպք, որ կոչված էր ճակատագրա-
կան դեր կատարելու ոչ միայն Պոլսո հայ գա-
ղութին դարավոր կյանքին, այլև բովանդակ
հայ ժողովուրդի նորագույն պատմութեան
մեջ, որովհետև Պոլսո հայոց Պատրիարքու-
թիւնը նաև ազգային կեդրոն պիտի հանդի-
սանար բովանդակ Արևմտյան Հայաստանի
հայութեան համար:

Դժբախտաբար այդ Աթոռին հիմնարկու-
թեան պարագաները լրիվ ծանոթ չեն մեզի,
որովհետև, ինչպես կըսեն Օրմանյան, «Կոս-
տանդնուպոլսո հայաբնակութիւնը կամ լավ
ևս օսմանյան հպատակ հայութիւնը, յուր
հատուկ պատմագիրը չէ ունեցած, որ որոշա-
կի ցուցներ մեզի անոր առաջին ժամանակնե-
րուն հանգամանքները, և ստիպված ենք
կցկտուր ակնարկներով կազմել անոր նախ-
նական պատմութիւնը, մինչև որ հասնինք
այն ժամանակներուն, ուր գլխավոր դիրք և
կարեւորութիւն ստացավ ընդհանուր հայու-
թեան հանդեպ»¹⁷⁰:

Արդարև, Պոլսո Պատրիարքութեան ծագ-
ման պարագաներուն շուրջ քանի մը ճշգրիտ

տվյալներ որսալու համար ստիպված ենք
ապավինիլ ձեռագրաց հիշատակարաններուն,
և սակայն անոնք ալ շփոթութեան կառաչեցոր-
դեն մեզ հաճախ: Դուլզն են մանավանդ և
շփոթ մեր գիտցածները հայոց գրաված դիր-
քին մասին մայրաքաղաքին մեջ, անոնց ու-
նեցած կապերուն մասին պետական շրջա-
նակներուն հետ, արքունիքին հետ կապ ունե-
ցող այլ դեմքերուն մասին պատրիարքու-
թեան հիմնարկութեան օրերուն, ինչպես որ
հարեանցի են մեր ունեցած տեղեկութիւննե-
րը հայոց պաշտոնական դիրքին մասին Յա-
թիհի Պոլիս մտած պահուն:

Ինչպես որ Գրիգոր Ժ Զալարեգլանց կա-
թողիկոսի օրով (1443—1465) տեղի ունեցած
անցքերուն վրա խոսելու ժամանակ, Օրման-
յան ստիպված է ընդհանուր բառերով գոհա-
նալ, երբ կարգը կուգա Պոլսո Պատրիարքու-
թեան հաստատման, շնորոթիւններ են, զօրս
հետզհետե պատմութիւնը մեր առջև կհա-
նէ այդ միջոցին, — կըսեն, — և անոնցմէ մեկն
ալ Կոստանդնուպոլսո մեջ նոր և մեծ Աթոռի
մը սկզբնավորութիւնն է, Պատրիարքութեան
անունով: Կոստանդնուպոլսո մեջ հայաբնա-
կութեան մը գոյութիւնը պատմութեանն ա-
կներն է, սակայն հնագույն ժամանակներու
թեմակալ իշխանութիւնը տեղական և եզա-
կան ըլլալով, միևնույն քաղաքի մեջ մեկն
ավելի թեմակալ եպիսկոպոս չէր ըլլար, և
բոլոր վիճակի մը մեջ գտնվողներ միևնույն
եպիսկոպոսին կհնազանդէին, և նույն եկեղե-
ցինն հոգեւոր միաբնակութիւն կընդունէին:
Հետեւեալս հայերն ալ Կոստանդնուպոլսո
մեջ իրենց հատուկ եկեղեցական դիրք մը չու-
նէին, թեպետև քաղաքական դիրքին տիրա-
պետելու շափ թիվ և ազդեցութիւն ունէին,
բանակին մեջ մեծ ուժ կկազմէին, կայսերա-
կան թիկնապահ գունդին լավ մասն էին, բազ-
մաթիվ և քաջ զորավարներ ունէին, պալա-
տական պաշտոնյաներու շարքին կգտնվէին,
և կայսերական զահն ալ գրավելու կհաշո-
ղէին: Հունական Հայաստանի բնակիչներն ու
Պարսկական Հայաստանն փախստական-
ներն էին, որ այդ տարրները կկազմէին Որ-
շափ ալ Քաղկեդոնի խնդիրը՝ խտրի մը կզնեթ
հույներուն և հայերուն մեջ, սակայն հայերը
կամ այն էր, որ ստիպյալ կհամակերպէին, և
կամ անհատաբար իրենց ինքնութիւնը կպա-
հեին, բայց Հայ եկեղեցի և հայ թեմակալու-
թիւն չկար, ոչ Կոստանդնուպոլիս և ոչ կայս-
րութեան ուրիշ կողմերը, Մեծ Հայքին և Փոքր
Հայքին զատ՝ ուր բնիկները հայերն էին¹⁷¹:

Օրմանյան, այլուր, Պոլսո մեջ հայ Պատ-
րիարքութեան մը հիմնարկութեան մտածումը
Յաթիհի կողմէ կկապէ հույն տարրին կող-

¹⁶⁹ Գևորգ Խոհեպետկոպոս Արշակունե, «Հայ կիճ»,
1932, հունվար 1:

¹⁷⁰ «Ազգագաղափար», Թ, էջ 2188:

¹⁷¹ Անդ, էջ 2148—2149:

քին ուժեղ հայ համայնք մը ևս ստեղծելու անոր նպատակին հետ, որովհետև, կրտսեր, ռաշխարհակալ թագավորը հուլներուն կատաղութունը ճշտելն ետքը, մտածեց անոնց դիմացը ուրիշ քրիստոնեական տարր մըն ալ կազմակերպել, տարր մը, որ ավելի կասկած էր իրեն տերութիւն շահերուն: Բազմաթիւ հայ գաղթականութիւն մը փոխադրեց Կոստանդնուպոլիս քաղաքը, և դայն զետեղեց քաղաքին շուրջանակի թաղերուն մէջ, պարիսպներուն ներքեւ և գլխավոր գոտերուն մօտ: Միկենուլն առիթով, իրրեւ առաւել վրստահութիւն միջողը, հուլները հավաքեցան քաղաքին մեջտեղը, աշտարակներն և ամրութիւններն հեռու¹⁷²:

Հայերը իր վստահութիւն առարկան դարձնելն հետո այսպես, Յաթիհ լէր կրնար տատամսիլ անոնց համար ուրույն Պատրիարքութիւն մը հաստատելու իր մտածման մէջ:

Դժբախտաբար ժամանակակից հայ աղբյուրներ կպակսին մեզի մանրամասնութիւններ գիտնալու համար: Չկան նաև օտար աղբյուրներ: Հետագա պատմիչները խաղիվ թե դեպքը կարճանագրեն ու կանցնին: Անոնք կըսեն պարզապէս, թե Վոլոստ գրաւութեն հետո Մեհմեդ Բ հայոց պատրիարքին ևս տվաւ այն միկենուլն իրավասութիւնները, զորս տված էր օրթոդոքս պատրիարքին¹⁷³:

Հիշելով հայ աղբյուրներու վկայութիւնը, թե Յաթիհ 1461-ին Բրուսային Պոլիս փոխադրեց Նովակիմ հայ եպիսկոպոսը և զայն պատրիարք կարգեց կայսրութիւնն բոլոր հայերուն, Բարիսպեր կըսեն, որ թեթեւ այս դեպքը տեղի չունեցաւ սուլթանին առաջին անգամ Բրուսային անցած ատեն, երբ ան իր բանակով Արեւելեան Անադոլու կուղղվեր, պետք եղաւ, որ ան կատարվի Տրապիզոնի իր արշավանքն դառնալուն: Կարելի է ենթադրել, թե նոր պատրիարքին պարտականութիւններն ու իրավունքները հարկման էին անոնց, որոնք ճշտվեցան իր հուլն պաշտոնակցին համար¹⁷⁴:

Դժբախտաբար մեզի չեն հասած սուլթանական ֆերմանները, որոնցով Յաթիհ հուլն և հայ պատրիարքարանները օժտեց զանազան առանձնաշնորհումներով: Անոնք երևան չեկան ոչ հուլն և ոչ ալ հայ պատրիարքարաններուն մէջ և ոչ ալ թուրք պետութիւնն արխիվներուն մէջ գտնվեցան անոնց պատճենները: Հաճախակի հրդեհները, որոնց թատր եղաւ Պոլիսը, այնքան կարեւոր փաստաթղթերու հետ մոխրացուցած պետք է ըլլան զա-

նոնք ալ: Ինչ որ գիտենք առանձնաշնորհումներուն մասին, զորս սուլթանը շնորհեց երկու ազգերուն, պատրիարքարաններու հաստատման հետ մեկտեղ, անոնց դարավոր կիրարկութիւնն է Յաթիհ օրերն սկսելու մինչև 1923 թվականի լոզանի դաշնագիրը:

Այդ կետը կշեշտե օրմանյան ալ, երբ կրտսեր թեթեւ պետական և թեթեւ պատրիարքական դիվաններուն հրդեհները շատ կարևոր գիրքեր ոչնչացուցած են, և այսօր չի գտնվիր սկզբնական արտոնագիրը, որով Մեհմեդ Յաթիհ վճռեց պատրիարքական իշխանութիւնն ձեռնհասութիւնները: Միայն իրարմե փոխանցվելով կազմված վերջին պաշտոնագիրերը, և գործածութեամբ պահված սովորութիւնները կգտնեն այն ձևը, որ նախապէս 1453-ին կազմվեցաւ պատրիարքական իշխանութիւն համար¹⁷⁵:

Միայն հրդեհները չեն սակայն, որ չբացուցած են անցյալին մեզ մնացած այդ թանկագին նյութերը. անոնք զոհ գացած են Պալեոհիտագային կարգ մը անխիղճներուն ձեռքով կատարված կողոպտումներուն¹⁷⁶:

Օրմանյան կկարծե, թե հայոց պատրիարքներուն տրված առանձնաշնորհումներուն պետք չէ ունեցած ըլլան Հունաց Պատրիարքարանի տրվածն, որ հավանաբար թիրքե սկզբնատիպ ծառայեց հայերուն ալ տրված կամ օրինադրված ձեռքին¹⁷⁷:

Յաթիհ մտքն պիտի չանցներ սակայն հայ Պատրիարքութիւն մը հիմնել իր նոր մայրաքաղաքին մէջ, եթե հայ եկեղեցական կազմակերպութիւն մը արդեն գոյութիւն ունեցած ըլլար հնու: Եթե ատեն մը կենթադրվի միայն նման կազմակերպութիւն մը գոյութիւնը, հիմա արդեն բոլոր փաստերը կան զայն ապացուցանելու:

Օրմանյան, ակնարկելով նիկողայոս եպիսկոպոսին, կգրե. Վէյդ միջոցին տակավին որոշ և զատված վիճակներ չէին կազմված օսմանյան կայսերութիւնն զավառներուն մէջ, և Կոստանդնուպոլիս նստող պատրիարքներ, ընդհանուր թեմակալ կնկատվին բոլոր կայսերութիւնն մէջ, և եպիսկոպոսներ և վարդապետներ, որոնք աստեանդ վանքերու կամ քաղաքներու մէջ կմնային, իրրեւ պատրիարքին փոխանորդներ կնկատվին, և ոչ իրրեւ կական թեմակալներ:

Մեր տեսութեամբ այդ դրութիւնն հետեւեալ պետք է նկատել մուրախիսա կոչումը, որով այսօր ալ օսմանյան կառավարութիւնը կճանչնա հայ թեմակալ առաջնորդները, մինչ քառին իմաստը պարզապէս պատմիրան կամ

¹⁷² Օրմանյան, «Հայոց եկեղեցի», 1911, էջ 102:

¹⁷³ A. de Jongquière, «Histoire de l'Empire Ottoman», Paris 1881, p. 57.

¹⁷⁴ I. Babinger, «Manuel II le Conquérant», Paris, 1954, p. 238.

¹⁷⁵ «Ազգապատմ», Բ, էջ 2153:

¹⁷⁶ Գ. Աղաբեյլի, «Շուրապաթ», 1953, էջ 256:

¹⁷⁷ «Ազգապատմ», Բ, էջ 2154:

պատգամավոր կ'ընչեմ, և յի տար սեփական պաշտոն կամ իրավասություն վարող թեմականի գաղափարը»¹⁷⁸։

Օրմանյան ինք ևս շփոթության մեջ է։ Ան որեւէ մեկին ալիւի պետք է գիտնար, թե թրքերին պաշտոնագրերու մեջ մուրախխաս բառը երբեք գործածված չէ հայոց առաջնորդներուն համար. այս բառը, որ արաբերեն րեբխիս բային կուգա և տարտոնյալն, քարձակյալն, լիազորյալն կնշանակե, պաշտոնական գրությանց մեջ կիրարկված է «պատվիրակ»-ի կամ «լիազոր ներկայացուցիչ»-ի կամասով միայն, և այն ալ դիվանագիտական հարաբերությանց մեջ առավելապես։ Գալատի հայ առաջնորդությանց համար թրքերին մերխասսա բառը միայն գործածած են, թեև րառարանները մեզ շփոթության մատենեն հաճախ, T. X. Bianchi և J. D. Kieffer, օրինակ, այդ բառը քննվ լուսին իրենց բառարանին մեջ (Փարիզ, 1850)։

Միակը օտար բառարաններին, որ ճշգրիտ քաղաքականություն կուտա, C. Barbier de Meynard-ի թուրքերին—ֆրանսերեն բառգիրքն է, որ մերխասսա բառին դիմաց կնշանակե. «պատվիրակ հայոց հոգևոր պետին. եպիսկոպոս, քահանա և երբեմն աշխարհայտն. որ կվարե թեմ մը իրեն պատվիրակը պատրիարքին»։

Բայց ի՞նչ հարկ բառարաններուն դիմելու, երբ բառը ունինք պաշտոնական գործածությանց մեջ։ Ամենահին «քերական», որ մեզ հասած է և որով սովորան Մուսթաֆա Գ Պաս-մաճյան Գրիգոր պատրիարքի ընտրությունը կվավերացնե 1764 հունիս 3-ին, գալատի հայ առաջնորդները կանվանե մերխասսա բառով, ինչպես մերխասսալը բառը կգործածե հայ առաջնորդական թեմերու համար¹⁷⁹։ Նույն բառերը հավանաբար կիրարկված են անկե առջի պատրիարքներու բերաթներուն մեջ ալ, ինչպես որ գործածված են ալիւի հետո։ Նույն բառերը կգտնենք, օրինակ, Ստեփանոս պատրիարքին տրված բերաթին մեջ 1831 հոկտեմբեր 4/16-ին¹⁸⁰։

Մեր օրերուն, մերխասսան իշխանությանց կողմն գալատի հայոց առաջնորդներուն տրված տիտղոսն էր։

8. ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿԸ

Պոյսո առաջին հայ պատրիարքն եղավ Հովակիմ եպիսկոպոսը։ Անոր պատրիարք անվանման պարագաները, ինչպես ռսինք, լրիվ

ծանոթ չեն մեզի։ Առաջին անգամ Չամչյանն է, որ քանի մը տեղեկություններ կուտա այդ մասին, հայտնեցով, որ Հովակիմ նախապես առաջնորդ էր Բրուսայի, ուր ճանչած էր զայն Յաթիհը և նույնիսկ խոստացած անոր հայերու զուլա կարգել Պոյսո մեջ, եթե հաջողեր հույներին խել իրենց մայրաքաղաքը։

Ահա Չամչյանի համապատասխան հատվածը. «1453. Սոյն այս սուլտան Մէհմեդ յառաջմէնէ մինչդեռ ի Պրուսա էր, գութ ունէր ի վերայ ազգին հայոց, և ի վերայ առաջնորդի տեղւոյն՝ որ կոչիւր Յովակիմ եպիսկոպոս։ Եւ յաւուր միում ի խօսիլ նորա ընդ նմա, և յասել ցնա առաջնորդին, բարձրացուցէ Տէր զթագաւորութիւն քոյ քան զամենայն, խոստացաւ նմա սուլտանն, և ասէ. եթէ յաջողեսցի ինձ առնուլ նաև զԿոստանդնուպոլիս՝ տարայց զքեզ անդր հանդերձ մեծամեծօք հայոց և արարից զքեզ զուլա նոցա։ Ապա իբրև էառ զայն, և հաստատեաց անդ զթագաւորութիւն իւր, յետ ամաց ինչ յորժամ զէպ եղև նմա գնալ ի Պրուսա, լիշեալ զխոստումն զոր արարեալն էր, երբ անտի ի Կոստանդնուպոլիս զՅովակիմ եպիսկոպոս հանդերձ քանի մի երևելի տամբք հայոց (զոր ոմանք վեց տուն ասեն). ի թուին Հայոց ԶԺ. և ետ նոցա տեղի քնակութեան՝ ոմանց ի ներքս ի քաղաքն, և ոմանց ի Ղալաթիա, ուր արդէն կային բազում հայք. երբ և ի Գաղատիոյ զշորս տունս հայոց, Եւ զՅովակիմ եպիսկոպոս արքունի նամակաւ կացուցեալ առաջնորդ կոչեաց զնա փաթրիկ, այսինքն պատրիարք. տունալ նմա իշխանութիւն տիրելոյ ի վերայ հայոց եղելոց ի Յունաստան և յԱնատոլիա։ Եւ անտի սկսեալ տեղեցար յաջողութիւն այն պատրիարքութեան ի Ղոստանդնուպոլիս»¹⁸¹։

Այս տեղեկությունը Չամչյանն զատ ոչ մեկ հայ կամ օտար աղբյուր կարծանագրե սակայն, և կասկածի տակ ձգողներ կան հետևարար անոր վավերականությունը¹⁸²։

Ինչ որ կկենտոտե սակայն հարցը, այն պարզան է, թե քանի մը Հովակիմներ կցցեն մեր դեմը հիշատակարաններ և դժվարության առջև կդնեն մեզ, անոնց մեջն զատելու համար Պոյսո պատրիարքը։

Բերիայի կամ Բերայի եպիսկոպոս Հովակիմի մը հանդիպեցանք, ինչպես հայտնի է, այն պատվիրակության մեջ, զոր Կոստանդին Զ վահկացի կաթողիկոսը կազմած էր 1483-ին Փյոտրետիայի ժողովին մասնակցելու համար։ Հովակիմ եպիսկոպոս մը հիշված է 1439-են

¹⁷⁸ «Ազգապատում», Բ, էջ 2187։

¹⁷⁹ Ավետիս Պետրոյան, «Պատմություն Հայոց», 4, Պոլիս, էջ 227—233։

¹⁸⁰ Անդ, էջ 222—227։

¹⁸¹ Հ. Մ. Չամչյան, «Պատմություն Հայոց», Գ, էջ 500։

¹⁸² Ա. Ալկոյունյան, «Բրուսայի շրջանի հայերը», «Էջմիածին», 1959, էջ 40։

սկսյալ իրր ռարհեպիսկոպոս Կոստանդնուպոլսի, ուրիշ Հովակիմ մը 1445-ին Կուտի-նա-Ռուսա շրջանին մեջ և լորրորդ մը 1469-ին իր Ֆիլիպիի եպիսկոպոս:

Արդ, մինչև այսօր ալ բանասիրութեան հա-մար շտապարանված կմնա, թե այս բոլոր Հո-վակիմները նո՞ւյնն են այն Հովակիմին հետ, որ Կոստանդնուպոլսո պատրիարքը ընտրվե-ցավ 1461-ին, կամ թե այդ զանազան Հովա-կիմ եպիսկոպոսներն ո՞րն էր, որ Պոլսո անդրանիկ պատրիարքն եղավ:

Արդարև, Փլորենտիայի ժողովին վավերա-գրերուն համաձայն, Կոստանդին Ե կաթողի-կոսը 1438 հուլիս 15 թվականով Թեոդոսիո-հայոց ուղղած իր գրութեան մեջ կըսեր, թե Տես իմով լի և կատարեալ ճոխութեամբ ետու-իշխանութիւն Սարգսի վարդապետի, որ և եղիցի փոխանակ անձին իմոյ, ընդ նմին և Մարկոսի և Թովմայի վարդապետաց և Յո-վակիմայ եպիսկոպոսի Ռեւիայի, զի երթիցեն ի ժողովն և լուսատու լիցի նոցա Հոգին Սուրբ¹⁸³:

Սույն Հովակիմին համար ուրիշ տեղեկու-թյուն չունինք: Ինչպես տեսանք նախընթաց գլուխի մը մեջ, հավանական էր, որ Ռեւայի հայոց եպիսկոպոսն էր ան և ոչ Ռեւիայի, և իր այդ հանգամանքին համար էր, որ կաթո-ղիկոսը զայն դրավ Կաֆայի պատմիրակու-թյան մեջ:

Հովակիմը, որ իբրև «Կոստանդնուպոլսո արքեպիսկոպոս» կհիշվի 1439-ին, մեզ ծա-նոթ է, ինչպես տեսանք նախընթաց գլուխի մը մեջ, ձեռնադրութեանց գրքն մը, որ այդ թվականին ընդօրինակված է իրեն համար¹⁸⁴:

Հաջորդ Հովակիմը կգտնենք Քյոթահիա պահված արձանագրութեան մը մեջ, ուր կըս-վի, թե գրված է 1445 թվականին, զի հայրա-պետութեան Տեառն Կարապետին և յպիսկո-պոսութեան Տեառն Ուլակիմայ¹⁸⁵:

Ռուսայի մեջ Հովակիմ եպիսկոպոս մը հի-շողը Զամչյանն է միայն¹⁸⁶ և ուրիշ աղբյուրն այդ մասին որեւէ տեղեկություն կպակսի մե-զի, թե և անհավանական չէ, որ Քյոթահիո առաջնորդը իսկապես գտնված ըլլա այնտեղ Պոլսո գրավման օրերուն:

Հովակիմ մը վերջին անգամ հիշատակված կգտնենք Ֆիլիպիի մեջ 1466—1469 թվական-ներուն, Ամիրզովյաթի «Յօգուտ բժշկութեան» աշխատութեան հիշատակարանին մեջ¹⁸⁷:

Օրմանյան տրամագիր է զանազան այս Հո-վակիմները բերել զետեղել Պալոս պատրիար-քին անձին մեջ, նույն անձը համարելով նախ Կուտինայի, Ռուսայի և Ֆիլիպիի մեջ հիշա-տակված Հովակիմները և զանոնք Պոլսո անվանվող Հովակիմին հետ նույնացնելով, որովհետև, կըսեն, «այդ հիշատակարաններն դժվար չէ հետեցնել, թե Հովակիմը՝ օսմա-նյան պետութեան ներքե գտնվող հայերու առաջնորդն էր, համապատասխանելով օս-մանյան սուլթաններուն տեղափոխութեանց, որ ինչպես գիտենք, սկսան Սյոյուսլու Կու-տինայի մոտերը, անկե անցան Ռուսա, ան-կե Անդրիանուպոլսի, անկե Կոստանդնուպո-լիս, և Հովակիմ եպիսկոպոս ալ նույն պարու-նակութեանց մեջ տեղափոխութեաններ կա-տարեց»¹⁸⁸:

Թերևս առարկություն չվերցնեն միևնույն Հովակիմին սույն տեղափոխությունները, բայց անհեթեթ է զանոնք կապել օսմանյան գահուն տեղափոխութեանց հետ, որոնք մե-կուկես դարու շրջան մը կընդգրկեն:

Օրմանյան հետո կավելցեն, թե ճանունի նույնությունը միտք կզգե Հովակիմ եպիսկո-պոսը, որ 1438-ին Կաֆայի Հոռմ գացող պատմիրակութեան մեջ կգտնվի:

Օրմանյան, հիշելի հետո Ֆաթիհի և Հովա-կիմի միջև Ռուսային իսկ ծանոթություն մը գոյութիւն ունենալու պարագան, կիսոստո-վանի սակայն, թե չի կրնար վավերական աղ-բյուրներով ճշտել այդ կետերը և դիտել կու-տա, թե ամեն պարագայի մեջ Հովակիմի ստացածը նոր պաշտոն մը չէր, թե ան ար-դեն Արևելյան Փոքր Ասիո և Հարավային նվ-րոպայի օսմանյան զավառներուն առաջնորդն էր, և ինչ որ Ֆաթիհն կստանար, պատրիար-քի տիտղոսն էր միայն և իր իրավասութեանց նվիրագործումը¹⁸⁹:

Բարգեն եպիսկոպոս նույն կարծիքն չէ, և ընդհակառակը, դիտել կուտա, թե «Սրբա-գրութեան և ուղղութեան կարոտ ուրիշ կետ մըն ալ Օրմանյանի այն ձգտումն է, որով ճա-նի մը ժամանակակից Հովակիմները կուզեն նույնացնել Կոստանդնուպոլսի առաջին պատրիարք Հովակիմի հետ, պարզապես տարվելով անուններու նույնութենեն, առանց պատմական հիմքի և թվիքի»¹⁹⁰:

¹⁸³ Հ. Աղեքսանդր Պելլեյտե. «Հատուկութիւն կաթողի-կէ վարդապետութեան ի Հայաստ, էջ 88:

¹⁸⁴ Բարդեմ եպիսկոպոս. «Հանդես ամսօրյա», 1924, էջ 432—441:

¹⁸⁵ Այս արձանագրութեան պատենքը, զոր վաճարմ եպիսկոպոս Անկուռի օրհոմ է Քյոթահիո Ս. Աստվա-ծածին եկեղեցիո Տաւթայեկն, ներկայիս պահված է Փարիզի Պաղատ Նուպար Ստանիսլաւսկիին մէջ (Ա. Ալ-պոլեյտեյ. «Պոլսո Պատրիարքութեան ծագումը», «Հո-յաստանի կայնակ», 1938, փետրվար, էջ 34:

¹⁸⁶ Հ. Մ. Զովյան. «Հատուկութիւն Հայաստ, 9, էջ 500:

¹⁸⁷ «Հանդես ամսօրյա», 1899, էջ 108—112:

¹⁸⁸ «Աղագրապատմութեան», Բ, էջ 2155:

¹⁸⁹ Անդ, էջ 2156:

¹⁹⁰ Բարդեմ եպիսկոպոս. «Հատուկութեան ծագումը», «Հանդես ամսօրյա», 1924, էջ 439—440:

Այնուհանդերձ Բարգան Եպիսկոպոս ինքն ալ տրամադիր է Բրուսայի Հովակիմը Պոլսո պատրիարք ընտելու. «Հովակիմ արքեպիսկոպոս նախապես առաջնորդն էր Բրուսայի և այդ աթիվ ծանոթացած Ֆաթիհին և շահած անոր համակրանքը. և հետո՝ Բրուսայի առաջնորդութենէն կոչված է Կոստանդնուպոլսի առաջնորդութեան, և այդ պաշտօնի վրա կգտնվեր 1430-ին (ուղղե՝ 1438-ին), այսինքն Կոստանդնուպոլսի առումէն տասնընիւց տարի ճառաջ. այնպես որ, երբ Ֆաթիհ առաւ զԿոստանդնուպոլիս 1453-ին, իրեն ծանոթ Բրուսացի Հովակիմ Եպիսկոպոսը արդեն Կոստանդնուպոլսի առաջնորդն էր 15 տարինեւր ի վեր, և Կոստանդնուպոլսո գրաւումէն ուրբ տարի ետքը Ֆաթիհ կատարեց իր խոստումը, պատրիարք կարգելով զայն Կոստանդնուպոլսի և շրջակայից հայոց վրա, և այս վճարակալական կարգադրութեամբ Կոստանդնուպոլսի հայոց առաջնորդութեանը վերածվեցաւ Կոստանդնուպոլսի հայ պատրիարքութեան. Թերևս կարենա ենթադրվիլ նաև, թէ Հովակիմ Կոստանդնուպոլսի առաջնորդութենէն կոչված ըլլա Բրուսայի առաջնորդութեան, և Բրուսային փոխադրված Կոստանդնուպոլսի՝ իբրև պատրիարք, Այսպիսի ենթադրութեան մը թեև անհավանական չէ. բայց մեզի ամբիլ բնական կ'ըլլի Բրուսայի առաջնորդութենէն Կոստանդնուպոլսի առաջնորդութեան և ապա՝ Կոստանդնուպոլսի պատրիարքութեան հառաջդիմական ընթացքը»¹⁰¹.

Բարգան Եպիսկոպոս տրամադիր է նույնպես Բրուսայի միենույն Հովակիմ Եպիսկոպոսը նկատելու Քյուլթահիո եկեղեցին նորոգող հոգևորականը. «Բրուսայի առաջնորդ կամ Եպիսկոպոս Հովակիմ, ըստ ամենայն հավանութեան, միենույն անձն է Կոստինայի եկեղեցին նորոգող Հովակիմի հետ. որովհետև Կոստինայ այն ատեններ կրնար մեկ թիմն եղած ըլլալ Բրուսայի առաջնորդական վիճակին, և ոչ թէ առանձին վիճակ մը, անկախ Բրուսայէն, ինչպես որ էր վերջին ժամանակներու մեջ»¹⁰².

Ալպոյաճյան կկարծե իր կարգին, թէ Հովակիմ, ինչպես Կոստանդնուպոլսո գրաւումէն առաջ, նույնպես նաև անկե վերջ, պատրիարքական տիտղոս ստանալի հետո, իր հոգեոր իրավասութեան շրջանակին մեջ ունեւր բոլոր օսմանյան տիրապետութեան եռկիւնները, Բրուսան, Քյուլթահիան, Էդիրնեն, Ֆիլիպին, որոնք մինչև այդ թվականները չէին ունեցած իրենց եկեղեցական վարչութիւնը կամ շատ նշանակելի թվով հայեր շուեննա-

լով կամ հունական մոլեռանդութեան պատճառով թուլատրված լըլլալով:

Ալպոյաճյան իբրև ապացույց մեջ կբերե Ամիրդովլաթի բժշկարանին հիշատակարանը, որ Պոլսո Ազգային մատենադարանը կգտնվի և որ կհիշե, թէ Ամիրդովլաթ իր երկն սկսաւ թի Ֆիլիպայ, ի թուականութեանս Հայոց ԶԺԾ (=1466). Թարգմանեցաւ պատուական բժշկարանս ի թուականիս Հայոց ԶԺԸ (=1469) ամիս դեկտ. ԻԶ. ի կաթողիկոսութեան Տէր Ըդրստակիսի և յԵպիսկոպոսութեան Տէր Յովակիմի...»:

Ասիկա բացորոշապես կհաստատե թե,— կըսե Ալպոյաճյան,— Ֆիլիպ 1466-էն առաջ Կ. Պոլսո Պատրիարքութեան իրավասութեան ներքե էր, ինչ որ Ֆիլիպի համար ճշմարտութեան մըն էր՝ Ադրիանուպոլսո համար ավելի ևս, վասնզի աշխարհագրապես վերջինը առաջինէն ավելի մոտ էր Կ. Պոլսո¹⁰³.

Զույգ հայ Եպիսկոպոսներու, Գրիգորի և Մարտիրոսի ներկայութեանը Պոլսո մեջ առաջին Հովակիմի հիշատակութենէն երկու տասնյակ տարիներ հետո, մեզ կ'ընեն հետեցեալու, թէ 1438-ին Պոլսո մեջ հիշատակված Հովակիմը նույնը չէր կրնար ըլլալ հետագային հիշված Հովակիմներուն հետ, բայց հավանաբար նույն անձն էին Բրուսայի և Կոստինայի Հովակիմներն ու Պոլսո առաջին պատրիարքը, և անշուշտ այս վերջինն էր նաև այն Հովակիմը, որ 1466—1469-ին Ֆիլիպի մեջ պիտի հիշատակվեր Ամիրդովլաթի կողմէ:

Ավելցնենք, որ Հովակիմ Պատրիարքը իր պաշտօնին վրա էր մինչև 1478: Այդ տարին է, որ նիկողայոս Եպիսկոպոս մը կհիշատակվի իբրև անոր հաջորդ, որովհետև Մատթեոս և Արքահամ վարդապետները, զորս Ֆաթիհ Պոլիս էր կանչած Սեբաստիայէն՝ Հովակիմի հաջորդ կարգելու համար, մերժած էին ստանձնել պատրիարքական պաշտօնը, զլաւ համարելով զմիայնակեցութիւն, քան թէ փառք առնուլ ի մարդկանէս¹⁰⁴.

9. ԱՂՈԹԱՏԵՂԻՆԵՐ ՀԱՏԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Հայ և օտար աղբյուրները համաձայն չեն հիշատակելու աթիվ աղոթատեղիները. դորս Պոլսո մեջ ունեին հայերը Ֆաթիհի օրով Համաձայն չեն նախ թիվին մասին հայոց ունեցած եկեղեցիներուն, Հետո շատերը իրարու հետ կշփոթեն եկեղեցիները, կամ թէ տարբեր թաղերու մեջ կգտնեին զանոնք:

Ահմեդ ԻնՖիթթ թուրք պատմագետը, Պոլսո առումէն հետո հայոց տրամադրված եկեղե-

¹⁰¹ Բարգան Եպիսկոպոս. իշխած աշխատութեանը, էջ 439.

¹⁰² Անդ, էջ 440.

¹⁰³ Եկեղեցի տարեցույցը, 1909, էջ 210.

¹⁰⁴ Դոկտ. Վ. Թրոլլովմեյն, «Հանդես ամսօրյա», 1886, էջ 247.

ցիններուն մասին խոսելով, կգրեն. «Ստամբուլի մեջ Ս. Նիկողոս եկեղեցին մասնավորաբար հայերուն և լատիններուն տրվեցավ: Եկեղեցիին երկու երրորդը հայերուն, մեկ երրորդն ալ լատիններուն կպատկաներ: Այս եկեղեցիին վերև գտնված Ս. Աստվածածին եկեղեցին ալ միայն լատիններուն թողվեցավ: Սակայն Մուրադ Դ-ի ժամանակ, 1635-ին, հայերուն և լատիններուն եկեղեցիները գրավվեցան Ռեյնե փաշայի կողմից: Հայերուն ցույց տրվեցավ Պալաթի Այա-Խսթրաթի եկեղեցին: Ս. Նիկողոս եկեղեցին ալ մզկիթի վերածվելով Քեֆեյի-չամի անունը առավ: Քեֆեյն եկող հայերուն քնակած թաղը Քեֆեյի-մահալեյի կոչվեցավ: Ս. Աստվածածին եկեղեցին ալ Օղալար մեսյիդի եղավ:»

Թուրք ուրիշ հեղինակ մը, ճարտարապետ Ալի Սաիմ Ուլզեն, Ֆաթիհի շրջանի Պոլիսը նկարագրող իր մենագրության մեջ կըսեն, թե պատմական քարտեզին վրա ցույց կտրվի հայ եկեղեցի մը, որ նախկին Մխիթարի Աստվածածնա եկեղեցին է (Eglise de N. D. la Consolatrice), ուրիշ հայ եկեղեցի մը, որ նախկին Ս. Համբարձման եկեղեցին է (Eglise de l'Ascension), և երրորդ մը, որ ցույց տրված է Սուլումանաստրի եկեղեցի անունով, որ Պերևեպտոսի նախկին վանքն է (Monastère de Sainte Marie de Périvlepte): Սույն երեք եկեղեցիներն ալ նախապես բյուզանդական եկեղեցիներ եղած են, կըսեն թուրք հեղինակը¹⁹⁵:

Գերման արևելագետ Ֆրանց Բաբինգեր Ֆաթիհի նվիրած իր հատորին մեջ, խոսելով Կաֆայեն Պոլիս բերված գերիններուն մասին, կգրեն. «Երբ գերիններով և անսահման ավարով բռնավորված նավերը Պոլիս հասան 1475 օգոստոսի 3-ին, պետք եղավ, որ հրաժարին զանոնք ցամաք հանելն ահռելի ժանտախտին պատճառով, որ ղեռ կտիրեր մայրաքաղաքին մեջ: Խեղճերը, իտալացի և հայ, նախ և առաջ Սկյուտար առաջնորդվեցան. հետո, երբ համաճարակը իր ավերները դադարեցուց, անոնք քնակության տեղ հատկացուցին Ադրիանուպոլսո ղռան (Էդիրեն փափուսը) և Ոսկեղջյուրի միջև Ս. Կույսի (Օղալար ջամի) և Մանվելի վանքին (Քեֆեյի ջամի) բյուզանդական եկեղեցիները հանձնվեցան նոր ժամանողներուն»¹⁹⁶:

Յորգա կգրե¹⁹⁷, թե «Ստուդիոնի վանքը թաղը եղավ հայերուն, որոնք երբեմն հա-

րուստ գոհարավանան»¹⁹⁸, տարեկան 1 000 դուկատ վարձք կուտային սուլթանին¹⁹⁹. Ս. Գևորգի մեծ եկեղեցին, ամենն զեղեցիկը Ս. Սոփիային հետո, մնաց անոնց²⁰⁰. Իրենց նպակուպուր թափոններու ատեն Տիեզերական Պատրիարքեն անմիջապես հետո կուկար, և իսլամ իշխանի մը թլփատման հանգսին ան կրնար ներկայանալ ութսունվեց քահանաներով և երկու հարյուր քառասուն հետևորդներով²⁰¹:

Ուրիշներ Սուլումանաստրի հայոց եկեղեցին միայն կհիշեն: Թուրքիո նվիրած հատորի մը մեջ հեղինակները, խոսելով վեհանձն կեցվածքին մասին, զոր ցույց էր տվեր Ֆաթիհ քրիստոնյաներուն հանդեպ, կըսեն, թե «Ան պարտայաներուն կրոնական պաշտամունքի ազատություն շնորհեց, և անոնց տվավ բոլոր եկեղեցիները, որոնք կգտնվեին Սուլումանաստրի հայոց եկեղեցին մինչև Էդիրեն քափուս»²⁰²:

Նույնքան հակիրճ է նաև Ժոնքիեռ. «Սուլթանական ֆերման մը ցանուցիր եղած հույներուն հրամայեց Կ. Պոլիս դառնալ, և դավանանքի ազատ կիրարկություն և ինքներու պահպանություն խոստացավ անոնց: Հույները պահեցին իրենց եկեղեցիները, որոնք կգտնվեին Սուլումանաստրի հայոց եկեղեցին մինչև Ադրիանուպոլսո դուռը (Էդիրեն քափուս)»²⁰³:

Օրմանյան, ընդհակառակը, վեց եկեղեցիներ կենթադրե. «Այլը ընմաթ կամ Վեց հասարակություն անունը, որով կոչված են Կոստանդնուպոլսո հայերը առաջին հրովարտակներու մեջ, զոնե վեց սկզբնական եկեղեցիներու գոյությունը կպահանջեն, զի նույնիսկ տաճկական ըմբռնումի մեջ, ամեն հասարակություն կամ ժողովուրդ կամ թաղ լուր աղոթատեղիներով կստանար լուր ուրույն կազմության հիմք»²⁰⁴:

Ի ձեռին ունեցած մեր տվյալները մեզ այն եզրակացություն կըրեն, թե հայերը Ֆաթիհի օրով չորս աղոթատեղիներ միայն ունեցած են Պոլսո մեջ: Ասոնցմե առաջինը Ղալաթիո Ս. Գրիգոր Լուսավորիչն էր, Կառուց-

¹⁹⁸ S. Von Gherlach. „Tagebuch“, p. 141, 349.

¹⁹⁹ Crusins, „Germano-Graecia“, Bâle, 1585, p. 227—228.

²⁰⁰ Գեովորգի, հիշված աշխատությունը, էջ 184—185, 186, 201—204, 327—339.

²⁰¹ Crusins, „Turco-Graecia“, Bâle, 1584, p. 235.

²⁰² J. M. Jouannin et Jules Van Gaver, „Turquie“, Paris, 1840, p. 76.

²⁰³ Ա. զր Ժոնքիեռ, հիշված աշխատությունը, էջ 173.

²⁰⁴ «Ազգապատմություն», Բ, էջ 2186.

¹⁹⁵ Միմար Ալի Սաիմ Ուլզեն, հիշված աշխատությունը, էջ 28.

¹⁹⁶ Ֆրանց Բաբինգեր, հիշված աշխատությունը, էջ 419.

¹⁹⁷ N. Yorga. „Byzance après Byzance“, Bucarest, 1935, p. 48.

ված 1391-ին և վերանորոգված 1436-ին, ան դոյություն ունեցող Պոլսո գրավման ատեն 1453-ին Քյուզանդիոնի հանդիպակաց ափին վրա:

Ղալաթիո Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին իր երկրորդ վերաշինությունն հետո դիմացած է մոտ երեք դար, 1436-ն Մինչև 1733, երբ, 1731-ի մեծ հրդեհին հետո, պիտի կառուցվեր Կոլոտ Հովհաննես պատրիարքի ջանքերով:

Հայ կաթոլիկ բանասերները պնդած են ուղի՞ն կայնդեն, թե ի սկզբան հայ կաթոլիկներուն էր Ղալաթիո Ս. Լուսավորիչը: Անոնց գլխավոր փաստն այն է, ինչպես տեսանք, թե ջննդական թաղի մը մեջ, որպիսին էր Ղալաթիան, հայոց եկեղեցին կաթոլիկ միայն կրնար ըլլալ, և Կաֆայի հայերը, որոնք կառուցին այդ եկեղեցին, անտարակուսելիորեն կաթոլիկ էին:

Եթե ջննդացիներու օրով Ղալաթիո մեջ բնակող հայերը իսկապես կաթոլիկ եղած ըլլային, ինչպես նաև եթե կաթոլիկ եղած ըլլային Կաֆային 1475-ին բերված հայերը, այս վերջինները պիտի երթային գետեղվիլ իրենց դավանակիցներուն մոտ: Մինչդեռ, ինչպես ցույց կուտա վերջերս հայտնված կալվածահամար մը, Կաֆային եկած ոչ մեկ կալվածատեր չի հիշվիր Ղալաթիո մեջ 1478-ին, մինչ Կաֆային եկող 267 կալվածատեր ցույց կուտա վավերաթուղթը բուն Պոլսո կողմը²⁰⁵:

Պոլսո գրավումն հետո Ղալաթիո Ս. Լուսավորիչը միակ եկեղեցին էր, զոր հայերը կառուցած էին իրենք: Ջայն ունեին նախապես և տէր մնացին անոր Ֆաթիհի գային հետո: Ֆաթիհ թույլ լսվավ, որ քրիստոնյա որեւէ նոր եկեղեցի կառուցվի իր մայրաքաղաքին մեջ: Մեծ շնորհ էր իր կողմն, եթե հույներուն թողուց անոնց նախապես ունեցած եկեղեցիներուն մեկ մասը: Իսկ հայերուն կրոնական պահանջներուն գոհացում տալու ուրիշ ելք չգտավ, բայց եթե քանի մը եկեղեցի գրավել հույներեն և դանոնք տրամադրել հայերուն:

Երկրորդ աղոթատեղին, զոր հայերը ունեցան Ֆաթիհի օրով, Սամաթիո Ս. Գևորգ եկեղեցին է: Ցարդ մեր ունեցած տվյալներուն համաձայն, ան հունական եկեղեցի մը եղած է ի սկզբան, և հետո հայոց տրված թուրք սուլթաններուն կողմն:

Անոր առաջին անգամ կապնարկե Երեմիա Չելեպի Քյոմյուրեճյան իր «Ստամբուլյա պատմություն» երկասիրություն մեջ, զոր հորինած է 1661—1684 տարիներուն: Իր գոր-

ծին առաջին գլուխին 50—60-րդ տողերը կավանդեն արդարև:

«Երկրորդ իսկելէ և դուռն՝ որ ի Սամաթիայ է կոյման, Ուր շատ մէյխանէք կային՝ տէրտէրներն աստ մէսթի միւթամ, վեց և եօթն ազգին յունաց՝ փիլիսոփայք աստ են բնական. վայելուլ վայրք պարտիզօք՝ զի սա շիրք քաղքիս դիպման: Հաղար տունք յաւել աստ հայք՝ ի վերայ որպէս դիտեալ կան, Սուլու մանաստըր կոչեալ՝ Սուրբ Գէորգն փառաւորական, Ծովահայեաց պարտիզօք՝ յառաջն էր մեր Փիսկորարան. Զոր յունաց առեալ տայ մեզ՝ հինքարն որ Սուլթան Սուլէյման»²⁰⁶:

Երեմիա Չելեպիի ավանդածին համաձայն, սուլթան Սուլէյմանն է (1520—1566) որեմն, որ հույներեն առնելով հայերուն տված է Ս. Գևորգ եկեղեցին:

Հեաազային հայտնվեցան նոր փաստեր, որոնց համեմատ 1490-ական թվականներուն արդեն հայոց կապտականեր Ս. Գևորգը և Ֆաթիհ սուլթանն էր, որ ընծայած է զայն հայերուն Պոլսո առումն հետո:

Արդարև, Սարգիս դպիր Հովհաննեսյան «Տեղագրութիւն Կ. Պոլսոյ» խորագիրը կրող իր ձեռագիր երկին մեջ, խոսելով Սուլուլմանաստըրի Ս. Գևորգ եկեղեցվո մասին, կգրե. «Առումն եկեղեցւոյս ի ձեռաց յունաց եղեալ է ի ժամանակի սուլթան Մէհմէտին յառման քաղաքին Կ. Պոլսոյ, վասնզի տեսեալ և ընթերցեալ է իմ գիրք մի Ողբոց Նդեսիոյ, բոլոր գրով, որ ի յիշատակարանին գրի այսպէս. «Գրեցաւ երգարան Տեառն Ներսէսի ի մայրաքաղաքն Ստընպոլ, ի Սուլու մանաստէրս՝ ընդ հովանեալ Սրբոյ Գէորգայ զաւրավարին, ձեռամբ անիմաց և մեղսամած գրչի Կարապետ երիցու Համշինցոյ: Աղաւթ զձեզ անմեղադիր լերուք զի կար մեր այսլափ էր: Թվին Զեմ յունիս ամսոյ ի ին (1493)»²⁰⁷:

Երկրորդ հիշատակարան մը ձեռագիր Ավետարանի մը մեջ, որ կպահվեր Սամաթիո եկեղեցին և որ ընդօրինակված 1293 թվականին Լամբրոն քերդի մոտ Արմեն կոչված լեռան մեկ վանքին մեջ, Սամաթիո Ս. Գևորգին տրված է 1495-ին, կրսվի. «Նուապտ ծառայս ծառայիցդ Աստուծոյ Կարապետ եպիսկոպոս

²⁰⁵ Դոկւ. Վ. Թորգոմյան, «Երեմիա Չելեպիի Քէօմյուրեճյան, Ստամբուլյա պատմութիւն», Վիեննա, 1918, Ա, էջ 19:

²⁰⁷ Հրատ. Դոկւ. Վ. Զ. Թորգոմյան, «Սամաթիա գրութիւն Ստամբուլյա պատմութիւն», Ա, Վիեննա, 1918, էջ 211:

²⁰⁵ Սամաէ Էրզիւ, «Ռեհիմի թարիւ մեղմուտը», 1958, թիվ 41, էջ 2252—2264:

կաֆայեցի, բազմամեղ հոգոս, որ աղաչեմ կոչել ի բարձրագույն քահանայական անուամբն և իմ այլ ոչինչ ունելով տալ Տեառն Աստուծոյ իմ, զՍուրբ Անտարանս, որ իմ հալալ արդեանց զնեցի և զանտարանիքն նկարել տվի և նոր կապել տուի և զդի յիշատակ իմ հոգւոյս և իմ ձեռողացն ի Ս. Գէորգ տաճարիս, որ կոչի Սուրբ Մանաստիր Մի՛ ք Իշխանացէ գրանել. թիվ. 267 (1495)»²⁰⁸:

Ը. Ղ. Ինճիկյան կգրե իր կարգին. «Երբորդ եկեղեցին է Սուրբ Գէորգ ի Սամաթիա, ի բարձրաւանդակի ի ծովահայկեաց վայրի, մեծ քան զայլ եկեղեցիս, ուր էր երբեմն Պատրիարքարանն Հայոց մինչև գրեթէ ի ՌՂ (1641) թուականն. Պատմի թէ Ֆաթիհ սուլթան Մէհմէտ Բ-ն քաջ յայլոց Հայոց՝ ի Սամաթիա էած քնակեցոյց զժողովորդ Հայոց ի կողմանց Գարամանու, որք զառաջինն քնակեցան վրանօք յանտառի անդ առաջի եկեղեցւոյն՝ որ այժմ հրապարակ է նորին, մինչև ապա յարկս քնակութեան շինեալ քնակեցան ի շրջակայս եկեղեցւոյն, որ յանուն նոցա մինչև ցայժմ կոչի Գարաման մանաղլէօի. որով այժմեան քնակք Հայոց ի Սամաթիա (որոց թիւ ասի լինել աւելի քան զհազար տուն) երեկն իջեալ գէթ ըստ մասին ի նոյն Գարամանցոց. և այնպէս լինին սերունդք նախնի կրիկեցւոց, իսկ այս եկեղեցին որ էր Յունաց՝ խափանեալ կայր ի նոցանէ սակս արեանհեղուցեան ինչ դիպուածոց՝ յոյր սակս ի բարբառ տաճկաց Գանլը քիլիօս. խնդրեալ զայս Հայոց առնուն հրամանաւ առաջին սուլթան Սիւլէյմանայ վասն իւրեանց, և հետզհետէ ընդարձակեն՝ մինչ լինել իրր երրեակ եկեղեցի. Սուրբ Գէորգ, Աստուածածին և Սուրբ Երրորդութիւն»²⁰⁹:

Ը. Ղ. Ինճիկյան զանազան աղբյուրներե բաղելով կրսե, թե Սուլայմանօղլու անունով ծանոթ սուլթան մենաստանը «կանգնեաց Սրբուհին Հեղինէ. ընդ նմին կառուց նաև զպալատ և զծերանոց յանուն Սամաթիոյ, այլ մենաստանն կոչեցաւ Ղապրիա, վասնզի Հեղինէ յետ գտանելոյ զսուրբ խաչն յերեսաղէմ, և որչափ ինչ ծաղիկս գտեալ էր ի վերայ հողոյ ընդ որով գտաւ սուրբ խաչն, տընկեալ յանօթս որ յունարէն կոչի Ղափուրիա, և զնոյն անօթս եղ յայսմ մենաստանի. յայնմանէ և մենաստանն ընկալաւ դիւր անուն»²¹⁰:

Գ. Հնասեր սխալ կգտնե այն ենթադրութիւնը, թե Ս. Գևորգ եկեղեցին հին Ղաստրիա

մենաստանին հողին վրա կառուցված ըլլաւ, և կպնդե, թե այն հույներուն նախկին Պերեյեպոս մենաստանին ճիշտ սահմանին մեջ շինված է: «Gastria մենաստանը, — կրսե, — որ Perivleptos մենաստանին շատ փոքր էր, որուն շենք մ'է. կգտնվի Ս. Գևորգ եկեղեցիին մոտերը ու Սալեմաֆտար մենեխի աւելունը կկրն», — մինչ — Վ. Գևորգ եկեղեցին ընդարձակ և ալքառու շենք մ'էր իր հրկիզումն առաջ (1660), որովհետեւ նախկին հունական մենաստանին այլևայլ մասերը դեռ անեղծ վիճակի մեջ իր մեջը կպարունակեր»²¹¹:

Պատմախանելով այն ենթադրութիւնը, թե Սամաթիո սուլթ. Գևորգ եկեղեցին Ֆաթիհ-ը սոված է հայոց և ժամանակ անցնելով զայն խլած են հույները²¹², հետո Սուլեյման Ա զայն ետ առնելով դարձաւ հայոց սոված է ԺԶ դարու կեսերուն, Գ. Հնասեր կգրե. «Ստույգ իրողութիւնը սա է, որ հույները, որոնց սեփականութիւնն էր իրապես այս եկեղեցին — ալեյի ճիշտը՝ մենաստանը այս եկեղեցիով — անդադար և առանց երբեք հոգնելու ձեռնարկներ կատարած են տարիներով կառավարութեան մոտ, վերստին գրավելու համար զայն և հաջողած ալ են մեկ-երկու անգամ: Այն ժամանակները ով որ շատ կաշառք կվճարեր՝ վճիռը (իլամ) իրեն ի նպաստ կստանար անպայման. Բայց հայերն ալ ձեռքերնին ծալած չեն նստած: Իրենք ալ չուզելով ձեռք հանել այս եկեղեցին, ամեն զոհողութիւն հանձն առին, ամեն ճիգ թափեցին կրկին տիրանալու համար անոր: ... Այս կերպով փոխհիփոխ հայերը և հույները սեփականութեան իրավունքը իրարմե հափշտակեցին, մինչև որ առաջինները տեղ եղան նորեն այս եկեղեցին, ինչպես որ կպատմվի, սուլթան Իբրահիմի գահակալութեան շրջանին (1640—1648)»²¹³, (Հոգովածագիրը այստեղ կհիշե ավանդութիւն մը, որուն համեմատ սուլթան Իբրահիմի կիներն մեկը, հայազգի Շիվեջար սուլթանուհին, սուլթանին մեկ զվարթ ակահուն, իրր շնորհ ստացած է վերջնականապես Ս. Գևորգ եկեղեցին և հայերուն հանձնել սոված):

Ըստ Ալպոյանյանի, «1479-ին Սամաթիո մեջ կհաստատվեր հայ բնակչութիւն մը, այս անգամ Անադոլուին, մասնավորապես Գարամանին տեղափոխված Ֆաթիհ սուլթան Սեհմեդ Բ-ի ձեռամբ: Այս զաղթականները Սամաթիո արդի Ս. Գևորգ եկեղեցւոյն տեղը զոյութիւն ունեցող հունական մենաստան»

²⁰⁸ Հրատ. Կ. Ը. Բասմալյան, «Մատիկ», Կ. Պոլիս, 1891, թիվ 25, էջ 4—5:

²⁰⁹ Ը. Ղ. Ինճիկյան, «Աշխարհագրութիւն լսրից մասնից աշխարհի, Բ մաս, Երուսաղէմ, հատոր Ե, էջ 131:

²¹⁰ ԱԼ, էջ 182:

²¹¹ Գ. Հնասեր, «Կոչնակ», 1932, էջ 544:

²¹² Դոկա. Վ. Բուրգուլյան, «Հանդես ամսագրայ», 1910, էջ 340:

²¹³ Գ. Հնասեր, «Կոչնակ», 1932, էջ 544—545:

տանի մը առջև գտնված անտառին մեջ, նախ վրանի տակ կրնակեին և քիչ-քիչ եկեղեց-վույն շուրջը տուններ կշինեին: 1486 և 1487 թվականներուն արևելյան գավառներն խեղ-ճուկրակ հայ գաղթականներու քարավաններ Կ. Պոլիս հասնելով կատվարացնեն հայոց թիվը Կ. Պոլսո մեջ, Հավանական է ենթադրել, թե քիչ հետո աղոթատուն մը ունենալու համար իրենց շնորհված ըլլա հունական մենաստանը, որուն հայոց սեփականութունը դառնալու թվականը թեև որոշ չէ, սակայն րացորոշ է, որ ան արդեն 1493—1495-ին ատենները հայոց կաթողիկոսներ,— ինչպես կհետևի նույն թվականներուն թի Սուլու մանաստիք, քրդ հովանեաւ Սրբոյն Գէորգայ զօրավարին» կամ թի Ս. Գէորգ Տաճարին» գրված ձեռագիրներու հիշատակարաններն²¹⁴,

Ավելցնենք, որ Սամաթիո սուլն Ս. Գևորգ եկեղեցին է, որ հայոց առաջին Պատրիարքարանը պիտի ըլլար և այդպես պիտի մնար մոտ երկու դար:

Ս. Նիկողայոսը երրորդն է հայ եկեղեցիներն, զորս ունեցան հայերը Պոլսո գրավումն հետք:

Եփոթութեանց առիթ տված է հաճախ Ս. Նիկողայոս անունով զանազան եկեղեցիներու գոյութիւնը Պոլսո մեջ:

Այն Ս. Նիկողայոսը, ուր պաշտամունք կընեին հայերը Ֆաթիհի օրով և որ մզկիթի պիտի վերածվեր 1629-ին ստանալով Քեֆելի ջամի անունը, կգտնվեր Էդիրնեքափուի կողմը ու կաթողիկոսներ հայերուն և լատիններուն համասարապես: Ան փոքր եկեղեցի մըն էր և կգտնվեր լատիններու Ս. Աստվածածին եկեղեցվույն խիստ մոտը, ինչպես կվկայի Պիեհտուր զննա Վալլե որ Պոլսն անցած է 1614-ին²¹⁵, լատիններու մասին մեջ դոմինիկյան հայերն է, որ պաշտամունք կկատարեին²¹⁶,

Ան կհիշվի նաև Պալաթի և Գարակյոմրյուկի կամ Կյոմրյուկի թաղերուն անուններով, որովհետև այդ թաղերը կից էին Էդիրնեքափուին և կշփոթվեին հաճախ:

Հազվագեղ պ երևույթ չէր, որ միևնույն եկեղեցին ոգտվեին տարբեր դավանանքներ: Մանոթ է, որ ԺԶ—ԺԷ դարերուն Հալեպի հայոց եկեղեցիներն կօգտվեին նաև Տֆռանկըք, ինչպես կհիշատակեն Սիմեոն Լեհացի²¹⁷, այ-

սինքն լատինածն կաթողիկայութ՝ իտալացիք, գաղղիացիք և այլն²¹⁸, որոնք վաճառականութեամբ կգտնվեին Հալեպ և լուսնին տակավին իրենց սեփական եկեղեցին²¹⁹,

Բուրբուշի հին հայ եկեղեցվո պարագան ևս ունինք, նախքան Ս. Հրեշտակապետ եկեղեցվո կառուցվիլը, հայերն ու կաթողիկոսները միևնույն եկեղեցվո մեջ էր, որ պաշտամունք կկատարեին: Այդ եկեղեցին, որ Բըրբուշի (Նդրալուքիոն) կկոչվեր, մինչև այսօր ալ կա, երբ առանձին եկեղեցի ունեցան հայերը, Բըրբուշիան մնաց լատիններուն:

Ամենահին վավերաթուղթը, զոր լատիններն ունին, Բերայի իրենց համայնական վարչութեան 1583 նոյեմբեր 18 թվականով Պոլսո լատին ներկայացուցչին ուղղած մեկ գիրն է, որով կխնդրվի ապահովել այն իրավունքները, զորս լատին հոգևորականները ունենին, Մեհմեդ Բ-ի կողմն իսկ 1453-ին տրված հրովարտակի մը համաձայն Պոլսո Ս. Նիկողոս և Ս. Աստվածածին, և Բերայի Ս. Աննա, Ս. Բենուա, Ս. Հովհաննես, Ս. Սեբաստիան, Ս. Անտոն և Ս. Գևորգ եկեղեցիներուն վրա²²⁰,

Հայտնի բյուզանդագետ գրիտ. Պասպատի, խոսելով Ս. Նիկողայոսի մասին, կըսե, թե հավանաբար ան հայկական եկեղեցի եղավ 1475-ի վերջերը, երբ օսմանցիք վերադարձան Կաֆայի արշավանքեն²²¹,

Հայ կաթողիկ քանասերները այն կարծիքին են, որ Ս. Նիկողայոս եկեղեցին կապ շունի քնավ հայոց հետ. ան, ըստ իրենց, լատինական եկեղեցի մը եղած է պարզապես, ուր հաճախելու և պաշտամունք ընելու արտոնվեցան Կաֆային եկող հայերը, որովհետև անոնք ևս կաթողիկ էին²²²,

Հ. Գրիգորիս Գալեմբյարյան ծայրահեղութեան կտանի դավանական իր նախանձախնդրութիւնը: Ս. Նիկողայոսը երկու դավանանքներուն պատկանած է համասարապես:

Սիմեոն Լեհացի, որ Պոլսն անցած է 1608-ին, կգրե իր ուղեգրական նոթերուն մեջ. «Եւ կայ ի Պալատ եկեղեցի մի, կէսն ֆռանկի, կէսն հայի. նոքա ժամ ու պատա-

²¹⁸ Հ. Նեոնս Ալիեյմե, «Հանդես ամսօրյա», 1888, էջ 310.

²¹⁹ F. Tournèbize, «Le catholicisme à Alep au XII-e siècle», «Etudes», t. 134, (1913), p. 351—370.

²²⁰ Belin, «Histoire de latinité à Constantinople», 1894, p. 110.

²²¹ Ղաթանեք, Փարիզ, 1889, էջ 49.

²²² Հ. Գ. Գրիգորիս, «Հանդես ամսօրյա», 1911, էջ 478.

²¹⁴ Ա. Ալպոյաճեյան, «Երեզդարյութ պատմութիւն Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ», էջ 169—170.

²¹⁵ Viaggi di Pietro della valle, Turin, 1843, I, 26.

²¹⁶ Carbone, «Discrizione topografica di Constantinopoli», 1794.

²¹⁷ Սիմեոն Լեհացի «Ուղեգրութիւն», հրատ. Հ. Ն. Ալիեյմե, Վիեննա, 1836, էջ 319.

րագ կ'ստենան. և Հայք կ'առնեն ի միասին սիրով և խաղաղութեամբ²²³:

Արիշ աղբյուրի մը համաձայն, զոր Հ. Գ. Գալեմբյարյան ինքն իսկ մեջ կ'ընթերցի, «Քեֆե-լի ճամփային եկեղեցի էր Սրբույն Նիկողայոսի, կեսը հայոց՝ կեսը լատինաց: Քեֆեյի հետ Ղըրմեն եկող Տոմինիկյան կրօնաւորներուն ձեռքն էր այս եկեղեցին. Քեֆեյին կուգային կերթային, անոր համար Քեֆեյի մահալլեսի, կամ հայերեն Քաղաքացի մահալլեսի կրսեն մինչև հիմա, Սարմա թոմարոսին սեմթն էր նե. կամ թե աս եկեղեցիին կեսը մեր շնորհած Յրենիկի մահալլե էր, ետքը Գրիգոր Պարոն-տեբը, որ Երուսաղեմս պատրիարք էր, Յրենիկին մահալլեթ տալով՝ ժամուն կեսը վարձքով կրնակեինք, ետքը 1600-ին տաճի-կը ուղեց ճամի րենլ, ետքը Ֆրանքսըղին էլ-լին թող լտվալ. քիչ մը ատեն անցավ Մյուֆ-դուն դուռը մյուհրեց. 4 ամիս ետքը փարա-լով իջին առին. կենե ետքեն տյորտյունճու սուլթան Մուրատին ատենը ճամի շինե-ցին»²²⁴:

Եթե Ս. Նիկողայոսը կաթոլիկներունն ըլ-լար, Դարանաղցին ի՛նչ զործ ունեւ հոն, Դա-րանաղցին, պատմելով Երուսաղեմեն իր Պո-լիս դարձը, 1627-ին, կրսե արդարեւ, թե իջե-վանեցավ Ս. Նիկողայոս եկեղեցին, այնպի-սի պահու մը, երբ ժամհալլէի տաճիկքն շա-րացեալք վաղուց հետէ, կու մնային վասն ի կողմն Կէսմերիկի եղեալ Ս. Նիկողայոս եկե-ղեցւոյն, որուն կեսը ֆրանկաց, և մյուս կե-սը ի ճնուց մեր հայերուս կ'պատկանեւ: Դա-րանաղցի կրսե, թե հաջողեցավ ընդարձակել հայոց մասը. շատ ընդարձակեցաք և մե-ծուցաք, որ յառաջ մէկ մարդոյ նստելոյ տեղ ոչ կայր մեր հայոցս, բայց սակաւ ծառա-տունկ, և գերեզմանատուն, և բուրաստան, իսկ ֆրանկաց տունք և տեղիք և բուրաս-տանք շատ կային, որ մեր ազգն վարձուորք էին: Նա հանց յաշողութիւն եղև յԱստուծոյ, որ մերն՝ քան զնոցայն շատ եղև: Քանզի շոր-պաճի մի կայր անդ, որոյ տներն հուպ էր եկեղեցւոյն: Սա բնաշինը եղև ամենայն տամբն, որոյ տներն մեք գնեցաք և այլ շատ գեղեցիկ շէնք շինեցաք, և անուշահամ շուր մի հանեց մեր աշակերտ Յակոբ արեղան, և այլ բազում սպասիւք գեկեղեցին զարդարե-ցաք»:

Դարանաղեցին հետո կ'մեկնի Երուսաղեմ, և իր բացակայութեան է, որ տեղի կ'ունենա Ս. Նիկողայոսի գրաւումը թուրքերուն կող-մե, վերածվելու համար մկրիթի, դեպք, զոր ի լրո է որ կարձանագրե Դարանաղեցին: Ան կ'պատմե, թե իր մեկնելեն հետո թուրքերը

եկած ու կնքած են եկեղեցին, դրամ պահան-ջելով: Հայերը տված են մաս մը դրամ ու զացած դիմած են պատրիարքին, որ Գրիգոր կ'եսարացիին էր, Դարանաղեցիի հակառա-կորդը, և որ իբրև թե վունտած ըլլա դիմող հայերը: Ըսելով անոնց, թե «Ֆրանկներն և սեփական տեղացիքն կու հոգանա: Հայերը, ճարահատ, կերթան մյուֆթիին ետ կ'պահան-ջեն իրենց տված դրամը, ինչ որ ճակատա-գրական կըլլա եկեղեցվո համար, որովհետև թոնց կու տեսանէ միւֆթին որ յետ կ'առնուն զգրամն, յայնժամ կու հաւաքէ զամենայն ու-լամայան իւր, և շատ ամբոխք կու գնան յեկե-ղեցին, և մուլրիկքն կու ձայնեն և նամազ կու կարդան, և յետ այնորիկ մեյիտ կ'առ-նեն»:

Ս. Նիկողայոսի գրաւման շարժառիթը ա-վելի մանրամասն պատմված է ժամանակա-կից ուրիշ աղբյուրի մը մեջ, Արդարեւ, Պալա-թու Ս. Հրեշտակապետ եկեղեցին պահված ձեռագրերուն մեջ (թիվ 69) գրչագիր տետր մը կա, զոր 1811-ին Մեյքոն քահանան ընդ-օրինակած է էջմիածնա գրադարանի «Լուծ-մունք Յորայ և Մեկնութիւն Յայտնութեան խորագրով ձեռագրե մը, և որ թղատմութիւն յաղագս առնոյն տաճկաց զՍուրբ Նիկողա-յոս եկեղեցին ի ձեռացս հայոց, և տալոյն զկնի միոյ տարւոյ զՍուրբ Հրեշտակապետ եկեղեցին փոխանակ նորին» վերնագիրը կ'կրն: Զեռագիրը սապեւ կսկսի. «Ե ժամա-նակս իշխանութեան տաճկաց շորորդ սուլ-թան Մուրատին, որ էր Փրկչական թիւն 1627, և մերս Ռ22, և հիճրէթի 1036, էր եկեղեցի մի հայոց յԱստմալզ մեր ի յետքէնէ դուռն ի թաղին Կաֆայու (ըստ տաճկաց Քէֆէլու) և անուն նորա Սուրբ Նիկողայոս»²²⁵:

Հետո կ'պատմե դեպքը իր բոլոր մանրա-մասնութեանց մեջ, զայն վերագրելով նա-խանձի և ընչաքաղցութեան. «Եւ եղև շարա-նալ և ի նախանձ շարժել ումանց տեսանելով զերթալն քրիստոնէից ի ժամ աղօթից մեծաւ խմբիւ, զարս և զկանալս, զծերս և զտղայս: Եւ ոմն ի մեծաց, մութպախ էմինի Օսման աղա անուն, կամեցեալ վրէժխնդիր լինել՝ ասէ. ի մեր մէջն այսչափ համարձակութիւն շատ է քրիստոնէական միլլէթին, և համա-խոհ գտեալ զոմն, որոյ անունն Հավրուզէի Զավուշ, և դեռ զայլս ժողովեալ ի մի վայր, խորհուրդ արարին, թէ որով հնարիւ խափա-նումն արասցեն եկեղեցւոյն, զի ի պատճառս այս ցրտեսցին քրիստոնէայեան»:

Առիթը կ'ներկայանա ինքնին: Հայ երեսի-ներեն մեկը քսակ մը դրամ փոխ խնդրած ըլ-լալով, փոխարեն եկեղեցվո կ'ալմաժաթթերը

²²³ Սիմեոն Լեճացոյ «Ուղեգրութիւն», էջ 25:

²²⁴ «Համարայ», 1911, էջ 480—481:

²²⁵ Ա. Ալպոյունլու, Հիշված աշխատութիւնը, էջ 44:

կապահանջեն իրրև գրավական: Դրամին հատուցման ատեն, փոխանակ կալվածաթղթերուն, ուրիշ թուղթեր կուտան և ատեն մը հետո դատ կրանան հայոց դէմ, թե առանց իրավունքի գրաված կապահանջ են հանդիսանում: Երբ զգործող, զոր տեսանեմք, թէ որով թէ՛ մէսիկով զապթ կու անէք զայս եկեղեցին: Եւ նոքա որոնեալ ոչ գտին: Քանզի ի ձեռս նոցա էր մնացեալ թղթերն, և մերայինքն ոչ գտին: Եւ ապա դատաստան արարեալ առաջի խաղաքեալներուն, ասացին, թէ որովհետեւ ֆուգուի դապթ են արեւ, պարտ է զայդ եկեղեցին ի մէջիտ առնել, և աղօթանոց տաճկաց: Յորժամ առին զայսպիսի հրաման ի դատաւորացն, գնացեալ խմբովին յեկեղեցին, և ձայնեալ ետուն զսալայն, և կատարելին դիրքանց աղօթսն. և խաւար ածին վերայն տառապեալ ազգիս Հայոց: Իսկ ժողովուրդը յայսմ ժամատանս, ցիր ու ցան եղեալ սփռեցան յայլ և այլ թաղս, անրնակ և անտեղ եղեալք: Կատարէին զհոթն խորհուրդ Ս. Եկեղեցւոյ:

Նշանակայից է, որ Մելքոն քահանան, որ 1811-ին էջմիածնի մէջ ճնորայ լուծմունքս-ի մը մէջեն ակնատեսի մը վկայութիւնները կրնորինակե 1629-ի դպրեբուն մասին՝ իր ընդօրինակութիւնը կմակագրե Վատմութիւն յաղագս առնույն տաճկաց զՍ. Նիկողայոս եկեղեցին ի ձեռաց հայոց, և այլն²²⁶:

Ավելցնենք որ ակնատեսի նույն վկայութիւնները պահպանված են ձեռագրերու տրցակի մը մէջ ևս, որ կապահովի Վիեննայի Մխիթարյանց մոտ և ուր կերեալ ճիշտ միևնույն վերտառութիւնմը²²⁷:

Օրմանլան, ակնարկելով Պալաթու եկեղեցւո շուրջ հարուցված գնաքերուն Գրիգոր Կեսարացի պատրիարքին օրով, շատ հակիրճ կանցնի. «Այդ թաղին պատկանող Կյոմրուկի Ս. Նիկողայոս եկեղեցին, որ առաջ լատին եկեղեցի եղած կըսվի, և հետո Կաֆայի հայերուն անցած, և վերջերը թաղին ազգային եկեղեցին էր եղած, կառավարութիւն կողմէ մղկիթի վերածված էր, և այսօր ալ Քեֆէի ճամի անունով կկոչվի»²²⁸:

Ս. Նիկողայոսի գրավումը թուրքերուն կողմէ 1692-ին, լատիններուն համար լախտի հարված մը եղավ: Անոնք կողմէին այս կերպով Պոլսո կողմը ունեցած իրենց զույգ եկեղեցիներուն մեկին, Հինդ տարի հետո, պիտի կորսնցնեին իրենց մյուս եկեղեցին ալ, երբ Ռեյս փաշա պիտի գրավեր զայն, և Բելին իրավունք պիտի ունենար ըսելու. «Սուլթան Մուրադ Դ-ի թագաւորութիւնը վերջ դրավ

լատինութեան վերջին հետքերուն Կ. Պոլսո մէջ. երկու եկեղեցիներն, զորս ան կապահար քաղաքին մէջ իսկ, Ս. Նիկողայոսը կորսվեցավ 1629-ին կամ 1630-ին, այսինքն 176 կամ 177 տարի հետո օսմանյալ հաղթանակէն, Ս. Աստվածածինը նույն ճակատագիրն ունեցավ 6 տարի հետո»²²⁹:

Հայերը Ս. Նիկողայոս եկեղեցի մը ևս ունեին Վանկա թաղին մէջ:

Հ. Ղ. Ինճիճլան²³⁰ կհիշէ, թե լատիններն ի վանքա թաղին և այլ երկուք եկեղեցիք Հայոց: Սուր Սարգիս մերձ ի Զինիլի-համամն, որ այժմ է տուն քնակութեան, և Սուրբ Նիկողոս ի Հիսար-տիպի մերձ ի դուռն Ենի-գափուին, որ այժմ է պարտէզ: Երկու եկեղեցիներն ալ այրած են 1652-ին, և Քյոփրուլու-օղլու վեզիրը ճհաման ետ Ապրո Սահակայ ումեմն գնեց ի տաճկացալ այրած Ս. Նիկողոս եկեղեցւո ճողը, չյորժամ ինքն Ապրո գնար ընդ բանակին. իսկ Սահակայ ծախեալ 10 հազար դուռ շինեաց զամենայն 1661 թվականին: Հաջորդ տարին սակայն վեզիրը կործանել կուտա այս եկեղեցին ևս, Ս. Սարգիսի և ուրիշ յոթը հունական եկեղեցիներու հետ մեկտեղ:

Վանգայի Ս. Նիկողայոս Սքանչելագործ եկեղեցին իշեանած է 1657 ապրիլ 22-ին, — ուրեմն թուրքերուն կողմէ կործանվեին քիչ առաջ, — Կիլիկիո Թորոս կաթողիկոսը և հոն ալ վախճանած շարաթ մը հետո: Թաղման թափորը ճամբա ելած Ս. Նիկողայոսն, հառաջացած է դեպի Սամաթիո Ս. Գեվորգ եկեղեցին, և այնտեղն ալ ուղղված Պալլաքի գերեզմանատունը²³¹:

Ս. Նիկողայոս եկեղեցին եղած է Պոլսո հայոց մտավորական կեդրոններն մեկը: Անոր հովանիին տակ է, որ իր բժշկական երկերը հորինած է դարուն հայ գիտնականը՝ Ամիր-դովլաթ Ամասիացին, 1471-ին իր «Բառարան բժշկական անունաց»-ը գրելով «առոտն Սրբոյն Նիկողայոս Սքանչելագործ և արագահաս հայրապետին», իսկ 1474-ին դարձալ «ընդ հովանեալ Սրբոյն Նիկողայոսի Սքանչելագործի», շարագրելով «Գիրք օրմակական»-ը:

Ս. Նիկողայոսի հովանիին ներքե է դարձալ, որ Արգար դպիր առաջին տպարանը հաստատած է Պոլսո մէջ, լույս ընծայելով 1567-ին «Փոքր քերականութիւն կամ Այրբենարան», 1568-ին «Պարզատումար» մը, «Ժամագիրք» մը և «Պատարագամատոյց» մը, իսկ 1569-ին «Մաշտոց» մը:

Պոլսո երկու Ս. Նիկողայոսներն ո՞րն էր սակայն, որ իր հովանիին տակ առավ առա-

²²⁶ Ա. Այսլոյան, հիշված աշխատութիւնը, էջ 44:

²²⁷ Հ. Հ. Տաշլյան, «Մայր ցուցակ...», էջ 312:

²²⁸ «Ազգայատում», Բ, էջ 2379:

²²⁹ Բելին, հիշված աշխատութիւնը, էջ 117:

²³⁰ Հ. Ղ. Ինճիճլան, հիշված աշխատութիւնը, էջ 133:

²³¹ «Առաջիկա արեւելյան», 1855, թիվ 5:

շին հայ տպարանը Պոլսո մեջ և որուն «առ
նոս» Ամիրդովլաթ գրեց իր զուգ ձեռագիր-
ները: Հետագային Քեֆեյի ջամիի վերածված
էդիրնեքափուի Ս. Նիկողայոսն էր, թե Վլան-
գայի իր անվանակիցը: Մեր բանասեր-
ներեն ումանք, ինչպես Հրանտ Ասատուր²²²,
Թեոդիկ²²³, Արշակ Ալպոյաճյան²²⁴ այն կար-
ծիքը կհայտնեն, թե Քեֆեյի ջամիի վերած-
ված էդիրնեքափուի Ս. Նիկողայոսն է:

Տարբեր է սակայն դոկտ. Վահրամ Թոր-
գոմյանի տեսակետը: Ան կկարծե, թե Պոլսո
հայ մտավոր շարժման առաջին հովանավո-
րը Վլանգայի կամ որ նույնն է Քուլաքափուի Ս.
Նիկողայոսն է: Զայն այս կարծիքին մոող
պարագան այն է, որ Չամչյան Աբգար դպրի
բացած տպարանը հիշելու ատեն կավելցեն,
թե ագիր սոցա (այսինքն տպարանի հիմնա-
դրին և իր աշակերտներուն) անպիտան էր
խափանեցաւ, և ապա հրկիզութիւն պատա-
հեալ կորեւաւ²²⁵, Դոկտ. Թորգոմյան կըսե,
թե էդիրնեքափուի Ս. Նիկողայոսը հրդեհ տե-
սած չէ, մինչ Վլանգայինը եղած է հրոճա-
րակ: Թորգոմյան կըսե նաև, թե առաջինը
սկիսով ալ ֆոնանկաց պատկանելուն, չէր կըր-
նար հայկական տպարանի մը հարմար վայր
նկատվիլ: Եվ վերջապես, ըստ Թորգոմյա-
նի, Դարանաղեցին պետք էր տպարանի պա-
րագան ալ հիշեր, երբ ժն դարու սկիզբը էդիր-
նեքափուի Ս. Նիկողայոսին մասին կգրեր²²⁶:

Նույն կարծիքին է նաև Հ. Գրիգորիս Գա-
լեմքարյան, Վլանգայի Ս. Նիկողայոս
Սքանչելագործ եկեղեցւոյ շինութեան կամ
սկզբնավորութեան մասին ընավ տեղեկու-
թիւն չունինք. սակայն կարելի է թերևս են-
թադրել, որ այն պատրիարքական եկեղեցի
շինված ըլլա Վլանգայի հնագույն Ս. Մար-
գիս եկեղեցւոյ քովերը, Առվակիմ առաջին
պատրիարքին օրերը: Այս ենթադրութիւնն
անով աւելի կզորանա, որ այս ժամանակնե-
րեն մեզի հասած մեկ քանի ձեռնարկութիւն-
ներ այս Ս. Նիկողայոսի հովանիին տակ կա-
տարված են:

Հ. Գ. Գալեմքարյան ինքն ալ կհիշե, թե
սույն եկեղեցւոյ հովանիին տակ է, որ Ամիր-
դովլաթ հորինած է իր մեկ քանի բժշկական
երկերը, և Արգար դպիր տպած 1567-ին փոքր
բերականութիւնը²²⁷:

²²² «Արարձակ օրացոյց Ազգային հիմնադրոցին»,
1601, էջ 80.

²²³ «Տիպ ու տառ», 1912, էջ 58.

²²⁴ «Երեքդարյան հոբելյան Պաթմու Ս. Հրեշտակա-
պետ եկեղեցւոյ», էջ 168—169.

²²⁵ Զամչյան, Գ, էջ 857.

²²⁶ Դոկտ. Վ. Թորգոմյան, հիշած աշխատութիւնը,
էջ 345—346.

²²⁷ «Հանդես ամսօրյա», 1911, էջ 478.

Այս կարծիքը կորոնգրե նաև Օրմանյան²²⁸,
Զորոբորդ հայ եկեղեցին, որ Յաթիհի օրով
կհիշվի Պոլսո մեջ, Ս. Աստվածածինն է: Ա-
նոր հիշատակութեան կհանդիպինք առաջին
անգամ հիշատակարանին մեջ այն համբա-
վավոր Սաղմոսարանին. զոր Ամիրդովլաթ
բժիշկը ընդօրինակել տվավ Մարտիրոս վար-
դապետին «ի թվ. ԶԻԹ (1480) ի յամսնանն
յուլիս Ը (8) մեծահամբաւ կայսերանիստ քա-
ղաքս Ըստամպուլ, ի դուռն շարափափան
Սուրբ Աստուածածնիս»²²⁹:

Երկրորդ անգամ ան կհիշատակվի Պալա-
թու եկեղեցին պահված և 1297-ին գրված
Սկեսայի Ավետարանին երկրորդ հիշատա-
կարանին մեջ 1498-ին, իբրև «Ս. Չարխա-
փան Աստուածածին նոր Նիկիտացոց, ի
հայրապետութեան Տէր կարապետի քաղա-
քին Կոստանդինոսիս»²⁴⁰:

Թուրք պատմական հիշատակարաններու
հանձնաժողովը, հիմնվելով Հաֆըզ Հյուսեինի
վկայութեան վրա, իբրև կաթոլիկ նախկին
եկեղեցի մը կհիշատակե Օղալար մեսիյիդը,
զոր Քեմանքեշ Մուստաֆա փաշա մզկիթի
վերածած էր 1640-ին և որ կգտնվեր Սալա-
թմարուքի շրջանակին մեջ, Հալիճի Հասան
փաշայի մզկիթին մոտ²⁴¹: Ժամանակակից
վկայութիւններեն գիտենք, որ այդ տարինե-
րուն երկու լատին եկեղեցիներ վերածված
էին մզկիթի, մեկը Ս. Նիկողոսը, որ դարձած
էր Քեֆեյի մեսիյիս և մյուսը Ս. Աստվածածի-
նը, որ կոչվեցաւ Գյուլ ջամի:

Ալպոյաճյան կտարվի ենթադրելու, թե
Օղալար մեսիյիտը հայոց Չարխափան Ս.
Աստվածածինը պետք է ըլլա, և Հաֆըզ Հյու-
սեին շփոթած է հավանաբար անոր մզկիթի
վերածածն թվականը: Ալպոյաճյան սույն
ենթադրութեան կմղվի մեկնելով այն հավա-
նականութենէն, որ «1475-ին Քեֆեհն փո-
խադրված հայերը այդ կողմերը հաստատ-
ված էին Օղալարներու մեջ, և հոն հիմնա-
րդ էին եկեղեցի մը, որ կկոչվեր Չարխա-
փան Ս. Աստվածածին, հավանորեն հանուն
Սուրխաթի (Ղրիմ) նույնանուն եկեղեց-
ւոյն»²⁴²:

Հայոց Չարխափան Ս. Աստվածածինը
պետք չէ շփոթել Դոմինիկյանց սեփական Ս.
Աստվածածին եկեղեցիին հետ, որ 1634-ին

²²⁸ «Ազգագրատա», Բ, էջ 1267.

²²⁹ «Հանդես ամսօրյա», 1895, էջ 246.

²⁴⁰ Ա. Ալպոյաճյան, հիշած աշխատութիւնը, էջ 170.

²⁴¹ E. Manass, «Une Intéressante constatation de
la comission des monuments historiques; deux
anciennes églises catholiques de Stamboul», „Ser-
vet-i-İnnoun“, 1918, № 1398.

²⁴² Ա. Ալպոյաճյան, հիշած աշխատութիւնը, էջ 167.

գրավվեցավ ինքնը փաշայի կողմն և մզկիթի վերածվեցավ, մինչ ժամեր Զարխափան Ս. Աստվածածինը պետք է շատ ավելի կանուխ դրավված կամ որևէ կերպով դադրած ըլլա գոյութենէ: Եթե ասիկա իր գոյութիւնը պահած ըլլար ԺՁ դարուն ապահովաբար այն զեղեցիկ մտավորական ձեռնարկները, որոնք կատեղծագործվեին Կ. Պոլսո մեջ կյոմրուկի Ս. Նիկողոս եկեղեցւոյն շուրջը պիտի ծնունդ առնէին Զարխափան Ս. Աստվածածին եկեղեցւոյն մեջ: Ընդհակառակը զայն հիշված իսկ չենք տեսնար: Հետևաբար իրավունք ունինք դայն ավելի հնազույն շրջանի մը, նույնիսկ լատիններու սագրանքով քանդված ամարեւու, վասնզի իրենց ազգեցութենէն կփրկվեին և անկախ գոյութիւն մը կունենային, րացարձակ իրենց սեփական եկեղեցիի մը մեջ: Ահա թե ինչու՝ կմտածեմ, թե Զարխափան Ս. Աստվածածին եկեղեցին, հիշված 1480—1498 թվականներուն, պետք է եկեղեցին նկատել Նիկոնեքափուի կողմերը հավաքված քեֆեցի հայերու և դայն ուրիշ տեղ չփնտնել: Մինչև ԺՁ դարուն երկրորդ կեսը և Ժե դարուն սկիզբը Կոստանդնուպոլսո մեջ Սամաթիայի և էգիրեքափուի շրջաններն զուրա հայ ընակչութիւն գրեթե չկար կամ շատ ցանցաւ էր²⁴³:

Սույն Ս. Աստվածածինը պետք չէ շփոթել նաև Քումբափուի Ս. Աստվածածինն հետ, որ 1610-ին կամ քիչ մը առաջ հազիվ գոյութիւն կառնէ Հովհաննէս Խուլ պատրիարքի ատեն և որուն երբեք չէ տրված Զարխափան անունը²⁴⁴:

1480-ի և 1498-ի հիշատակարաններուն մեջ հիշված Ս. Աստվածածինն մասին տարբեր ենթադրութիւնայն մը կհանգի սակայն քեֆի Վ. Թորգոմյան: Կփորձեմ զայն նույնացնել Քումբափուի Ս. Աստվածածինն հետ, որ 1641-ին Սամաթիայն պիտի փոխադրվեր հայոց Պատրիարքարանը: Այս փաստն իսկ ապացույց մը կնկատեմ. որ Պատրիարքարանը Սամաթիո Ս. Գեորգեն հոն փոխադրվելու առաջ պետք էր կայան մը ունեցած ըլլար ան: Զինք այդ ենթադրութիւն մը որ պատճառներն մեկն ալ այն է. որ Երեմիա Զելերի իր տարեգրական պատմութիւն մեջ կըսէ, թե Ս. Աստվածածին եկեղեցին ճայեւու ամենեւն մեծ ուխտատեղիին էր²⁴⁵. Եայս միայն բավական է՝ որ անոր հնութիւնն ավելի վաղ ժամանակներու մեջ ղենդու²⁴⁶:

Ս. Սարգիսեն. Ս. Գրիգոր Լուսավորիչն. Ս. Նիկողայոսն. Ս. Աստվածածինն և Ս.

Գեորգեն հետո, որոնք առաջին հայ եկեղեցիներն եղան Պոլսո մեջ, հայերը հետզհետե եկեղեցիներ ունեցան ուրիշ թաղերու մեջ ալ, բայց շատ ավելի ուշ:

Ինչպես Ղալաթիո հայ եկեղեցին, Պոլսո գրավումն հետո հայոց ունեցած առաջին եկեղեցիները ևս արժարժած են ու կշարունակեն արժարժել բավական անախորժ վեճ մը: Որոշն են եղած անոնք:

Առաջին վեճը, անշուշտ, Ս. Գեորգ եկեղեցւո շուրջն է եղած: Նախապես հունական էր ան, և հետո անցած էր հայերուն: Քանի մը դար վիճած են երկու համայնքները անոր սեփականատիրութիւն մասին, մինչև որ հրդեհը վճռած է հարցը:

Կաթոլիկներուն հետ վեճը տեւած է ավելի երկար: Անոնց հավակնութիւնը Ղալաթիո եկեղեցիին սկսած, շարունակված է Ս. Նիկողայոսի շուրջ: Ս. Նիկողայոսի վեճը հարթեցին թուրքերը իրենք, մզկիթի վերածելով զայն 1629-ին. Ժամանակը լուծեց Ղալաթիո Ս. Լուսավորչի հարցն ալ. դարերով հայոց ձեռքը մնաց ան, և կաթոլիկներու հավակնութիւնները ցնդեցան օդը:

Վեճերը թուղթի վրա է որ կմղվին հիմա: Բնասներն են է որ կշարունակեն արժարժել զանոնք, ու դավանական կիրքն է, որ կհալւ փաստերը:

10. ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԸ

Յաթիհ հունաց պատրիարքին համար Ս. Առաքելոց եկեղեցին Աթոռ նշանակեր էր, որովհետև Ալա-Սոֆիսու մզկիթի վերածելը Պոլիս մտած-լմտած:

Հայոց առաջին պատրիարքին՝ Հովակիմի համար Աթոռ սահմանեց Սուլումանաստրի Ս. Գեորգ եկեղեցին:

Եթե Յաթիհ Սուլումանաստրի մեջ զետեղեց հայոց Պատրիարքութիւն Աթոռ՝ առաջ պատճառի չէր: Ինչպես Բարինդերի հայտնաբերած ֆերմանը կմատնանշեմ, Սուլումանաստրի վանքին շուրջ զետեղված հայերը 1458-են շատ առաջ իրենց եպիսկոպոսն ունեին, ինչ որ կապացուցանեմ, թե Ս. Գեորգ վաղուց հոգևոր կեդրոն մըն էր հայերուն համար և հոն կնստեր իրենց առաջնորդը ղեկ հինեն:

Ս. Գեորգը հետևաբար հայոց պատրիարխիստ եկեղեցին դարձավ, ու Պոլսո հազարութիւն հոգևոր կեդրոնը գրեթե երկու դար:

Ու քնական էր, որ նույն այդ վանքին շուրջ ստեղծվեր մտավոր կյանք ևս:

Տեսանք, որ Ս. Գեորգի հովանիին տակ ուրեմն պատրիարքարանի շուրջ մարմին առած ոգևորութիւն սուր՝ շրջանակին մեջ:

²⁴³ Ա. Ալպոյաեյուե. հիշված աշխատութիւնը, էջ 172:

²⁴⁴ Անդ, էջ 173:

²⁴⁵ Մազմազկապ, 1902, էջ 368:

²⁴⁶ Դեկու. Վ. Թորգոմյան, հիշված աշխատութիւնը:

Ի 229—230:

երկեր հորինված և ընդօրինակված են ձեռագրեր:

Սարգիս դպիր Հովհաննեսյան իր «Տեղագրութիւն Կ. Պոլսոյ» ձեռագիր երկին մեջ կվկայէ տեսած ըլլալ Շնորհալիի «Ողորմութիւն» երկին մեկ ընդօրինակութիւնը, որուն հիշատակարանը կրսեր, թե «գրեցաւ երգարանս Տեառն Ներսէսի ի մայրաքաղաքս Ստանբուլ, ի Սուլու մանաստէրս, ընդ հովանեաւ Սրբոյ Գէորգեայ զաւրավարին, ձեռամբ անիմայ և մեղսամած գրչի Կարապետ երիցու Համշինցոյ... Թվին ԶԽԲ (1493)»²⁴¹:

Սամաթիո Ս. Գէորգ եկեղեցւոյ դիվանատան մեջ կպահպարդէ 1293-ին Կիլիկիա գրված Ավետարան մը, որուն հիշատակարանին մեջ կարապետ եպիսկոպոս Կաֆայեցի կարձանագրէ 1495-ին, թե «գլ. Աւետարանս որ իմ հալալ արդեանց գնեցի, և զԱւետարանիչն նկարել տուի և նոր կապել տուի և դրի յիշատակ իմ հոգոյս և իմ ծնողացն ի Ս. Գէորգ տաճարիս որ կուր Սուլու մանաստէրս»²⁴²:

Զաքարիա Գնունյաց եպիսկոպոսի և Աստվածատուր պատրիարքի պատմերով 1544-ին ընդօրինակված «Ստոյն Կալիսթի»-նայ Աղեքսանդրի վարուցք մեկ օրինակը, որ կպահպարդէ Մանչեստրի Զոն Ռայոնդս գրավաճառին մոտ, կրսն իր հիշատակարանին մեջ. «Գրեցաւ սա ի թվին Հայոց ԶՂԳ (1544) ի Սուլի մանաստիրս, ի բունպետութեան սուլտան Սուլէյմանին»²⁴³:

Ինչպես հիշեցինք, հույները չէին մարսած, որ իրենց համբավավոր մեկ վանքը հայոց ձեռքը քարունակն մնալ, ու փորձեր ըրին քանիցս անոր տիրանալու համար կրկին:

Հայոց ստեղծած հոգևոր այս օջախը կարևոր թաղի մը մեջ, որ Սամաթիան էր, ծուռ աչքով կդիտեին նաև թուրքերը, որոնք նույնպես փորձեր ըրած են նեղելու այնտեղի հայերը:

Թուրք պատմագետ Ահմեդ Ռեֆիք կհրատարակէ Սուլթան Սելիմ Բ-ի 972 զիջարդն 3 (1565 հունիս 2) թվակիր մեկ ֆերմանը, որուն համաձայն Սուլթաննաստրի հայոց եկեղեցւոյ հոգևորականներուն (ֆեշիշ) դժմ, որ իրենց ունեցած Պատրիարքարանին (ֆեշիշկանե) կողքին նոր շէնք մը եւ պնդեցուցած են և պահանջած է անոր քանդումը: Տեղի ունեցած քննութիւնները ապացուցած են իբրեւ թե այդ պարագան և հաստատած միևնույն ատեն, թե հայ հոգևորականները կար-

ենան ու նվազածութիւն կընեն իրենց շէնքին մեջ ու կխանգարեն իսլամներուն նամազը: Սուլթանը կհրամայէ Պոլսոյ դատաւորին՝ պետեղել այս մեղադրանքները և եթե իսկապես ճիշտ են անոնք՝ փլցնել տալ զանոնք, և հայոց վանքին հոգևորականներուն ալ ազդարարել նման արարքներով անհանգիստ չընել իսլամները²⁵⁰:

«Տարակույս չկա, թե հրամանը կգործադրվի, րայց թե դիւարբուքը արգելելու համար տրված խորհուրդներուն կհետեւին քեշիշմար տրված տարակուսիլ — դիտել կուրսի» կարելի է տարակուսիլ — դիտել կուրս հայ բանասեր մը²⁵¹: Արդարեւ, Սամաթիո թաղը հետագային ալ համբավավոր մնաց իր գինեւորներով, ուր, ինչպես կվկայէ Նրեմիա Զելեպի, կհաճախեն հայ քահանաներ ալ:

«Ուր շատ մէլխաւէֆ կային»²⁵²:
տէրտէրներն աստ մէսքի միտամ»²⁵³:

Սամաթիո մոտակա այս գինեւորներն մեկուն մեջ է, որ ժէ գարուն սկիզբը Պոլսոյ հայ քահանաները թակարդ պիտի լարեն Հովհաննէս Խուլ պատրիարքին: Արդարեւ, «Պոլսոյ հայ քահանաներ հեաւիւք իմն կտանին զայն նապըքափուի կողմը գտնվող Արիֆներաց գինեւորներ, և ենիշերներու գրիւխավորին լուր տալով իրենց խուլս կուտան, մինչ ենիշերներն եկեղեցական մը գինեւորնի մեջ տեսնելով, զվարդպետն առնեն քահանէ, թէպէտ ան կաղաղակեր, թե տեղեակ չէ տեղւոյս»²⁵⁴, կամ Զելեպիի իսկ բառերով՝

Տէրտէրն Խստամպօլոյ՝

Հնարիք տարեալ ընդ մէլխանան,

Զիտուլ Յովհաննէս վարդապետն՝

զտեղացին ի բարս շամբշական,

Յանկարծ եէնիշէր աղայն՝

երբ կոխէ տէրտէրն փախեան,

Զվարդապետն առնեն բրածեծ՝

տեղեակ չեմ տեղւոյն նա գոյման»²⁵⁵:

Ս. Գևորգը համբավավոր էր նաև իբրեւ արվեստի կոթող:

Թե ի՛նչ գեղարվեստական քաջադիւ առժեք կնեկակայացներ պատրիարքանիստ այս եկեղեցին՝ հետագա դարերու համարողներու նոթերն գիտենք, որոնք հիացումով կխոսին արվեստի հրաշակերտներուն վրա, որոնցմով պնդված էր վանքը:

Պոլսոյ գերմանական դեսպանատան մատրանապետը, S. Von Gherlach, նկարագրելով

²⁵⁰ Ahmet Refik, «On altinci asirda Istanbul hayali», İkinci basım, 1935, sahife 46—47.

²⁵¹ Հ. Պեղեղյան, «Հանգիստ ամսօրյան», 1961, էջ 228:

²⁵² Դոկտ. Վ. Բորգոմյան, «Հիշված աշխատութիւնը», էջ 7:

²⁵³ «Ազգապատմութիւն», Բ, էջ 2274:

²⁵⁴ Դոկտ. Վ. Բորգոմյան, «Հիշված աշխատութիւնը», էջ 6:

²⁴⁷ Դոկտ. Վ. Բորգոմյան, «Հիշված աշխատութիւնը», էջ 211:

²⁴⁸ Կ. Բաղդուրյան, «Մուշկէ», Կ. Պոլիս, 1895, թիվ 25, էջ 4—5:

²⁴⁹ Հ. Ն. Ուիլիյամ, «Զաքարիա եպիսկոպոս Գնունյաց», «Հանգիստ ամսօրյան», 1902, էջ 223:

իր մեկ այցելությունը Ս. Գևորգ եկեղեցին 1577-ին, կրսե, թե «հայերը տարեկան խոշոր գումար մը կվճարեն սուլթանին, որպեսզի կարենան ազատորեն երթնկեկ հոն», ու կպատմեն, որ ճաշատան (réfectoire) պատերուն վրա նկարված էին բոլոր առաքյալները, երեսնի հախսկոպոսները, մարտիրոսները, նաև Մեծն Կոստանդիանոսի և մորը՝ Հեղինեի բյուղանդական ոճով խճանկարը²⁵⁵։

Գեուլախ կղբե, թե սույն եկեղեցին Յոթը Աշտարակներեն շատ հեռու չէ և ձևն այնպես կհասկցվի, թե մենաստան մը եղած է ժամանակին Մեծ և ընդարձակ շենք մըն է և բարձր զիրքով ճաշատուն մը ունի Կոստանդնուպոլսի մեջ չէի տեսած նման մեծ շենք մը Այա Սոֆիային դատ։ Եկեղեցին բավական մութ է և հոն, որ պետք էր դպիրներու դասին հատկացվի, շինված են երեք իրարմե տարբեր կամարներ, որոնցմե միջինը բոլորչի է և բարձր, հորանին մոտենալու համար պետք է երեք աստիճան բարձրանալ։ Հորանին վրա է շինված սեղանը, ուր կա Մարիամ Աստուածածնի պատկերը Հիսուս մանուկը գիրկը։ Սույն պատկերին շուրջ քանի մը ուրիշ պատկերներ ալ շինված են։ Հորանին վրա զետեղված են ութը-տասը աշտանակներ խոշոր մեղրամոմերով, զորս կվառեն պատարագի ժամանակ։ Հորանին առջև՝ սալարկված է գետինը և գորգերով ծածկված։ Պատարագը կմատուցվի խորանին առջև, չորս դպիրներ և մասնակցությամբ։

Սիմեոն Լեհացի, որ 1608-ին Պոլիս կգլուցվեր, սապես կպատմեն իր այցելությունը Սուլումանաստըր՝ «նե այլ որն գնացաք ի Սուլումանաստըր, որ մերձ է Եօթն Դուլան, ուր կայ Հայոց մեծ եկեղեցի մի վիմաշէն և զմբէթաձև, թագաւորաշէն, որ կոչի Սուրբ Գէորգ, ի փառաւոր և բարձրաւանդակ տեղոց և ծովահայեաց... զարմանալի շինուածք էին շուրջանակի՝ դրախտք, պաղլայք, բուրաստանք, այազմաք, պարտէզք, մրգաստանք, և շուրջ բարեհամ, և այլ բազում բնակութիւնք կարգաւորաց և աշխարհականաց, եկաց և բնակաց։ Եւ կայր ի բարձր տեղ դարպաս մի փոքրիկ, որ հայէր ի վերայ ծովու, յոյժ գեղեցիկ և վայելուչ, ոսկեզօծ և զանազան գեղօք նկարեալ և յօրինեալ պայծառ. և առջև սրճայ մի մեծ թավանլու, սեղանատեղ որ ի շող ժամու և սոթ անդ նստեալ ոք՝ այլ ոչ կամէր տնտի գնալ։ Այլն եկեղեցնայ թիկունքն կայր քարուկիր կամար, նեղ և երկայն... և շուրջ ու բոլորն նկարք պատկերաց ԾԺԸ (318) հայրապետաց և ի գլուխն Քրիս-

տոս և աջմէ Կոստանդիանոս թագաւորն և ձախմէ զշխոյն Հեղինէ որդովքն... այժմ Աթոռ է և Պատրիարքարան Հայոց»²⁵⁶։

Ս. Գևորգը զարգարող գլուխ-գործոցները իրենց կթաշին հետաքրքրությունը ականաւոր դեմքերու։

Սուլեյման Գանունի մասնավոր սեր ուներ նկարչության։ Յիսման ազնվական մը, de Stochone, որ 1630-ին Պոլիս այցելած էր, կպատմեն, թե հայոց պատրիարքին բնակարանի մեկ սրահին մեջ խճանկարված էին եկեղեցական հայրեր, կայսր մը և կայսրուհի մը։ Հայերն ըսին իրեն, թե սուլթան Սուլեյման այնքան հետաքրքիր էր, որ հաճախ այդ նկարները դիտելու կուգար»²⁵⁷։

Corneille le Bruyn 1725-ին Պոլիս կատարած իր ուղևորությունը նկարագրելու առթիվ արտատպումներ կընեն M. de Monconis-ի «Ճամբորդություն գնալի Կ. Պոլիս» գործին, որ տեղի ունեցած է 1648-ին, այսինքն 1660-ի մեծ հրդեհէն առաջ, երբ դեռ հրո-ճարակ չէր եղած Ս. Գևորգի համբավովոր այդ ճաշատունը իր զմայելի որմանկարներով։ Ճաշատան սերկայությունը, — կգրեն Մոնգոնիս, — քառասուն քայլաչափ է և լայնքը՝ ութը։ Այստեղ կտեսնվին նկարները շատ մը մենակյացներու, որոնք հոն սրբական կյան մը վարած են։ Ասոնք որմանկարի (fresque) ձևով պատերուն երկայնքը շինված են։ Ասոնց վերևի ծոփորին (frise) վրա ճարտարապետներ նկարված են մինչև իրենց կեն մեջքը։ Սույն ծոփորին վերի կողմը ուրիշ մը կգտնվի, որ կենրկայացնեն Սուրբ Կույս Մարիամու կյանքը։ Սրահին կամարը կենս-գմբեթ մը կձևացնեն, ուր խճանկարված է Սուրբ Ընթրիքը. միայն թե գառնուկի տեղ ձուկ մը կա դրված պնակի մը մեջ։ Մայրը՝ դեպի դուռը կտեսնվի մեկ կողմը՝ նկարը հույն մեկ կայսեր, իսկ մյուս կողմը նկարը կայսրուհիի մը, և այլն»²⁵⁸։

1643—1644-ին էր, որ հայոց Պատրիարքարանը Սուլումանաստըրեն Քումքափու պիտի փոխադրվեր։ Իսկ Ս. Գևորգ, ինքը, հրոճարակ պիտի դառնար 1660-ին։

(Շառունգկիյի)

²⁵⁵ Սիմեոն Լեհացայ «Ուղևորություն», էջ 21—22։

²⁵⁷ Աւմենակ Սազրգ. «Նկարչությունը Պոլսո մեջ և Ապոստոլյան Պոլսարի», «Եկանք և արժեատ», Փարիզ, Ա տարի, էջ 83։

²⁵⁸ Voyage de Corneille le Bruyn par la Moscovie, la Perse et aux Indes Orientales, tome I. Paris, 1725.

²⁵⁵ S. Von Gherlach, „Tagebuch“, Frankfurt am Main, 1764, p. 181.

ՄՈԿԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Մոկայց գավառը հնում բաղկանում էր 9 գավառներից, իսկ այժմ ունի միայն չորսը՝ Առանձնակ Մոկք, Ասվանից ձոր, Արքայից գավառ և Արգաստվիտ:

Տավրոսի լեռները տարածվում են Վանի լճի հարավային մասերում և իրենց լեռնագագաթների, լեռնաշղթաների մեջ սեղմված պահում են մի քանի գավառներ, որոնց թվում և այժմյան Մոկսը:

Լեռնահանգույցի գլխավոր գագաթն է 3 500 մետր բարձրությամբ Նդերով լեռը, որից ձգված լեռնաշղթաները բաժանում են Մոկսը իր հարևան գավառներից: Իսկ Մոկսը Շատախից և Սպարկերտից անջատող լեռնաշղթաների բազմակները բաժանում են Մոկսը խոր-խոր ձորերի և կիրճերի: Տեղումների առատության շնորհիվ, ամեն մի ձորի միջից գահավիժում են արագահոս մշտահոս գետեր, որոնք իրենց ճանապարհի անցած ձորի կամ րնակավայրի անուններով են կոչվում: Այսպես, Նդերովի ստորոտում կառուցված Փութկու Ս. Գևորգի վանքից սկիզբ առնող գետը, որ հոսում է հյուսիսից հարավ և անցնում է Մոկայց կենտրոնով, և՛ գետը, և՛ ձորը կոչվում են Փութկու գետ և Փութկու գելի ձոր, արևելքից՝ Առնջի ձոր և գետ Առնջ գյուղի անունով, Նանենից ձոր և գետ Նանենց գյուղի անունով, արևմուտքից՝ Բառա ձոր և գետ Բառ գյուղի անունով, Սեպա ձոր և Սեպա գետ Սեպ գյուղի անունով:

Ամբողջ Մոկսը զուգի է տափարակներից, հարթություններից և նույնիսկ հովիտներից, բայց հարուստ է արոտավայրերով, ծաղկավետ լեռնալանջերով, անտառներով և պտղատու ծառերով, սկսած ձիթենուց մինչև յուրահատուկ քաղցրահամ տանձր, որն իր տարածված րոտր վայրերում կոչվում է Մոկայց տանձ:

Հաղորդակցության դժվարությունների և երկրի մեկուսացված լինելու պատճառով, Մոկայց աշխարհը ավելի է հավատարիմ մնացել հին սովորություններին, ավանդություններին, ավելի պինդ է պահպանել իր լեզվի և բարբառի առանձնահատկությունները, հին պատումները, հատկապես Սասունցի Դավիթը իր յոթ ճյուղերով, և բազմաթիվ գրույցներն ու հեքիաթները: Ինչ որ ընկել է այդ խոր ձորերում, պահպանվել է երկար ժամանակ, ինչ որ ստեղծագործվել է Մոկսում, եղել է ինքնուրույն և յուրահատուկ:

Մոկայց աշխարհը հարուստ է նաև անապատներով, հուշակավոր վանքերով, որոնք եղել են հայ մշակույթի վառ օջախներ:

2. Դեռևի Ալիշան իր «Այրարատ» աշխատության Դ գլխում (էջ 428), խոսելով Մոկայց աշխարհի վանքերի մասին, գրում է. «Այլ և մտաւոր քաղաւաճանօք, որպէս տայ գուշակել ներքող նարեկացւոյն զԱպարանից հաւէ, յորում դրուատին եպիսկոպոս նոցին և վանորայքն: Ալիշանն այդ վանքերի թվում

հիշատակում է Ս. Խաչ վանքը կամ Ս. Կանանց վանքը, Փութկու Ս. Գևորգի վանքը կամ Սարի Ս. Գևորգի վանքը, Ս. Ամենափրկիչը, Ս. Փասա վանքը և Սրբոց Վարդանանց վանքը:

Ս. Կանանց կամ Ս. Կարապետի վանքը Մոկաց աշխարհի վանքերից առաջինն է, Այսպես է կոչվում Սեպա ձորի դեպի արևմտյան Մոկանց գյուղից 1,5—2 կիլոմետր հեռավորության վրա սրբատաշ քարերով կառուցված այս վանքը, որ հնում կոչվել է Ս. Խաչ կամ Սայատի վանք: Վանքի հյուսիս-արևելյան կողմը գտնվում է Եզրկան քարանձավը, որն անջատում է վանքը Մոկաց քաղաքից, հյուսիս-արևմտյան կողմից՝ Բարյակ քարանձավը, որի մոտ է այն Բառա ձորից, իսկ Բարյակից դեպի հարավ իջած քաղովը՝ գյուղից:

Այդ երկու քարանձավներից դեպի հարավ, դեպի Սեպա գետն իջնող երկու լեռնաբազուկները հետզհետե ցածրանում են և աստիճանաբար մոտենում իրար, և դեռ չհասած Սթկանց գյուղին, ստեղծում են մի նեղ ձոր, կիրճ: Եվ այդ կիրճը հարավից, Եզրկանը հյուսիս-արևելքից և Բարյակ քարանձավներից հյուսիս-արևմուտքից կազմում են եռանկյուն և մի գոգավորություն, որի մեջտեղ սրբատաշ քարերով կառուցված է Մոկաց աշխարհի հնագույն վանքերից Ս. Կարապետի եկեղեցին իր դարբասով: Դռան վրա դեռ պահպանված է հետևյալ արձանագրությունը. «ՁՏԷ Գրիգոր շինող եկեղեցւոյս, զՅովնանեւ, զԹովմա և զՎաղար յիշեցէ, ՊՄԷ (1408)»: Եկեղեցուն կից գտնվում է դերձգմանատունը՝ զարդարված խաչքարերով, տապանաքարերով, ծաղիկներով և զանազան տեսակի վարդենիներով:

Բնությունը ոչինչ չի խնայել վանքի շրջապատը շքեղացնելու համար: Վանքի երեք կողմերից դեպի կենտրոն, դեպի վանքն են իջնում մի քանի փոքրիկ լեռնային աղբյուրներ, որոնք միանալով վանքից ներքև, հնարավորություն են տվել ոռոգելի դարձնելու լեռնալանջերում գտնվող փոքրիկ հողաբաժինները, վերածելով դրանց ցանովի տարածություն, իսկ մնացած մասերը, մինչև բարձունքների գագաթները, ծածկված են անտառներով, պտղատու ծառերով, խոտհարքներով և արոտավայրերով, որոնք առանձին շուք ու գեղեցկություն են տալիս վանքին:

Վանքի անտառները, որոնք տեղացիք անվանում են «մերի», մեծ մասամբ բաղկացած են կաղնի ծառերից: Իսկ պտղատու ծառերը, որոնք իրենց շատության պատճառով անտառի տպավորություն են թողնում, բաղկացած են տարբեր տեսակի տանձենիներից և ընկուզենիներից, վերջինները այնքան շատ են, որ ապահովում են վանքին մաքուր ընկուզի

ձեթով: Քիչ չեն նաև սալորի, խնձորի և այլ տեսակի մրգատու ծառերը: Վանքի մոտով անցնող առվակների կողքին բարձրանում են բարդիներ և ուռիներ:

Վանքի բարձր դիրքը, անդորր շրջապատը, ծառերով, ծաղիկներով հարուստ շրջակայքն է, որ առիթ է տվել գրիչ Առաքելին 1579 թվականին գրառած իր Ավետարանի հիշատակարանում գրելու. «Երկիրս Մոկաց, ի մեծափառ և ի հուսկաւոր, երկնահանգիստ և վայելուչ սուրբ ուխտս, որ Սուրբ Կանանց վանք կոչի»:

Մոկաց վանքերի մեջ առաջինը Ս. Կանանց վանքն է: Բնիկ հայ ժողովրդի մեջ պահպանված ավանդությունները վանքի հիմնադրմանը կապում են Շոփիսիմյանց կույսերի հետ, որոնք եկել են Մոկա և օթևանել այժմյան վանքի տեղում, և ի հիշատակ նրանց կառուցվել է վանք և անվանվել Ս. Կանանց վանք: Թե երբ է կառուցվել վանքը՝ հայտնի չէ: Հավանական է, որ Ս. Կանանց վանքը մի ժամանակ եղել է և՛ հանքավայր և՛ հանքերի մշակման վայր: Այդ հանքայնությունները վերամշակվել են Սթկանց գյուղում և ձորի հանդիպակաց կողմը գտնվող Բռնաշեն գյուղում, որը մի ժամանակ եղել է Մոկաց քաղաքատիպ վայրերից և արհեստավորական կենտրոններից մեկը, որի նյութական մնացորդները դեռ կան գյուղի ավերակների մեջ և շրջակայքում: Համեմատյալ դեպք, Ս. Կանանց վանքի վայրը, նախաքրիստոնեական շրջանում, իր բնական գեղեցկությամբ, շեր կարող հարմարավետ կամ օգտակար բնակավայր չլինել, և դրա համար էլ Շոփիսիմյանց կույսերի հետ կապված ավանդությունները պետք է կապված լինեն նման մի գեղեցիկ վայրի հետ:

Մեր ձեռքն հասած ձեռագրերից հայտնի է, որ գրչություն արվեստը Մոկաց աշխարհում, առաջինը 1306 թվականին սկսվել է Ս. Կարապետի վանքում և ընդհատվելով շարունակվել մինչև 1691 թվականը:

1306 թվականին Մոկաց Ս. Խաչ կամ Ս. Կանանց վանքում գրիչ վարդանն ընդօրինակում է Մոկաց գավառի առաջին գրչագիր Ավետարանը, առանց հիշատակելու իր ծնողների անունները: Պատվիրատուի մասին հիշատակարանում գրում է. «Թէ ո՞վ եղև առիթ կամ է՞ր աղագաւ ստացաւ զսա, Կարապետ պրայսէր և պատուական քահանայ ի գեղջէ, որ կուլի Ածկոր»¹: Ավետարանն այժմ գտնը-

¹ Ածկոր անունով գյուղ Մոկսում և շրջակա հարևան գավառներում չկա. գուցե Մկոր գյուղն է, որը գտնվում է Կապուտի արևմուտքում, Կապուտ գետի ստորին հոսանքում, Արշալան և Վերաբաժան-ի Գ գյուղում, 428 էջում, Մոկաց վանքերի հետ թվարկում և նաև Մկորի վանքը:

վում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան գիտահետազոտական ինստիտուտ մատենադարանում, 2806 համարի տակ:

1379 թվականին, երբ Ս. Կանանց վանքի առաջնորդն էր Տիրացուն, նահապետ կրոնավորը, Հովհաննես և Կիրակոս վարդապետները պատվերով, ընդօրինակում է ձագագս երկնային քահանայապետութեանց Սրբոյն Դիոնիսիոսի Արիսպագացւոյ՝ դիրքը, թարգմանված Ստեփանոս Սյունեցու կողմից: Գրքը չազդերն այժմ գտնվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանում:

1380 թվականին, վանքի առաջնորդ Տիրացուն, իր հորայր Ստեփանոսի և իր քեռորդի Հովհաննես կրոնավորի հետ, ձմեռում գրել զսայ (Մարգարէութիւն Նսայեայ և Թուղթք Պաղոսի) եռայփափաք սիրով, ի վայելումն անձանց իւրեանց և յիշատակ հոգւոյ իւրեանց և ծնաւորաց իւրեանց... և հետո ավելացնում է. «Անմեղադիր լերուք, զի ի ձմեռանի գրեցաւ և ցուրտ էր տանն»²:

1401 թվականին Ս. Կանանց վանքի վանահայրն էր Թովմա կրոնավորը, որն իր եղբայր Մովկաց եպիսկոպոս Գրիգորի հետ պատվեր են տալիս եղբանի Ս. Խաչ վանքի միաբան Հովհաննես գրչին գրելու մի Մաշտոց, թի յիշատակ հոգւոյ իւրեանց և ծնողաց իւրեանց և հանգուցեալ եղբօրն իւրեանց Ղազար սարկաւազի: Գրիչ Հովհաննեսը Մովկաց եպիսկոպոս Գրիգորին ընուրթացրում է որպէս զգեղնապատիւ և զգեղաշնորհ, զառաքելաշնորհն և զճշմարիտ պատկերն Քրիստոսի... և Զեռազիրը Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանումն է, 898 համարի տակ:

1410 թվականին Ս. Կուսանաց վանքն ունեւր կազմակերպված միաբանութիւն: Ավետարանի գրիչ Աստվածատուրը իր հիշատակարանում գրում է. «Աբղ, գրեցաւ Սուրբ Աւետարանս այս ի Թուականիս Հայոց ՊՄԹ (1410), ի յերկիրս Մովկաց, ի վանքս Սուրբ Խաչ և ի Սուրբ Կարապետի, ի հայրապետութեան Տեառն Դաւթի, ձեռամբ յոգնամեղ և փծուն և անարժան գրչի Աստուածատուր քահանայի»³: Ստացողները եղել են Ղազար և Անտոն քահանա եղբայրները, թի յիշատակ հոգոց իւրեանց և ծնողացն: Հիշատակարանում 36 տողից բաղկացած ոտանավորով գրիչը խնդրում է ղողորմի տալ իրեն և Ղազար և Անտոն քահանաներին: Գրիչը չի թողել իր ծնողների անունները:

Աստվածատուրի ընդօրինակած Ավետարանից հետո, այլևս մեր ձեռքը չի հասել ոչ մի ձեռագիր գրված Ս. Կանանց վանքում, մինչև ժՁ դարի վերջին քառորդը, որից հետո «Պահանջումն անարինաց խստանայ ի վերայ քրիստոնէից, և միշտ և հանապազ ի հոսման և ի ծորման է աշխարհ ամենայն, և ոչ երբեք հանդիպի դադարման և ետես զի ինչք պակասեն, ստացուածք յափշտակին» (Մովկ, Կայթանց Ավետարան, գրիչ Հովհաննես, 1909)⁴: «Բազում մորմոք և տրտմութիւն էին ի վերայ մարդկանց, կոտորեցան անմեղ գահինք» (Մովկ, Մպատ վանքի Ավետարան, 1425)⁵:

Նվ այսպես, ոչ միայն Մովկաց աշխարհում, այլև քաղմաթիվ տեղերում «Աւերեցաւ աշխարհս ամէն ի անարէն Թուրքմանէն և Զ (6) տարի է, որ պատարագ չէ եղել ի ծովու քուրս ամէն» (Թովմա Մեծոփեցի, Մեծոփ վանք, 1427)⁶: «Ջերկիրս Հայոց Աղթակից... մինչև Բաղէշ անմարդարեակ արարեալս Եւրեանկիւք աշխարհս մերկ և բոկ և սովալընուկ տարաշխարհիկ եղեալ... աշխարհս մեր անբաւ, և սեղանք և դրոնք եկեղեցեաց մերոց տապարեալ, և սպասք արքութեանցն գերի վարեալ և արհեստագութիւնքն Աստուծոյ լոնալ ի բոլոր երկիրս մերս (Աղթամար, 1425)⁷: Գրիչներէրց բերված այս մեջբերումները լրիվ չափով չեն արտայայտում հայ ժողովրդի ծանր կացութիւնը:

Մովկսի Առինչ գյուղում 1534 թվականին գրված մի Ավետարանի հիշատակարանում անանուն գրիչը գրում է. «Մեծաւ ահիւ և դողութեամբ գրեցի յԱւետարանս, քանզի թշնամիք էին միմեանց տէրն Մովկաց՝ և տէրն Ջերմաձորոյ և Ոստանի և մերձ և սահմանակից էին միմեանց Առինչ և Ջերմաձոր և յոռժամ երեկոյ լինէր, ի մտանել արեղական փախչեք ի ծերպս վիմաց, ի ծառատունկս և ի Թուիս անկանինք և ի յահէ ոչ ոք կայր ի քուն»⁸:

Գրչութեան արվեստը նոր թափ ստացավ Մովսում ժՁ դարի 70-ական թվականներէրց: 1579 թվականին Ս. Կանանց վանքում գրիչ Առաքելը հանգես է գալիս որպէս գրիչ և կազմող մի Ավետարանի, որն ըստ Ն. Լալայանի, գրված պետք է լինի ժՆ դարում⁹:

² Նույն տեղում, էջ 95:

³ Նույն տեղում, էջ 340:

⁴ Նույն տեղում, էջ 361:

⁵ Նույն տեղում, էջ 326:

⁶ Մ. Լալայան, «Արտօր Հայաստան», Կ. Պոլիս, 1883, էջ 147—150:

⁷ Ն. Լալայան, «Թուրքական հայերէն ձեռագրաց վաստակներ», էջ 335—340:

² Ն. Ս. Խաչիկյան, «ԺՂ դարի ձեռագրերի հիշատակարաններ», էջ 534):

³ Ն. Ս. Խաչիկյան, «ԺՆ դարի ձեռագրերի հիշատակարաններ», էջ 115—116:

Ավետարանի ընդարձակ հիշատակարանում Առաքել քահանան հանդես է գալիս որպես գրիչ ու կազմող և երկարորեն խոսում է ստացող հոգա Կարապետի և նրա ծնողների, եղբայրների և ազգական կանանց մասին, դալց ոչ մի խոսք չի ասում իր մասին:

1581 թվականին Ս. Կանանց վանքում Առաքել արեղան գրում է մի թեմայամաւորք, որի հիշատակարանում խոսում է իր եղբայր Ստեփանոս քահանայի մասին: Թեմայամաւորք—ի ստացողներն են Հովսեփի և Մարգարոսի որդիներ մահտեսի՝ Տեր Մարտիրոսը և Տեր Աղամբը¹⁰:

Ստեփանոս վարդապետը, ի վաշելումն Կարապետ եպիսկոպոսի լկը գրէ Աւետարան մը ի յերկիրս Մոկաց, ի մեծափառ և հուսկաւոր անապատիս որ Ս. Կանանց վանք կոչի, ընդ հովանեաւ Ս. հայրն և Ս. Կարապետին, ի թվին Ռէն (1586)՝¹¹:

1595 թվականին Նորից հանդիպում ենք Ս. Կանանց վանքում գրված մի Ավետարանի, որի գրիչը մեզ ծանոթ Առաքել արեղան է: Նա շատ ջանք է դործադրել րարձր կատարելության հասցնելու գրչության արվեստը սույն վանքում: 1595 թվականին գրված Ավետարանը բարեբախտաբար անվնաս է մնացել և այժմ գտնվում է Մատենադարանի 5437 համարի տակ, պահպանված լավ վիճակում: Ավետարանի հիշատակարանում գրիչը տալիս է իր մասին մի քանի տեղեկություններ, որից հայտնի է դառնում, որ Առաքելի ծնողներն են եղել Ստեփանոս քահանան և մայրը հանում, եղբայրը Ստեփանոս քահանա, թույրը Ալամ և նրա որդին Ներսես կրոնավոր, և վերջապես պապը Վարդան քահանա: Առաքել գրչի ուսուցիչն է եղել Կարապետ հյաթեցին: Այսպես, մեր առաջն է գտնվում գրագետ մի ընտանիք, որից երկու եղբայրները՝ Առաքելը և Ստեփանոսը, ունեն գրչագրական երկարամյա փորձ և նրանց գրչության վայրը հանդիսացել է սերկանաման և լուսանկար անապատս, որ Սուրբ Կանանց վանք կոչիս:

Առաքելի և Ստեփանոսի նախնիքները նույնպես գրագիւն են գրչության արվեստով և նրանց անունները սերտորեն կապվում են Քոնստանդնուպոլսի Ավետարանների գրիչների և ծաղկողների հետ: Քոնստանդնուպոլսում է Ս. Կանանց վանքի հանդիպակաց կողմը և վանք

թից անշատվում է Սեպա գետով: Հավանական է, որ Առաքել գրչի նախնիքները Քոնստանդնուպոլսում են եղել Ս. Կանանց վանքը որպես գրիչներ՝ ձեռագրեր ընդորինակելու և կամ որպես դասատուներ՝ վանքի աշակերտներին սովորեցնելու համար գրչության արվեստը: 1595 թվականին գրված Ավետարանի ծաղկող հաշատուր հեղացին հիշատակում է իր աշակերտների անունները՝ Քլազարի Վրաստանցուն և Ասլան Վանեցուն: ԺՁ դարի վերջին, որպես գրչության վայր, Ս. Կանանց վանքի և գրիչ Առաքելի անունը արդեն դուրս էին եկել Մոկսի շրջաններից և տարածվել Վասպուրականում և շրջակայքում: Վասպուրականի խոշաները մեծ ուշադրություն էին դարձնում իրենց պատվիրած Ավետարանների գրչության արվեստին: 1595 թվականի Ավետարանի հիշատակարանում կարգում ենք, որ ստացող Քեոշա Ախիջան, ի յերկրին Վասպուրականի, ի աստուածապահ քաղաքի որ կոչի Վան..., հտուս զարդարել Ս. Աւետարանս ոսկով ու լաճվարտով, այլ երանգ երանգ և զանազան գեղատեսիլ գոյնով, ի՞նչ (24) տնաւրինականքն և Ժ (10) համարաբարառքն և զ՛ (4) աւետարանիքն և զ՛ (4) խորանքն և զմանգր սքանչելագործութիւնքն և զթփերն և զծաղկադերն և զառաջին տողերն և զահեղահորաշ անուանքն և զՅիսուս, զՔրիստոս Տեառն Աստուծոյ մերոյ, զամէնն լիապէս հտ ոսկով և լաճվարտով նկարել, զոր լի է առատապէս արժէ ճ (100) ապատիկ և Ռ (1000) ապատիկ Ս. Աւետարանս...: Ավետարանի ծաղկողն է աստուանունս հաշատուր հիւզանցին: Յիշեցէք ինձ և ծնողաց իմոց և ուսուցանող վարդապետին իմոյ Մարտիրոս քաջ փիլիսոփային...: հաշատուրը խիզանցի էր և սովորած հիւզանում, հայտնի ծաղկող Մարտիրոս վարդապետի մոտ, այնուամենայնիվ նա ավելի ծաղկել է Մոկսում և ավելի շատ աշխատել է մոկացի գրիչների հետ, և դրա համար էլ նրա անունը սերտորեն կապվում է Մոկաց աշխարհի գրչության արվեստի հետ: 1595 թվականի Ավետարանը Մոկաց ձեռագրերի մեջ հանդիսանում է հազվագյուտ օրինակներից մեկը: Այս Ավետարանից հետո, դարձյալ շուրջ 100 տարի Ս. Կանանց վանքից և ոչ էլ Քոնստանդնուպոլսի մեր ձեռքը չի հասել ոչ մի ձեռագիր:

1691 թվականին Մոկսի Սեկանց գյուղում գրվում է մի Ավետարան Մխիթար գրչի կողմից, լընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Գէորգայ զօրավարին: Սույն Ավետարանը այժմ գտնվում է Մատենադարանում 6083 համարի տակ:

Սույն թվականին Մոկաց Բլենց գյուղում, գրիչ Միքայելը իր Ավետարանի հիշատակա-

¹⁰ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտ, Մոկսի Տեր-Մովսիսյանի արժիվ, թղթապահակ 21, փաստաթուղթ 62:

¹¹ ՏՃ՝ 2. ն. Ակիւնյան, «Հայկական հիշատականաց ի հավաքման Գեղամ էջնեղիս» — 2. Ոսկյան, «Վասպուրական վանքի վանքերը», Գ. էջ 889, վիճակնա, 1947:

բանում գրում է. «Եղև շարժ, բազում տեղիք
փլան, բազում մարդիկ մեռան, և եղև հեծել
շարժութիւն: Մոկաց պարոն գնաց ի վերայ
յՈղմա, և գոշարն թալան երեր, և յետոյ
յանկարծակի եկաւ Բոխտան, ի վերայ Մո-
կաց, ի յայտնութիւն բոլորին զՅիգիձոր աշ-
րեցին, բազում աւար հարին, յետոյ Մոկաց
Ջինալրեկն գնաց զԲոհտանից գիւղոքէք աւե-
րեց, զՍեպ կպոց, զԵկեղեցին քակեց, զԱգլը-
վան թալանեց, զԿճաւ, զՀառջան և զՄակնի
հարկատու արար»:

ԺԹ դարի առաջին կեսին, երբ բորբոքվե-
ցին նորից քրդական բեկերի միջև ներքին
կռիվները, ժանր հարվածներ ստացան Սեպա
ձորի հայկական գյուղերը, այդ թվում և Ս.
Կանանց վանքը, որը մնաց խանգարված վի-
ճակում մինչև 1900-ական թվականները, երբ
Աղթամարի կաթողիկոսության փոխանորդ
Արսեն վարդապետի կողմից վերակառուց-
վեց:



ՆՅՈՒԹԵՐ ԲՈՒԼՂԱՐԻՈ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹԵՆՆԵՆ

1. ՆՈՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ԲՈՒԼՂԱՐԻՈ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՑՑԱԼԻ ՄԱՍԻՆ

Վերջերս Մյունխենի մեջ լույս տեսավ գերման արևելագետ Հերբերտ Ու. Դուդայի «Die protokollbücher des Kadiamtes Sofia», München 1960, պատմական խոշոր հատոր, որուն մեջ ամփոփված են օսմանյան տիրապետության շրջանին Սոֆիա քաղաքի նահանգալիկ դատարանի որոշմանագրերը:

Քուրք դատարանի այս հին արխիվը պատկած էր Սոֆիայի քաղաքալիկ զրազարանին մեջ և թրքագետ պրոֆեսոր Գլըրով, որ գրադարանի տնօրենն էր, թարգմանած էր բուլղարերենի:

Քրքական փաստաթուղթերու այս թարգմանությունը առաջին անգամն է, որ լույս կտեսնեն Մյունխենի մեջ և անկից դեռ մեկ օրինակ միայն Սոֆիա եկած է և այն ալ կգտնվի Բուլղարական գիտություններու ակադեմիայի կից պատմագիտության ինստիտուտի պրոֆ. բյուղանդագետ Իվան Դուլյենի ղեկավարությամբ մոտեն հետաքրքրվող մըն է և կապ կպահանջի Հայաստանի պատմագիտական ինստիտուտի հետ, վերջերս մեզի ջուլջուտով ալ հրատարակությունը, որմե քաղեցինք Սոֆիայի հին հայերուն վերաբերյալ հետևյալ հատվածները, որոնք բավական շահեկան են բուլղարահայոց պատմության համար:

Սոֆիայի մեջ, օսմանյան տիրապետության ժամանակ, կազմավորյալ հայ համայնքի մը

խոսքը առաջին անգամ կրնեն ճանապարհորդ Հանս Դերնշվամար 1553 թվականին և հայոց թիվը կհաշվեն 1 000-ն ավելի, իսկ այդ թվականին մինչև 1640, շուրջ 90 տարի, որեւէ տեղեկություն չունինք, լուր կմնայինք այդ շրջանին համար (տե՛ս «Սոֆիայի հայերը» «էջմիածին» ամսագիր, 1960, ն, էջ 46): 1640-ին կաթողիկե եպիսկոպոս Պետր Բոգդան Սոֆիայի մեջ կգտնեն 200 տնվոր հայ իրենց գետնափոր եկեղեցիով, իսկ 1673-ին ալ կաֆայեցի Մարտիրոս վարդապետը կանքի Սոֆիային, նրուադեմ երթալու համար և կտեսնեն Սոֆիայի հայոց եկեղեցին և Տեր Հունան քահանայն:

Այժմ, գերման արևելագետի այս նոր հրատարակությամբ, ձեռքի տակ ունեցանք Սոֆիայի հայոց 1550 թվականին մինչև 1620 թվականի անժանոթ մնացած ժամանակաշրջանի առևտրական գործողություններ, նոտանուններ և այլն:

Փաստաթուղթ թիվ 129. գրված 1550-ին, հուլիս 21-ին, Սոֆիայի թուրք դատարանին մեջ. «... Այազյոզ հայը, որ որդին է սոֆիաբնակ հայ Ասուլ Փանի (արդյո՞ք Աշուղ Փանի է, Փանոս?)». կպարտի 420 աքշե (տոակ) Պետրի որդի Նիկողային:

Փաստաթուղթ թիվ 426. սուլթանական հրովարտակի պատճեն, գրված Ասիտանի մեջ (Կոստանդնուպոլիս) և ուղարկված Սոֆիայի, Ֆիրիպեի և Զադարայի Ասիկի (Ստ. Զանե-

Փակագծերու մեջ տրված քուրք բաժանորդությունները իմ կողմն են—Ա. Փ.

րա) դատավորներուն 1610 թվականի փետրվար 1-ին, «Կհրամայեմ, որ հավաքեք վերկիի ճիւղին» (գլխահարկը) 1610 թվականի մարտին մինչև 1611-ի մարտին համար այն հայերեն, որոնք Անադոլուն եկած են և կրեակիի ձեր նահանգներուն մեջ»:

Փաստաթուղթ թիվ 552, սուլթանական հրովարտակի պատճեն, գրված Կոստանդնուպոլսո մեջ և ուղարկված Սոֆիայի դատավորին 1619 թվականի մարտ 8-ին. «Սոֆիայի դատավորին Կհրամայեմ, որ հավաքեք գլխահարկը 1618 թվականի դեկտեմբերին մինչև 1619 թվականի դեկտեմբերին համար այն անհավատ հայերեն և հույներեն, որոնք եկած են Անադոլուն և ցրված են Սոֆիայի նահանգին մեջ, որոնց յուրաքանչյուրը պետք է վճարե տարեկան 210 ստակ»:

Փաստաթուղթ թիվ 647, գրված 1611 թվականի դեկտեմբերին, Սոֆիայի դատարանի մեջ. «Սոֆիայի Բանիշորա թաղամասի բնակիչներին Հյուսիսի ողդի Մեհմեդը դատարանի մեջ, Գյուլջամի թաղամասի բնակիչ ոչ իսլամ հայ Մուրադի ողդի նազարին առջև հայտարարեց, որ 1 200 ստակի ծախած է իր 5 չափալքը (5 աշխատավորներու մեկ օրվան մեջ փորած տարածություն) այգին և ստացած է ամբողջ գումարը, որով այգին այսուհետև կպատկանի ոչ իսլամ հայ նազարին»:

Փաստաթուղթ թիվ 862, գրված 1620 թվականի փետրվար 27-ին, Սոֆիայի դատարանի մեջ. «Փիայե խալիֆին, որ մյուսթեվելլին է (վերակացու) էմիրջահ կոչված վաքոֆին, Սոֆիայի դատարանին մեջ Իսկենդերի (Ալեքսան) ողդի Սեֆերի առջև հայտարարեց, որ 2 400 ստակի ծախած է իր տունը, որ կգտնվի Փարուլլի Դրական կոչված թաղին մեջ և ամբողջ գումարը առած է, որով այդ տունը այսուհետև կպատկանի հայազգի Սեֆերին»:

Փաստաթուղթ թիվ 884, գրված 1620 թվականի փետրվար 5-ին, Սոֆիայի դատարանի մեջ. «Ոչ իսլամուհի Կալոյան, որ աղջիկն է (անընթեռնելի)-ին, և կապրի Կալոյան կոչված թաղին մեջ, դատարանի մեջ, ոչ իսլամ Հակոբի ողդի հայ Մկրր փափասին (Տեր Մկրտիչ Հակոբյան) առջև հայտարարեց, որ Մկրր փափասին ծախած է 20 000 ստակի իր արսան (քաղաքի մեջ հողամաս), մեջը գրտնրված բոլոր կազմածներով (շենք, ծառ և այլն), որ կգտնվի Կալոյան մահալան և

ստացած է ամբողջ գումարը, որով այսուհետև հայոց փափասն է տերը այդ հողամասին, զոր պիտի գործածե իր կամքին և նպատակին համաձայն»:

Մանքաթլույն հողվածագրին. — Օսմանյան թուրքերու քով հին ատեն սովորություն կար, որ ռայա հպատակներուն աղոթատեղիի շինության արտոնությունը կամ առուծախը կըլար քահանային կամ աղգին վերակացուին անունովը, որ կկոչվեր միլլեթ վեֆիլի կամ մյուսթեվելլի. որով կհետևեցնեմ, թե թիվ 884 փաստաթուղթին մեջ հիշված հողամասը, որ հայոց քահանան գնած է 20 000 ստակի խոշոր գումարով մը, շատ հավանական է ժողովրդական հանգանակություն մը գնված է աղոթատեղի մը կառուցանելու համար Անադոլուն նոր եկած և Սոֆիայի Կալոյան և Գյուլջամի փողոցներուն մեջ ապրող հայերուն համար:

Այստեղ հարց կծագի սակայն, թե 1600-են առաջ Սոֆիայի մեջ ապրող 1 000-ե ավելի» հին հայերը, զորս տեսած է Հանս Դերնշլամսը, արդյոք եկեղեցի չունեին, թե չէին ուղած իրենց եկեղեցիներն ներս ընդունել նոր եկող հայերը իբրև ոչ ուղղափառներ...

Սա կխորհրդիմ, թե նախապես եկած հայերը հունադավան կամ հայ հռոմե եղած ըլլալով, հեռացած էին Հայաստանյայց Առաքելական եկեղեցիներն, և ադոր համար ալ վեճ կար հին և նոր հայ խմբավորումներու միջև, ինչպես կվկայե կաթոլիկ եպիսկոպոս Պետր Բոգդանը 1640-ին, թե «Սոֆիայի հայերը 200 տրեվոր էին, որոնք ունեին իրենց առաջին եկեղեցիները, բայց իրարմե բաժնված էին և մեկը մյուսին կմեղադրեր իբր հերետիկոս» (տե՛ս Спик. «Архив за поселищни проучване», год. II, кн. 2, 1930—1940 г. г., стр. 182—183):

Ուրեմն այլևս պարզ է, որ Անադոլուն 1610-ին Սոֆիա մեկնող նոր հայերը, հավատարիմ մնալով Հայաստանյայց Առաքելական եկեղեցիին, 1620-ին Տեր Մկրտչի անունով հող գնած են Կալոյան փողոցին ծայրը և շինած են իրենց գետնափոր տնակ-եկեղեցին: Եվ անտարակույս այս եկեղեցիին խոսքն է, որ կրնե կաֆայեցի Մարտիրոս վարդապետը 1673-ին, որուն քահանան էր Տեր Հունանը:

Եվ ահա այդ կիսով չափ հողին մեջ պահված Ս. Աստվածածինը, իբր ռաուն աղօթից ամենայն հաւատացելոց և ամուր կուուան ազգապահպանման, դարեր շարունակ հավատք և հույս ներշնչած և մխիթարած է տառապանքով հայ զաղթական բազմությունները և չէ թողած, որ անոնք մոռնան հայրենի հավատքը և մայրենի լեզուն: Իսկ այն հին հայերը (1550-ական թվականներուն), որոնք հեռա-

¹ Ժիզյե արարեբնե տուրք, հարկ կնշանակե: Արաբները այս տուրքը նախապես կհավաքեին ամեն մեկ տուն (հայերը ծովս կըսեին տուն իմաստով, օրինակ՝ քահանային ծովսերը), բայց արարեբնը տեռան, որ մեկ տան մեջ 5—8, երբեմն ալ ավելի շար մարդիկ կան, որով ճիշդին փոխեցին մարդ զուխի, գլխահարկի: Հին հռոմեացիներն ալ ունեին գլխահարկը:

ցած էին Լուսավորչի լույսն և մոռցած մայրենի լեզուն, դարերու թանձր խաղաբին մեջ խալատ կորսվեցան և իրենց գոյութենեն առկայծող հետք մ'անգամ չկրցան թողուլ:

2. ՀԱՅՆՐԵՆ ԸՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳԻՐ ԱՎԵՏԱՐԱՆ ՄԸ

Առֆիայի Վախի Կոլարովն պետական մատենադարանի արևելյան բաժանմունքին մեջ կա հայերեն ձեռագիր Ավետարան մը, կաշեպատ տախտակյա կողքով, որուն ծավալն է 28,5×23,5 սմ., հաստ մագաղաթյա 267 թերթերով: Վերջին մագաղաթյա թերթին ստորին կեսը կտրված է: Ամեն մեկ էջը ունի 2 սյունակ, 17-ական տող, իսկ տառերը՝ 5 միլիմետրանոց երկաթագիր:

Ավետարանին առաջին թերթը դատարկ է, հաջորդ 2 թերթերը՝ ցուցակագրերը սրբված, ջնջված են (թերևս մասնավոր դեղով) և վրան գեղեցիկ քուրագրով գրված է Ավետարանը նորոգել տվող պատվիրատուն հիշատակարանը ԶԴՆ (1346) թվականին, երբ Թեոդուպոլիսը (էրզրումը) սուրով և հուրով սանապատ եղել մարդոյ և յանասնոյ, ի լազգէն շաքարու և իսմայէլացւոցա: Ահա այդ ծանր օրերուն խոսրովշահը՝ նորոգել տված է այս Ավետարանը իր և իր եղբոր՝ Երիինշահին և իր ծնոդաց՝ Ռումելիին և Թագուհէ պր. Շահին և սիրա տիկնայ յիշատակին հաղտեաց գաւառի Բաբերդ յանառիկ դղեակին², առ ի դրունս Սրբոյ Աստուածածնիս, եկեղեցւոյ Սրբոյ Հրեշտակապետաց. ի վերայդիտողութեամբ Տեառն Մխիթարայ³ և ի հայրապետութեան այսմ դաւառի Տր. Սահակայ և Տր. Ստեփաննոսի և ի թաղաւորութեանն Հայոց Կոստանդին⁴:

¹ Մոնղոլներու տիրապետության օրով և անկն հետո ալ վրաստանի և Հյուսիսային Հայաստանի տեղացի հայ ֆեոդալները հաճախ կոչված են «Եահ», «Եահ-Արմեններ», «Եահ-Մուրադ» և այլն: Արդյոք խոսրովշահն ալ Բաբերդի շրջանի հայ ֆեոդալն է (տանուտեր), որուն հայրն ալ Ումիկշահ, իսկ եղբայրը Երիինշահ կոչված են հիշատակարանին մեջ:

² Էրզրումեն դեպի հյուսիս գտնվող Բալբերդ քաղաքն է:

³ Մխիթար Գոնեբեցի կամ Սասունցի կոչված կաթողիկոսն է (1341—1355):

⁴ Կիլիկիո հայոց Կոստանդին Բ թագաւորն է, որ իշխած է 1344—1364 թվականներուն:

Այս հիշատակարանը գրված է մագուր բորագրով, ձեռագիր սուտանուն սկի. ՅՈՏ.5 նաղաշի», որով կհաստատվի, թե Ավետարանը նորոգված և կաղմված է 1346-ին Բաբերդ դղյակի տանուտեր խոսրովշահի հրամանով: Բայց Հովհաննես սարկավազը Ավետարանին վերջին 3 էջերուն երկաթագրերը սրբած, ջնջած է, որպեսզի իր հիշատակարանը գրելու Ուրեմն Ավետարանը ավելի հին է: Սակայն սարկավազը իր հիշատակարանին մեջ չէ հիշած, թե իրմե առաջ ո՞վ գրած է այդ Ավետարանը, ո՞ր թվականին և որո՞ւ ծախքով:

Ավետարանի 200-րդ թերթին վրա ալ կա համառոտ և անկանոն արձանագրութիւն մը ևս, որ Հովհաննես սարկավազի հիշատակարանին նման Ավետարանի ջնջված, սրբված երկաթագրերուն վրա գրված է: Ուրեմն այս վերջին, ավելի ուշ գրված է և կնմանի համբալ գրչի մը ձեռագրին, մեծ մասամբ անընթեռնելի: Հազիվ կարելի եղավ կարդալ հետևյալ տողերը. «Վերջաւորութիւն Յոհաննէ ժԸ, սկիզբ Ղուկասոս ժԼԲ, Մայտեոսին (?) ժԿԶ, վերջ գգործս Ղուկասոս ՂԸ...» և այլն:

Այս տողերը և տառերը գրված են ցույց տալու համար, թե ո՞ր Ավետարանը ո՞ր էջն կսկսի և ո՞ւր կվերջանա: Ուրիշ հիշատակութիւն մը կարելի չեղավ կարդալ, տրված ըլլալով, որ արձանագրութեան մեծ մասը անընթեռնելի է:

Հետևաբար, երկաթագիր Ավետարանը գրել տվող պատվիրատուն, գրչագրին և ո՞ր թվականին գրված ըլլալը մեզ անծանոթ կմնան:

Այնուամենայնիվ, կասկածի տեղի տվող շարժառիթ մըն է Ավետարանի վերջին թերթի ստորին կեսին մկրատով կտրված և առնրված ըլլալը: Գաղտնիք մը, որուն անտեղյակ են նաև մատենադարանի պաշտոնեւորները և նույնիսկ բաժանմունքի ղեկավար դոկտ. Մ. Ստոյանովը, որ ցավով հայտնեց, թե որեւէ արձանագրութիւն ալ չունին, թե ո՞ր հայը կամ ո՞վ հանձնած է այս հնագույն Ավետարանը բուլղար պետական մատենադարանին:

Առֆիայի Վախի Կոլարովն պետական մատենադարանի սեփականութիւն այս հին ձեռագիր Ավետարանը մեր հնագույն Ավետարաններեն մեկն է և 4-րդ կամ 5-րդ տեղը կգրավի մեր հնագույն ձեռագիր Ավետարաններուն մեջ:

⁵ Սարկավազ Հովհաննէս:





ՄՐԱ ՄԱՐԿՈՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՊԱՆԱՔԱՐ ՄԸ ԿԱՐՆՈՒԲԱԴԻ (ԲՈՒԼՂԱՐԻԱ) ՍՈԿՈԼՈՎՈ ԳՅՈՒՂԻՆ ՄԵՋ

Սոֆիայի բուլղար լեզվի ինստիտուտի գիտական ավագ աշխատակից պր. Իվան Գլըբովի կողմից տրված տեղեկության վրա, վերջերս հայտնի եղավ, որ Կարնոբադ քաղաքի շրջանի Սոկոլովո գյուղին մեջ կգտնվի հայկական տապանաքար մը։

Տապանաքարի արձանագրությունը ուսումնասիրելու նպատակով այցելեցինք հիշյալ գյուղը։ Սոկոլովո, որուն հին անունը Դուվանշա է, կգտնվի Կարնոբադ քաղաքի արևելյան կողմը, 7 կիլոմետր հեռու, Թուրքերու կողմից հիմնված, գյուղը նախապես եղած է ագարակը Արքա անունով Թուրքի մը։ Ագարակին շուրջը կառուցված էին 20—30 տուններ, ուր կրնակին ագարակի մշակները։ Անցյալ դարու վերջը և ներկա դարու սկիզբը այստեղ կգաղթեն նովազագորայի և Զիրքանի շրջաններին բուլղարներ, իսկ Թուրքերը հետզհետե կհեռանան։


Գյուղի հյուսիսային ծայրը կգտնվի ոչ հեռավոր անցյալի մեջ կառուցված աղբյուր մը, որուն ավազանին առջև գտանք հայերեն արձանագրությամբ տապանաքար մը։ Տապանաքարը ուղիղ վեցանկյուն է և լավ պահպանված։ Շինված է կանաչ քարե, հետևյալ ծավալով. 1,50 մ. երկայն, 0,52 մ. լայն,

0,32 մ. հաստ։ Տապանաքարի վրա կա լավ պահպանված ութը տողնոց արձանագրություն մը, իսկ անոր տակ հավասար մեծությամբ երկու ուռուցիկ նոճիներ։ Տապանաքարը ունի համադրված ուղղանկյուն կազմող երեք փորագրված գծերն շրջանակ մը (տե՛ս նկարը)։

«Այս է տապան
հանգստեան
Վահրավեցի
Մարութայի
որդի Բարսեղին
որ փոխեցաւ
առ Ա [ստուա] ծ
թվ [իւն] ՌՃԽԷ (1147=1698)»։

Առաջին տողին և երկու անգամ երկրորդ տողին վրա «ա» և «ն», չորրորդ և հինգերորդ տողերու «ա» և «ր», հինգերորդ տողի «ո» և «ր», «դ» և «խ», «ի» և «ն», վեցերորդ տողի «ո» և «ր», «ո» և «խ», ութերորդ տողի «թ» և «վ» տառերը կապգիր են։ Տառերու մեծությունը 3,5—7 սանտիմետր է։

Հայտնի է, որ Մարութան Վահրավեցի է։ Վառնա քաղաքի եկեղեցիի խորանին հտեք կգտնվի 1746 թվականի հայերեն տապանա-



գրություն մը, որուն մեջ կկարդանք «Վահրա-
վեցի մահտես Ղեոնդա անունը»¹։

¹ Արա Մարկոս, «Վասնայի հայ գաղութը», «Երևան»
թերթ, թիվ 109 012, Մոֆիա, 1980։

Ուրկե՛ բերված է Սոկուրվո գյուղի այս տա-
պանաքարը։ Ըստ տեղացիներու տեղեկու-
թյան, տապանաքարը գետեղված էր «Զիֆ-
իշկա լեռմա» կոչված աղբյուրի մեջ, Արա-
սի ագարակին մոտ։ Նոր աղբյուրի կառու-
ցումեն հետո (20 տարի առաջ), տապանա-
քարը փոխադրված է այժմյան վայրը։ Հիշ-
յալ անձերը հաղորդեցին, թե բնա հին ժե-
րուհիներու պատմության, քարը բերված է
Կարնոքադի ճամբուն վրա գտնված մարգա-
րե տներեն։ «Զիֆիշկա լեռմա»-յի մոտ
կար այսպիսի ուրիշ քար մը ևս։ Տեղիում
վրա քննեցինք ու իսկապես գտանք կիսա-
թաղ նման քար մը ևս։ Քարի երեսին վրա
արձանագրությունը բոլորովին ջնջված է,
սակայն կան ճշտվ նման շրջանակի մը
հետքերը, ինչպես առաջին քարին վրա։

Վերի տվյալները իրավունք կուտան կա-
տարյալ վստահությանմբ ենթադրելու, որ
սույն տապանաքարերը բերված են ատենոք
Կարնոքատի մեջ ապրող հայ գաղութի մը հին
գերեզմանատունեն, որուն մասին միայն չեմ
պատմաբան Կոնստանտին Իրեչեկ կհիշե իր
«Ուղեորություններ Բուլղարիո մեջ» աշխա-
տության մեջ²։

Սույն տապանաքարի արձանագրությունը
առ այժմ միակ առարկայական հուշարձանն
է փաստող, թե իսկական Կարնոքադի մեջ
ապրած է հին հայկական գաղութ մը, որու
մասին մենք ոչինչ գիտենք, ուրկե՛, ե՛րբ
եկած է, ի՞նչ թվով և ե՛րբ անհետացած է։
Կրնանք ենթադրել, որ ինչպես թրքական տի-
րապետության շրջանին կազմված մյուս Բուլ-
ղարահայ գաղութներու, նույնպես և անոք
ծագումը կսկսի ժէ դարուն։

² Др. Конст. Иречек. «Путешествия по Бѣлгар-
иѣ», т. II, 1899 г., стр. 744.





ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Կոմիտասի անվան կվարտեռը Երևանում.—Ավելի քան երկու տարվա բացակայությունից հետո, Երևան է վերադարձել Կոմիտասի անվան կվարտետը: Իր վերադարձի առթիվ կվարտետը համերգ տվեց Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում:

Հանդիսականները ջերմորեն ընդունեցին վաստակավոր կվարտետի անդամներին: Համերգից առաջ Հայաստանի կուլտուրայի մինիստրի տեղակալ Ա. Գասպարյանը ողջունեց տաղանդավոր կոլեկտիվին՝ արտասահմանյան շրջագայության ժամանակ ձեռք բերած փայլուն հաջողության համար և ցանկացավ ստեղծագործական նոր հաջողություններ: Կվարտետը հանդես եկավ նույն ծրագրով, ինչ ծրագրով համերգներ էր տալիս Միացյալ Նահանգներում:

Հայաստանի գերագույն սովետի նախագահության հրաժանագրով կվարտետի մյուս երկու անդամներին և՛ Թ. Դավթյանին և Գ. Թալալյանին, ջնորհված է հանրապետության ժողովրդական արտիստի պատվավոր կոչում:

Ականավոր քանդակագործի հորեյանը.—Լրացավ ականավոր քանդակագործ Արա Սարգսյանի ծննդյան 60-ամյակը և ստեղծագործական գործունեության 40-ամյակը:

Արա Սարգսյանը ծնվել է Կոստանդնուպոլսում: Նկարչական կրթությունն ստացել է Փարիզում: 1926 թվականին նա գալիս է Հայաստան և քանկություն հաստատում Երևանում: Ստեղծագործական աշխատանքի հետ միասին, նա նվիրվում է ժանկավարժական գործունեության, դասավանդելով բարձրագույն գեղարվեստական վարժարաններում: Երկար տարիներ եղել է Երևանի գեղարվեստական-թատերական ինստիտուտի տնօրեն: Արա Սարգսյանը հեղինակն է մի շարք գեղեցիկ գեղարվեստական քանդակների և դիմանկարների:

Մայրաքաղաքի գեղարվեստաբեր հասարակությունը ջերմորեն նշեց տաղանդավոր արվեստագետի հորեյանը: Այդ առթիվ նա արժանացավ Առվեստական Միության ժողովրդական նկարչի պատվավոր կոչման:

Հորեյանի օրերին Մոսկվայի գեղարվեստի ակադեմիայի դահլիճում բացվեց Արա Սարգսյանի ստեղծագործությունների ցուցահանդես, որը մեծ հետաքրքրություն առաջ բերեց Մոսկվայում:

Արա Սարգսյանը ընդունված է Առվեստական Միության գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ:

Ենորհայի մտավորականի հորեյանը.—Երևանի գրական-մանկավարժական հասարակությունը նշեց Մորուս (Մարգար) Հասարայանի ծննդյան 60-ամյակը և գիտական-մանկավարժական գործունեության 40-ամյակը:

Մորուս Հասարայանը ծնվել է Ջանգելուռում: Սովորելու ավարտել է Երևանի համալսարանի պատմա-գրական ֆակուլտետը, աշակերտելով ականավոր գիտնականներ Հ. Աճառյանին, Հ. Մանանդյանին, Լեոյին, Մ. Արեղյանին: Այնուհետև իր ուսումը կատարելագործել է Լենինգրադում, զասեր առել հռչակավոր գիտնականներ Ն. Մառից, Հ. Օրբելուց և ուրիշներից:

Վերադառնալով Հայաստան, նա նվիրվում է գիտական և մանկավարժական գործունեության: Վերջին 20 տարում Մ. Հասարայանը աշխատում է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, լինելով հայ ժողովրդի պատմության ամբիոնի ղեկավար:

Մորուս Հասարայանը ճանաչված հայագետ է և արևելագետ: Բացի հայ ժողովրդի պատմությունից, նա ինստիտուտում ավանդում է Արևելքի պատմություն և արվեստի պատմություն:

Նրա արժեքավոր գրականագիտական աշխատությունն է Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի հրատարակությունը 1945 թվականին: Երկար տարիների մանրակրկիտ աշխատանքով Մ. Հասարայանը կարողացել է ճշտել մեծանուն գուլամի բոլոր խաղերի բնագրերը, սրբագրել անցյալի սխալ մեկնաբանությունները, վերլուծել անընթեռնելի քառերը, ինչպես նաև հարապատեր են թարգմանել հայերեն Սայաթ-Նովայի վրացերեն և ադրբեջաներեն խաղերի մեծ մասը:

Մ. Հասարայանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ է:



ԱՐԹՈՒԿԻ ԼՄԲԱՏԱԿԱՆՔԸ
(Է դ ա ռ)

Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան

«Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի».—Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը նորերս հրատարակել է ակադեմիկոս Սուրեն Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի» աշխատությունը: Ինչպես ցույց է տալիս գրքի ենթավերնագիրը, այս աշխատությունը մի փորձ է Ե դարի Ռայկական ջարտելի վերականգնության՝ ժամանակակից ջարտեղագրության հիմունքներով:

Մեծածավալ այս գիրքը, որը հեղինակի երկարամյա ուսումնասիրությունների արդյունք է, խոշոր ներդրում է ունի Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության գործում, մի բնագավառ, որը մինչև այժմ ամենաքիչ ընչ է ուսումնասիրված մեզանում: Գիրքը ջատ ոգտակար կարող է լինել ոչ միայն Ռայկացոյցային, այլև ընդհանրապես Կովկասի և հարևան երկրների հիմնական պատմությամբ և ջարտեղագրության պատմությամբ քաղվողների համար:

Հեղինակը մանրակրկիտ կերպով վերլուծման է ենթարկել Հայկական Ռեազոն «Աշխարհացոյց»-ը, վեր հանելով այդ եզակի գրքի նշանակությունը համաշխարհային ջարտեղագրության պատմության գործում, ինչպես նաև գույց է տվել Հայաստանի ջաղաջական ու տնտեսական վիճակը Զ և Է դարերում:

Ընդարձակ ներածականից հետո, հեղինակը տալիս է «Աշխարհացոյց»-ի մեջ հիշատակված աշխարհագրական վայրերի մանրամասն բացատրագիրը այբբենական կարգով: Այնուհետև նույն կարգով տրված է Հայաստանի բնական հարստությունների՝ ռդտակար հանածոների, բուսական և կենդանական աշխարհի հիշատակությանը ղանկը ըստ «Աշխարհացոյց»-ի:

Լսիստ հետաքրքիր են գրքի Ա և Բ հավելվածները՝ «Իրանցից առաջինը պարունակում է պատմական Մեծ Հայքի և հարևան երկրների ջարտելի ընդարձակ բնագրի գլուխները ըստ «Աշխարհացոյց»-ի, որն ինքնին մի փորձ է այդ բնագրի վերականգնման: Նույն այդ բնագիրը տրված է աշխարհագրաբ թարգմանությամբ:

Երկրորդ հավելվածը ընդգրկում է «Փոքր աշխարհ»-ի (Նամանգների) և զավանների տարածությունը և հաջորդականությունը ըստ «Աշխարհացոյց»-ի:

Վերջում տրված են տեղանուններ, անձնանուններ, ինչպես նաև բուսական, կենդանական և Ռանջային Ռայրստությունների ցանկեր: Իբրև ներդիր առանձին տրված է «Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի» մեծագիր ռդտակար ջարտելը:

Արժեքավոր գիրք.—Հայաստանի գիտությունների ակադեմիայի բնագիտության և տիեզերական պատմության (սուրբուրդը ջնորհակալ խնդիր է դրել իր առաջ՝ կազմել և հրատարակել գիտության և տիեզերական պարզացման) պատմությունը Հայաստանում, սկսած Ռեազոն ժամանակներից մինչև մեր օրերը:

Հիշյալ խորհրդի ուսումնասիրությունների արդյունք է հետևյալն ուսումնական արժեքավոր հատորը, որը վերջին լույս է ընծայել ակադեմիայի Ռատարակությունը «Բնագիտության և տիեզերական պատմությունից» ընդհանուր խորագրով:

Գրքի մեջ պետեղված են Հայաստանի անվանի գիտականների աշխատությունները՝ նվիրված Մատրոֆիկա-

կայի, բժշկության, ֆիզիկայի և գիտության մի ջանի այլ ճյուղերի պարզացման պատմությանը մեր երկրում:

Միջնադարյան բժշկարան.—Հայաստանի գիտությունների ակադեմիան Ռատարակել է միջնադարյան հայ նշանավոր բժշկապետ Գրիգորիի աշխատությունը, որը կոչվում է «Հնուրժին բնության մարդու և նորին ցատոց»:

Գրիգորիան ապրել է Կիլիկիայում ԺԳ դարում: Նա եղել է իր ժամանակի ուսույալ մարդկանցից մեկը, տիրապետել մի ջանի լեզուների, ջաղաբնուտ բժշկական գիտությունների մեջ: Ընդհիվ բազմակողմանի գիտելիքների, նա ուսումնասիրել է իր ժամանակի բժշկական գրականությունը ամենատարբեր լեզուներով և այդ թուրքի հիման վրա գրել իր արժեքավոր բժշկարանը:

Գրքի մեջ տրված են բացատրություններ բոլոր այն հիվանդությունների մասին, որոնք հայտնի են եղել միջին դարերում և դրանից ջատ առաջ, ինչպես նաև այդ հիվանդությունների առաջացման պատճառներն ու նշանները:

Գիրքը բաղկացած է երեք մասերից: Առաջին մասի մեջ նկարագրված են ջերմաստի տարբեր տեսակները և մի ջարք այլ «արտաքին» հիվանդություններ, ինչպես անվանված են հեղինակի կողմից: Երկրորդ մասով տրված են ներքին հիվանդությունների բացատրություններն ու նշանները, իսկ երրորդ մասը նվիրված է հիվանդությունների բուժման հարցերին:

Գիրքը տպագրության է պատրաստել դոցենտ Ա. Կոթլանը, որը և գրել է ընդարձակ ներածական:

Արժեքավոր գիրք.—Երևանի տեսական համալսարանի Ռատարակությունը լույս է ընծայել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Լ. Պարսադանի մի ջատ արժեքավոր աշխատությունը, որը կոչվում է «Հնահայերի մասնակցությունը Գավիթ բեկի ապստամբությանը»: Գրքում տրված են նոր նյութեր և փաստաթղթեր ԺԸ դարի Ռայ ապստամբական ջարժումների վերաբերյալ:

Լեհաստանում և Արևմտյան Ուկրաինայում ապրող հայերը իրենց մասնակցությունն են բերել Հայաստանում որակ առած ապգային ապստամբական ջարժումներին, որոնց գլխավորում էր Նավիթ բեկը: Այն ժամանակ եվրոպական երկրներում ապրող Ռայերը ևս ջերմ ցանկություն են Ռայտել Հայաստանի վերադառնալ և բնակություն հաստատել այնտեղ, երբ Ռայրց Ռուր ապստամբի ուսույ լոնակալների լծից:

Հայաստանի ճարտարապետների ժողովը.—Վերջերս Երևանում տեղի ունեցավ Հայաստանի ճարտարապետների ընդլայնած ընդհանուր ժողովը, մասնակցությամբ արվեստի տարբա բնագավառների ներկայացուցիչների: Ժողովը նվիրված էր արդի ճարտարապետության մի ջարձ խնդիրների ջննարկման: Այն տեղեց 4 օր:

Ժողովը սկսվեց արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Միքայել Մալմանյանի ղեկցությամբ, որի նյութն էր «Սովետական ճարտարապետության ապգային առանձնահատկությունները արդի պայմաններում»: Գեկուզման ցույցը բացվեց մտքերի լայն փոխանակություն:

Ելույթ ունեցողները՝ Նշեգին, որ տվեցին ճարտարապետությունը անախընթաց վերելքի ջրջան է ապրում և խոշոր նվաճումներ է օծեց բերել ապգային ճարտարապետության կարգաճանդ գործում: Դրա հետ միասին մեր

ճարտարապետությունը դեռևս ունի պզտի թերություններ՝ հատկապես քաղաքաշինության, կառուցումների հարմարավետության և ծավալների նպատակահարմար օգտագործման տեսակետից: Նշվեց, որ ճարտարապետությունը պետք է տարվի միայն գեղեցիկ ձևերով, այլ պետք է նախ և առաջ հաշվի առնի ու քավարարի ժողովրդի կենցաղային պայմանները:

Ժողովում խոսվեց նաև նորարարության և Արևմուտքի աղյու ճարտարապետության նորագույն ձևերի ընդօրինակման մասին: Սակայն բոլորը հանգեցին մի ընդհանուր եզրակացության, որ նորարարությունը չի կարող կտրված լինել հայ դասական ճարտարապետության ավանդություններից և որ դրա հետ միասին չի կարելի թույլ տալ ճարտարապետության հին, արխայիկ ձևերի մեխանիկական կրկնություն: Պետք չէ տարվել նաև Արևմուտքի ճարտարապետական ձևերի միակողմանի և տառացի ընդօրինակմամբ, այլ խնդրին պետք է մոտենալ ստեղծագործական յուրացման տեսանկյունով:

Երևանի նոր հատակագիծը—«Երևաննախագիծ» ճարտարապետական արհեստանոցը ներկայիս գծում է Հայաստանի մայրաքաղաքի նոր հատակագիծը: Ըստ այդ հատակագծի, նախատեսվում է, որ 1980 թվականին Երևանը կունենա մեկ միլիոն բնակիչ:

Երևանի առաջին հատակագիծը կազմել էր ակադեմիկոս Ալեքսանդր Թադևոսյանը 1924 թվականին: Ըստ այդ հատակագծի, քաղաքն ունենալու էր 150 000 բնակիչ: Սակայն նույն այդ հատակագիծով նախատեսված ժամկետի վերջում Երևանն ուներ 200 000 բնակիչ:

Հարկ եղավ կազմել մայրաքաղաքի երկրորդ հատակագիծը, որի համաձայն Երևանը 1947 թվականին պետք է ունենար 350 000 բնակիչ: Չանցած մի քանի տարի, 1951 թվականին, հարկ եղավ վերանայել նաև այդ հատակագիծը, հաշվի առնելով քաղաքի բուռն պարգագման պահանջները:

Այդ երրորդ հատակագիծով նախատեսված էր, որ 1965 թվականին Երևանը կունենա 450 000 բնակիչ, մինչդեռ 1959 թվականի հունվարի 15-ի մարդահամարի տվյալներով քաղաքն արդեն ուներ 509 000 բնակիչ, իսկ ներկայիս այդ թիվը հասնում է 623 000-ի:

Մայրաքաղաքի պարգագման այս թվերը հիմք են տալիս ենթադրելու, որ Երևանը 1 000 000-ի կհասնի 1980 թվականից առաջ:

Շարժական արվեստանոց.— Եւրօք 20 տարի է, ինչ Հայաստանի նկարիչների միության կից գործում է նկարչական ջարժական արվեստանոցը: Այն պետեղված է մի խոշոր ավտոբուսի մեջ և ունի անհրաժեշտ հարմարություններ նկարիչների ու քանդակագործների աշխատանքի համար: Յուրօրինակ այս արվեստանոցի հիմնադիրը եղել է ժողովրդական նկարիչ Գաբրիել Գրուշյանը: Այդ արվեստանոցի գործունեության իրենց մասնակցությունն են քերել Հայաստանի գրեթե բոլոր ականավոր նկարիչները՝ սկսած Մ. Սարյանից:

Արվեստանոց-ավտոբուսը ջրջում է Հայաստանով մեկ, այցելում հեռավոր գյուղերն ու ավանները: Ուղևոր նկարիչները հնարավորություն են ունենում մոտից դիտելու և ծանոթանալու մարդկանց, նրանց աշխատանքին, գեղեցիկ

տեսարաններին, տեղում գծելու իրենց ապագա ստեղծագործությունների սկզբնապատկերը (հարկվել):

Հաճախ արվեստանոցի ուղևորները գյուղերում հանդես են գալիս հանրամատչելի դասախոսություններով արվեստի տարբեր ճառերի շուրջը, կազմակերպում են ցուցահանդեսներ ջրաներում:

Բնակարանային շինարարություն.— Անցյալ 1962 թվականի ընթացքում ամբողջ Հայաստանում կառուցվել և օգտագործման են հանձնվել 369 000 քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ բնակարաններ: Այդ տարածությունը 63 000 քառակուսի մետրով ավելի է, քան 1961 թվականին կառուցվածը:

Ընթացիկ 1963 թվականին պետք է կառուցվեն 406 000 քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ բնակարաններ պետական ներդրումների հաշվին և 750 000 քառակուսի մետր կոոպերատիվ միջոցների հաշվին:

Վերջին չորս տարում, 1958—1962 թվականներին ընթացքում մեր հանրապետությունում կառուցվել է այնքան բնակարան, որքան կառուցվել է 1921-ից մինչև 1957 թվականների ժամանակաշրջանում:

Բնակարանային շինարարությունը լայն ծավալ է ստացել Երևանում: 1962 թվականին նախատեսված 173 000 քառակուսի մետր փոխարեն կառուցվել է 180 000 քառակուսի մետր բնակելի տարածություն: Մեկ տարվա ընթացքում բնակարան են ստացել 6 000 ընտանիքներ:

Այս տարի մայրաքաղաքում բնակարանային շինարարության ծավալը, նախորդ տարվա համեմատությամբ, ավելանալու է 25 տոկոսով:

Երևանի արվարձաններից մեկն է հանդիսանում Հրաչդանի աջափնյա թաղամասը, որը կառուցված է վերջին 3—4 տարում: Այժմ այդ թաղամասն ունի 30 000 բնակիչ, այնքան, որքան ուներ ամբողջ Երևանը 1918—1920 թվականներին:

Երևանցիների կենցաղային հարմարության համար.— Ընթացիկ 1963 թվականին Երևանում կառուցվելու է ավելի քան 6 000 բնակարան: Բաղադրի տարբեր մասերում բացվելու են 50 նոր խանութներ և 20 սրճարան-ճաշարաններ: Ջրուղի ցանցն ընդլայնվելու է 30 կիլոմետրով, իսկ կոյուղու ցանցը՝ 20 կիլոմետրով: 27 կիլոմետրով ընդարձակվելու է գազամուղի ցանցը, և քաղաքի այդ 9 000 ընտանիքներ ստանալու են հեղուկ գազ: Այսպիսով, մինչև այս տարվա վերջը, երևանցի 20 000 ընտանիքներ կունենան հեղուկ գազ:

Երևանի ջերմային էլեկտրակայանը.— Ապրիլի վերջերին շահագործման հանձնվեց Երևանի ջերմային էլեկտրակայանը: Ինչպես հայտնի է, Հայաստանում գործող բոլոր մեծ կամ փոքր էլեկտրակայաններն անխտիր աշխատում են ջրի ուժով: Մինչդեռ այս կայանը առաջին ջերմային էլեկտրակայանն է մեր հանրապետության մեջ, որն աշխատում է Արդարեանից ստացվող գազով: Ներկայիս այդպիսի էլեկտրակայաններ են կառուցվում Կիրովականում և Հրապդանում (Ախտա):

Գործարկված այս էլեկտրակայանը առաջիմ տալիս է 50 000 կիլովատ էլեկտրաէներգիա: Դա հավասար է Սեփանի ստորերկրյա և Երևանի ջրային կայանների հզորությանը միասին վերցրած: Ջերմային էլեկտրակայանի ամբողջ կառուցումը լրիվ կավարտվի 1965 թվականին, որից

Ռեստ այն կունենա 550 000 կիլովատ կարողություն, որը Ռավասար է Սևան—Հրազդան կասկադի բոլոր վեց ջրային էլեկտրակայանների հպորդությանը: Մինչև ընթացիկ տարվա վերջը կգործարկվեն ջերմային էլեկտրակայանի ևս երկու ագրեգատները, ջուրը 100 000 կիլովատ կարողությամբ:

Լրիվ ավարտումից Ռեստ, Երևանի ջերմային էլեկտրակայանը տարեկան կարողորի 3,5 միլիարդ կիլովատ-ժամ էներգիա: Դա խոշոր թիվ է, եթե նկատի ունենանք, որ Հայաստանի բոլոր ջրային էլեկտրակայանները միասին վերցրած, 1962 թվականին աղտադրել են 2,6 միլիարդ կիլովատ-ժամ էներգիա:

Ջերմային էլեկտրակայանի գործարկումով Ռնարավոր կլինի արդեն ընթացիկ տարվանից մասամբ կրճատել Սեվանի ջրերի քաղթողումը լճից:

Երևանյան այրում.—Մոսկվայի օտար լեզուներով գրականության Ռրատարակչությունը լույս է ընծայել «Երեվան» խորագրով գեղեցիկ գունատիպ այրումը, որը պարունակում է 32 յուսակարներ:

Նկարները պատկերում են մայրաքաղաքի տեսարժան վայրերը՝ Ռրապարակները, պողոտաները, նշանավոր շենքերը և ճարտարապետական կոթողները: Այրումում տրված են նաև Ս. Էջմիածնի Մայր Տաճարի և Ս. Հռիփսիմի վանքի նկարները: Յուրաքանչյուր նկարի նտեում տրված

է բացատրություն Ռայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և արաբերեն լեզուներով: Նույն լեզուներով տրված է նաև Ռամատոտ ծանոթագրություն Երևանի պատմության մասին:

Երևանյան Ռուջանվերներ.— Երևանում երկար տարիներ է ինչ գոյություն ունի գեղարվեստական տարբեր տեսակի իրեր և պարդեղեններ արտադրող գործադան (Գեղարվեստի ֆոնդ): Վերջերս այդ Ռաստատությունը ձեռնամուխ է եղել երևանյան նոր Ռուջանվերների արտադրության: Թողարկվում են խեցիից պատրաստված ծաղկամաններ, սափորներ, գինու, կոնյակի սպասքներ:

«Հավերժական ծաղիկ» կոչվող ապարանջանները պարզարված են Ռայկական ծաղկավանդակներով: Լայն ընդունելության են արժանացել «Երևան», «Մասիս», «Խաղաղություն» և մի քանի այլ տեսակի կրճառջաններ, «Սիրամարգ» և «ԱնաՌիտ» կոչվող ականջողները:

Երևանյան Ռուջանվերները լայն սպառում ունեն Սովետական Միության տարբեր քաղաքներում: Վերջերս այդ Ռուջանվերներից մեծ քանակությամբ ռուդարկվեցին առատաստմանյան մի քանի Ռայաջատ երկրներ:

Դեղարվեստի ֆոնդը ներկայիս խեցիից պատրաստում է որոշ քանակությամբ մեծ սկամակներ և սափորներ, որոնք իբրև պարզ գրվելու են մայրաքաղաքի պրեսայգիներում և պուրակներում:



ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ԱՏԱՅՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

N 174

ԿՈՆԴԱԿ

1-երբեր՝ 1.—Մեծարյունը՝ 225,2 X 33,5 սմ.—
 Նյութը՝ գեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—Վիճակը՝
 անբավարար, տեղ-տեղ պատռված։ Կոնդակի սկզբի մա-
 ռը կայքված է կարմիր գույնի ծաղկավոր շերտ վրա։—
 Գրությունը՝ միասյուն։—Տաղերը՝ ընդամենը 142։—
 Կենտրոնները՝ ճնշումով։—Գիրը՝ բոլորգիր։—Ձառվոր-
 քյունը՝ անկման շրջանի մի նմուշ է։ Ունի հասարակ
 նկարներ, ինչպես թռչուն, որի բերնում կա ծաղկավոր
 հրեք ճյուղ, երկու հրեշտակ, երկու մարդ, որոնցից մե-
 կը մորուսավոր, հավանաբար ճահանա, Ս. Գևորգը ձի-
 շնծած սպանում է վիշապին, Ս. Գևորգս վանքը, ծաղիկ-
 ներ և այլն։ Սկզբում կա միայն մի հատ թռչնադիր
 (ի), Կոնդակի երկու կողմերում կա երկու լուսանցք,
 և կարված կանաչ լրաներկով։—Գրիչը և ծաղկավոր՝ վա-
 նեցի Սենեքերեմի որդին Սիմեոն։—Պատվիրատուն՝ Ս.
 Գևորգ վանքի վանահայր Ստեփանոս վարդապետ։—Ժա-
 մանակը՝ 18 սեպտեմբերի 1844 թ.։—Վայրը՝ Մոկաց
 շրջանի Փուլիկի Ս. Գևորգ վանք։—Մտնորություն՝ սույն
 կոնդակը ստացվել է Վեհափառ Հայրապետի միջոցով
 1960 թվականի հունվար ամսին։

ԱՐՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Արևմտահայաստանի Մոկաց շրջանի
 Փուլիկի Ս. Գևորգ վանքի համար գրված մի
 կոնդակ է սա, նյութական միջոցներ հանգա-
 նակելու մասին։

Եի գերազույն և գերապայծառ, ի հրաշալի և
 ի հրաշափառ, սրովբեմանեմ քրովբեմապր Ադի-
 նասարան և երկնամասն Մոգաց Փուլիկի
 Սրբոյն Գէորգայ գերաշուշակ տաճարէս և ա-
 մենամաքուր և արագահաւ սրբոց նշխարացն
 նորին և այլ ամենայն սրբոց մասսանց որք ի
 Փուլիկի Սրբոյն Գէորգայ տաճարս ամփոփեալ
 կան։

Կոնդակը գրված է նույն վանքի վանահոր
 կողմից և սկսում է այսպես.

Եմ ի սոցին սպասաւոր և պաշտօնեայ ի
 Տէր Ստեփաննոս մեղապարտ վարդապետէ
 յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան և
 նամակ պահպանութեան...։

Կոնդակն ուղղված է այցելու առաջնորդնե-
 րին, եպիսկոպոսներին, վարդապետներին,
 քահանաներին, սարկավազներին, իշխաննե-
 րին, մելիքներին, ռոսներին, վաճառական-
 ներին, արհեստավորներին, մահտեսիներին
 և առհասարակ բոլոր ժողովրդյան, ծերերին
 և երիտասարդներին։

* Ետունակված «էյմիածին» ամսագրի 1960 թվա-
 կանի № 36-ի, 37-ի, 38-ի, 39-ի, 40-ի, 41-ի, 1961 թվականի
 № 36-ի, 37-ի, 38-ի, 39-ի, 40-ի, 41-ի, 1962 թվականի
 № 36-ի, 37-ի, 38-ի, 39-ի, 40-ի, 41-ի և 1963 թվականի
 № 36-ի, 37-ի, 38-ի, 39-ի, 40-ի, 41-ի։

Հանգանակությունը կատարելու են երկու
 քահանաներ.

«... և այլ ամենայն բանին և գործին յաշո-
 դութին տացէ և նշնցելոց ձերոց յերկնային
 արքայութիւն պարգենացէ, եկեղեցեաց ձերոց
 հաստատութիւն և բարեկարգութիւն տացէ,
 բահանայս ձեր բոս քահանայիցն նղիազարու
 և Մելքիսեդեկի օրհնեսցէ...»։

Ապա խոսվում է Ս. Գևորգ գործարարի մա-
 սին, ինչպես նաև Ս. Գևորգ վանքի հիմ-
 նադրման մասին.—

«Դարձեալ սուրբ հայր մեր Սուրբ Յակոբ
 հայրապետն Մծպնայ առեալ զսուրբ գլուխն
 Սրբոյն Գէորգայ ղօրաւարին եղ ի մէջ Պուտիկի
 և եկեալ ի լեռն Նղիբով հոյիթ քառու կոշի
 և անդ հաճեցաւ սուրբ հայրն մեր աղօթեաց
 ի լեռնն այն և Աստուծոյ ազդեցութեամբն
 ամփոփեցաւ գլուխ Սրբոյն Գէորգայ ի մէջ
 վիմին. վասն այնորիկ կոշի Փուլիկի Սուրբ
 Գէորգ, որ է երկիրն Մոգաց։ Եւ պարոնն Մո-
 գաց Միր Հասան զոր ի քարծրաւանդակ ամ-
 րոցն յաւուր միում գիշերն նստեալ կայր
 հանդերձ նախարարօրքն ետես զլոյսն պայ-
 ծառ իջեալ ի վերայ վիմին և ծանոյց իւր
 աղանդիցն և կոշեաց քրիստոնէիցն, հրա-
 մանաց, գնացին և գտին զգլուխ Սրբոյն Գէոր-
 գայ ի վիմին և շինեցին հրաշագեղ վանք մի,
 և առնէ բազում զսքանչելիս մինչև ցայսօր...»
 Վերջում խոսվում է հանգանակութեան մա-
 սին.

«... որ և հայցեմք սիրելեաց զի ի ի գալն
 սիրելոց մերոյն ծառային, թէպէտ ուամիկ է,
 բայց յոյժ հաւատարիմ ծառայ գումով, յղեցաք
 զդա ի մէջը աստուածասիրութեան ձերում
 լաւ առատօրէն ողորմութիւն իմն շնորհիցիք
 զի ամենայն իրաց պակասութիւն ունի սուրբ
 վանքս...»։


ԶԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Կոնդակի ներքեւում կարմիր շրջանակի
 մեջ).

Ի յամի Տեառն 1844 և ի ՌՄՂԳ թովականիս
 Հայոց ի սեպտեմբերի 12 (2-ը գրված է արա-
 բական թվանշանով) օրին գրեցաւ նորոգ
 կոնդակս օրհնութեան, ճիշատակ է գանձա-
 կապետ Ռստանցի Յարութենի որդի Կաղարին
 և իւր ծնողաց հոգին երկնային արքայութեան
 արժանի եղիցի, ամէն։

(Կարմիր շրջանակի ձախակողմյան կող-
 մը).

Այլ և յիշման արժանի համարիչիք զգրա-
 գիր սորին վանքի Սինաքարիմի որդի Սի-
 մէոն, որ բազում աշխատութեամբ գծա-
 գրեաց ի սէրն սույն Սրբոյն Գէորգայ ղօրա-
 ւարին, որ և ինքն առ Տէրն մեր Յիսուս Զրիս-



ՎԵՐՆԱՇԵՆԻ ՍՊԻՏԱԿԱՎՈՐ ՎԱՆՔԸ
(ԺԲ դար)

Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան

տոս Աստուած օգնեսցէ մեզ և ձեզ ամէնէ-
ցուն, ամէն:

№ 175

ՏԱՂԱՐԱՆ

Քերթեր՝ 222:—Պրեկեներ՝ 21, յուրաքանչյուրը
զանազան մեծությամբ, բազկացած 8, 12, 16 և այլն
թերթերից:—Մեծությունը՝ $17 \times 11 \times 4,5$ սմ.:—Նյութը՝
թուղթ:—Կազմը՝ կաշեպատ ապիտակ:—Պաշտպանակներ՝
սկզբից երկու, իսկ վերջից մեկ թերթ:—Վիճակը՝ յապ:
—Գրությունը՝ յիսուսուն:—Տողեր՝ 13:—Գծումները՝
մատիտով:—Գիրը՝ նոտրգիր:—Ձառողագրություն՝ կան
տեքունական վեց եկարներ (թ. թ. 4ր, 41ր, 80ր, 116ր,
131ր և 158ր) և վեց խորաններ: Նկարները հասարակ
են, սակայն բավականին հայտնի կան սակավ թվով
լույնադրեր: Գործածված է յիսուս չբաներից:—Գիրը
Հակոբ Ղազարյանց Պապով:—Ժամանակը՝ 27 հուլիսի
1835 թ.:—Վայրը՝ Աստրախան:—Մանրություն՝ սույն
ձևագիրը նվեր է ուղարկված Մոսկվայից, Տիգրին Վերս:
Պապովա Ուզարովայի կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 3ա.— Տաղարանս յօրինեալ ի զանա-
զան բանասիրաց, յորում պարունակին ամե-
նայն տաղը եկեղեցւոյ և ուրախութեան, ի
հայրապետութեան Տեառն Յովհաննու ար-
ժաննտիր Կաթողիկոսի ամենայն հայոց, և
յառաջնորդութեան Սերովբէի արքեպիսկոպո-
սի և ասպետի, Գրեալ է յաստրախանարնակ
հալ մակովրայ Ղազարեանց Պապովայ, ի
1835 ամի յուլիսի 27, յԱստրախան:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 2բ.— Ի գրոց Յակովր ցահանայի Պապովեանց
յԱտրախանցւոյ, № 31:

№ 176

ՔԱՐՈՉԳԻՐՔ

Քերթեր՝ 20:—Պրեկեներ՝ 2, յուրաքանչյուրը 10
թերթից:—Մեծությունը՝ $21,5 \times 17,2 \times 0,5$ սմ.:—Նյութը՝
կապտավուն թուղթ:—Կազմը՝ լուսնի:—Պաշտպանակ-
ներ՝ չկան:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միա-
սույն:—Տողեր՝ 20:—Գծումները՝ ճշշումով:—Գիրը
նոտրգիր:—Ձառողագրություն՝ կան գեղեցիկ երկու թուղ-
նադրեր, երեք զարդադրեր և մի քանի զարդանկարներ:
—Գիրը՝ անհայտ:—Ժամանակը՝ ժ. դար:—Վայրը՝
անհայտ:—Մանրություն՝ սույն ձևագիրը հանված է
Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Երանելուն Անանիայի հայոց
վարդապետի ի խորհուրդ Յոնանու մարգա-
րէի:

Թ. 6բ.— Յաղագս բանին Աստուծոյ տնօ-
րինական խորհրդոցն բացայայտութեան, որը
ի մովնան նկարեցան:

Թ. 12ա.— Քարոզ յաւետիցն հրեշտակա-
պետին առ կոյսն Մարիամ, ի բան Սրբոյ Ան-
տարանին, և յամսեանն վեցերորդի առա-
քեցալ (այստեղ կա անընթեռնելի մի նշան):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 15ա.— Աւարտ բանիս՝ եղև գրեալ:
Միշտ անդադար՝ աշխատեցեալ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Արրահամ:

Թ. 12բ.— Մինչև զոգ եւ ճոխ փարթամ:

Ունիս բազում բարեկամ:

Վասն սիրոյն փարթուհան:

№ 177

ՔԱՐՈՉԳԻՐՔ

Քերթեր՝ 107:—Պրեկեներ՝ 8, անհամալար:—Մե-
ծությունը՝ $24,8 \times 17,5 \times 1,5$ սմ.:—Նյութը՝ հասարակ
սպիտակ թուղթ:—Կազմը՝ յաթկազմ ստվարաթուղթ:—
Պաշտպանակներ՝ սկզբից 3 թերթ թուղթ, իսկ վերջից՝ 11
հատ:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միասույն:—
Տողեր՝ 28—28:—Գծումները՝ առանց ճշշման:—Գիրը
նոտրգիր:—Ձառողագրություն՝ լուսնի:—Գիրը՝ Հակոբ Ե-
պիսկոպոս Թոփուզյանց:—Ժամանակը՝ ժ. դ.:—Վայրը՝
Վանա իմ անապատի Ս. Գնորգա վանք:—Մանրու-
թյուն՝ սույն ձևագիրը հանված է Մայր Աթոռի արխի-
վից: Զեռագրից հայտնի չէ: Թե ո՞վ է գրելը և ո՞րտեղ է
գրչութեան վայրը: Մատչանում կան երեք ձեռագիր նա-
մակներ և մի գրություն: Նամակներից մին հասցեա-
ղված է Վանի իշխանաց հանգանակութեան նպատա-
կով, որպեսզի հոգացվեն իմ անապատի Ս. Գնորգ
վանքի վերանորոգութեան ծախսերը: Հանգանակութեան
համար ուղարկվում է նույն անապատի միաբան Պա-
տարս վարդապետը: Նամակը վերջանում է այսպես.—
«Մեմ վասն ձեր աղնի օրհնեալ կենաց պայծառու-
թեան միշտ անձուռաց ազօթող Մ. Տ. և իմ Սուրբ Անա-
պատի, վշտալի վանահայր Յակոբ Եպիսկոպոս Թոփու-
զեանց: 1878 ռոմտոս 15, ի Վան, ի իմ ծովածարար
Սուրբ Անապատո Սրբոյն Գնորգայն: Նամակի և սույն
ձեռագրերի գրչութեան ոճը նույնն է: Համահարար սույն
ձեռագրի գրչին էլ հանգիստանում է նույնիքն Հակոբ
Եպիսկոպոսը, իմ անապատի վանքում:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 180ա.— Մեյան փորձեցի նույնն էլ:

Թ. 108բ.— Քարտէզ փորձեցի:

№ 178

ՔԱՐՈՉԳԻՐՔ

Քերթեր՝ 151:—Պրեկեներ՝ 15, յուրաքանչյուրը
8—12 թերթից:—Մեծությունը՝ $25 \times 18,5 \times 1,5$ սմ.:—
Նյութը՝ հասարակ սպիտակ թուղթ:—Կազմը՝ ստվարա-
թուղթ:—Պաշտպանակներ՝ սկզբից 5 թերթ թուղթ, իսկ
վերջից՝ 3 հատ:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝
միասույն:—Տողեր՝ 28—30:—Գծումները՝ ճշշումով:—
Գիրը՝ նոտրգիր:—Ձառողագրություն՝ լուսնի:—Գիրը՝

Պաղատասար վարդապետ Երևանցի և Գեորգի—Ժամանակը՝ ԺԹ դ. — Վայրը՝ շատ հավանաբար կիս անտպատի Սուրբ Գևորգա վանքը։ Մաեռութիւնը՝ սույն ձեռագիրը բաժանված է հինգ մասերի՝ ա. Բ. Բ. 6ա—58ա, Բ. Բ. 80ա—65բ, գ. Բ. Բ. 70ա—117բ, դ. Բ. Բ. 136ա—141ա, ե. Բ. Բ. 144ա—148ա։ Բ. 58ա-ում գրված հիշատարականից երևում է, որ Բ. Բ. 6ա—58ա մասը գրված է Պաղատասար վարդապետ Երևանցու կողմից, իսկ Բ. Բ. 70ա—117բ բաժինը՝ Գեորգ գրչի կողմից։ Ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Բ. 58ա.— Ըզկնիքի բնթերցմանց խրատախառն բանիցն որ ի վեր, և բնդունելոյ զհոգոց զօվացուցիչ աղբերց շրոյ կենդանութեան յաւէժախաղաց յովկիանոսէ իմաստութեան Հոգւոյն Սրբոյ որ ի յԱստուածաշունչ մատենի. ներքև մախթեմ վերծանող և շնորհապարճ բանիքուն յեղբարցդ. սղալանացն որ ի սմա թէ տառից թէ բառից և թէ եղծմանց. ճիշտ տեղեկանալով զիրողութեանցն պատճառ։ Մինն զի յանվարժ քերական իմաստայարդար արհեստից գրչէ ումնմնէ գրեալ և այժմ ի նորին օրինակէ գաղափարեալ (թէն պատշաճ էր սրբագրել և ապա գրել, րայց անձնական ակարութիւնս ոչ ներեաց)։ Երկրորդ՝ տեղւոյս կարգաց ծանրութիւն և քունահատութիւն ոչ տայր տեղի զուարճազուարթ ջէտի. և վայրկենի, զի աշախուժ հսկողութեամբ մանրանկատ խուզարկմամբ արտագրեցէր։ Երրորդ՝ գրեցաւ ի համառօտ երբի։

Վասն որոյ խնդրեմ ներող գտանիցիք։

Մնամ աղօթարար՝

Պաղատասար վարդապետ Երևանցի։

Բ. 117բ.— Վաղճան գրքոյս։

Զգրեալսն յորժամ բնդեռնուս անդ յիշեսցես զԳէորգ հանգուցեալ ի Քրիստոս։

№ 179

ՔԱՐՈՉԳԻՐԲ

Քերթերը՝ 98։— Գրակները՝ 10, յուրաքանչյուրը 10—ական թերթից, բացի մեկից։— Մեծութիւնը՝ $25 \times 18,5 \times 1$ սմ.։— Նյութը՝ բարակ թուղթ։— Կազմը՝ ստվարաթուղթ։— Պահպանակներ՝ սկզբից 4 թերթ թուղթ, իսկ վերջից՝ 19։— Վիճակը՝ բավաբար։— Գրութիւնը՝ միասյուն։— Տողերը՝ 26—30։— Գծումները՝ ճշգրտով։— Գիրը՝ նոտրգիր։— Զարդագրութիւն՝ կան մի քանի հատ հասարակ և անարժեք թղթագրեր և մի հատ էլ ձկնագիր։— Գրիչը՝ Մատթեոս սարկավազ։— Պաշտպանը՝ Պաղատասար վարդապետ Երևանցի։— Ժամանակը՝ 1863 թ.։— Վայրը՝ շատ հավանաբար կիս անտպատի Ս. Գեորգ վանքը։— Մաեռութիւնը՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից։ Ձեռագիրը բաժանված է երկու մասերի՝ ա. Բ. Բ. 5ա—48բ, Բ. Բ. 69ա—79ա։ Բովում է, թե վերջին այս երեք ձեռագիր քարոզգրքերը (№ № 177, 178 և 179) պատկանելին են եղել մի մար-

դու, և գրվել են նույն վայրում՝ այսինքն Վանա կիս անտպատի Ս. Գեորգ վանքում։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Բ. 5ա.— Քարոզգրքերը.

Հատընտիր հաւաքեալ ի մեծանուն հեղինակաց քարոզողաց բանին Աստուծոյ յԱնդրիանուպոլսեցի Տեառն Պետրոսէ գերապատիւ արքեպիսկոպոսէ, և հուկակալոր քարոզչէ յեկեղեցիս Կոստանդնուպոլսոյ և մի գիրք բովանդակեալ ի նմանէ ի Ուռումէլի տղեկին Կոստանդնուպոլսոյ։

Եւ արդէն օրինակեալ ի բուն մատենէ անտի ձեռամբ նուաստ Մատթեոս սարկավազի, ի վայելումն հոգեշնորհ Բաղդասար վարդապետի Երևանցոյ և լուսարարի սրբոյ ուխտիս։

Եւ ի հայրապետութեան Տեառն Տեառն Գէորգայ Աստուածաբնտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց։

Եւ ի առաջնորդութեան Սրբոյ Անապատիս Տեառն Աստուածաբնտիր Յակոբ սրբազան արքեպիսկոպոսի վանեցոյ։

Եւ ի մարդեղութեան Բանին Տէառն 1869. և ի թուականութեան Յարեթեան սեփիս 1318.

և ի հոգտեմբերի Թ համարի։

Բ. 78ա.— Աւարտ բանիս եղև գրեալ։

Միշտ անդադար աշխատեցեալ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բ. 82բ.— Քարտէջ փորձեցի։

№ 180

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ

(Հայառաւ տանկեռեմ)

Քերթերը՝ 238։— Գրակները՝ 20, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծութիւնը՝ $21,2 \times 18 \times 2,5$ սմ.։— Նյութը՝ բարակ թուղթ։— Կազմը՝ ստվարաթուղթ։— Պահպանակները՝ սկզբից և վերջից երկուական թերթ կապուլտ թուղթ։— Վիճակը՝ բավաբար։— Գրութիւնը՝ միասյուն։— Տողերը՝ 18։— Գծումները՝ սկզբից թղթեր ավագան և գծաւոր։— Գիրը՝ շեղագիր։— Զարդագրութիւն՝ չկա։— Գրիչը՝ Ղարաբաղի Քաղար գյուղացի աշուղ Ռուստամ։— Պաշտպանը՝ Վահան սարկավազ։— Ժամանակը՝ ԺԹ դ.։— Վայրը՝ անհայտ։— Մաեռութիւնը՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Բ. 238ա.— Աստուած ողորմի ասողներին զամ լսողներին ծնողացն։

ՆԻՇԱՏԱՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ր.— Թաղարեցի աշղը Բուստամի աշխատու-
թիւնը վաճառ սարկաւորին նուիրած:

Թ. 140ա.— 1870 ամի:

Թ. 148ա.— 1872 ամի:

Թ. 157ա.— 1871 ամի:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիր մատյանիս 2ա—228թ էջերում
գրված կան ընդամենը 228 աշուղական եր-
դեր, մեծագույն մասը հայատառ տաճկերե-
նով, իսկ միայն ինն էջեր գրված են հայերեն
լեզվով (148ա, 148բ, 157ա, 163բ, 166բ,
175ա, 190բ, 192բ և 201ա), որոնցից ստորի
սրվում է միայն երկու էջ, որպէս նմուշ,
ինչպէս նաև տաճկերեն երգերի հայերեն
գրված վերնագրերից մի քանիսը (կա մո-
տափորապէս 36 հատ): Սույն երգերը ունեն
հայրենասիրական, քնարական, եկեղեցական
և այլ բովանդակութիւն, գրված աշուղական
ոճով: Շատ հավանաբար սրանք հորինված
են ԺԹ դարի կեսերին և մի ամբողջական ժո-
ղովածուում հավաքված ԺԹ դարի երրորդ
քառորդում:

Թ. 4ա.— Գովասանք դիւանի եկեղեցու վե-
րայ:

Թ. 6բ.— Դիւանի նամարտ մարթի վերա:

Թ. 12բ.— Դիւանի հրդէշտակաց վերա:

Թ. 14ա.— Դիւանի երրորդութեան վերա:

Թ. 61ա.— Գովասանք ի վերա եկեղեցու
վերա:

Թ. 70բ.— Աղայանք քսանին գիրիցրն:

Թ. 74բ.— Աշխարիս մարթի վերա:

Թ. 75ա.— Ժամանակի վերա:

Թ. 80բ.— Մարթի սիրդի գամ միթգի վերա:

Թ. 85ա.— Գովասանք Քրիստոսի հրաշա-
ղութիւնի վերա:

Թ. 85բ.— Աշխարի վերա:

Թ. 89ա.— Ծրոթեան վերա:

Թ. 90բ.— Զարկեար օղիի Բարին մեռնելին
վերա ասած:

Թ. 93ա.— Այվան մարթի վերա:

Թ. 95ա.— Գովասանք խոլորտէցի մեզ
Ղազար անվան զղի վերա:

Թ. 98ա.— Գովասանք Տումա գէղի վերա:

Թ. 100ա.— Գովասանք ի վերա վաճանի
(101յնը և 101ա-ում և 102ա-ում):

Թ. 103բ.— Թաղլիս աշղը Ղազարի վերա:

Թ. 119ա.— Երատ:

Թ. 125ա.— Մարթի կամ կնկան սրի վերա:

Թ. 138.— Ձեր մարթի վերա:

Թ. 143բ.— Ըսգսից աշղ Բուստամը առաջ
բնկա:

Թ. 144բ.— Էլի ըսգսից Բուստամը:

Թ. 146ա.— Բուստամը այս թաղլիսըն ասից
բատուխան:

Թ. 147ա.— Էտով Բուստամը շակրիդին ա-
սից այս խոսքըն:

Թ. 153ա.— Ըսգսից Բուստամը առաջին ըն-
կա:

Թ. 172ա.— Նորաթը եզաւ աշղը Բուստա-
մէն ըսգսից առաջին ասէլ:

Թ. 176ա.— Գովասանք Գիրիզոր քախի վե-
րա Թաղլար գիրիցի:

Թ. 177բ.— Գովասանք նշանագուրութեան
վերա:

Թ. 179բ.— Գովասանք օրնութեան նոր
հարսանէք արած գղի կամ հարսի վերա:

Թ. 184ա.— Ախշիկը իւր հայր աշղը Բա-
տամին ասից աշղը Բատամը երթըն աշա-
կերտները երգալաւ քնաց զարկեար օղլըն
մոտըն ըսգսէցէն աշակերտները կամ ինքը
խոսէլ:

Թ. 196ա.— Ըսգսից աշակերտըն ասէլ:

Թ. 197ա.— Ըսգսից Զարկեար օղլին առա-
ջին ասէլ այս խոսքըն:

Թ. 199բ.— Ըսգսից Զարկեար օղլին այս
խոսքս ասից, Մամար վատին մնաց զապված:

Թ. 202բ.— Էլի ըսգսից ճղացքանն:

Թ. 148ա.— Գովուշմա (1872 ամի):

Էլի մին անքամ գնացէնք աշղութեան
դործի Կոկչի մըհալը եւ աշղը Բուստամ գամ
մէկ հնկեր և իմ երախան Կոկչի մըհալն ման
եկէնք գնացէնք Տիլիջան անվան շըհարն մէկ
դտն դոնաղ ընկինք մնացինք առաւոտեան
իմ որթի Կարապետըն սաղն վեր գալաւ գնաց
բազարի տուքաններըն ման գալ մեկ քանի
գութեանում խաղ դասի ծայն շատ գը սիրէն
շըհարի մարթն տիր գը թափվին ծայնին վե-
րա շհարի մահլաներու մը մէկ աշղը գը լինի
նաղլ անելիս անունը Մեհրաբ օսմանու մեր
երախան զըքընա տէսնա մէկ աշղը նաղլ ա-
նելիս աշղըն մեր երախին նաղըն գառնի և
զգնվի երախին վերա երախան զըգա ինծ
մոդ թէ սաղըս մէկ օսմանու աշղը առաւ և եւ
Բուստամ գընացի աշղդին մոտ ասացի ուս-
տա այդ երախին սաղըն տուր իւրան քնի իւր
գործին ասընա ասաց երախան քէզ ինչ է եւ
բատասխանեցի ասէցի երախան իմ որթի է
(թ. 148բ) և իմ աշակերտ է ընա ասաց թէ
տու աշղը էս եւ ասացի հրամաքս աշղը էմ
ետով ասէց թէ անունըտ ինչ է ասացի թէ
ղարարաղէ թաղու Բուստամ էմ եւ ասացի
թէ քու անունտ ինչ է ընա բատասխանէց թէ
օսմանու Մեհրաբն էմ, գասէմ ուստա Մեհ-
րաբ այտ երախտ սողն տուր իւրան ասէց
որ աշղդէս զընա քու սաղտ բեր քէզ հետ խո-
սեմ, ժողովուրթն ասացին թէ րէթգ է խոսիք,
գնացին իմ սաղըս բըրին մին և սաղըս դուս
օնիրըն ինքն առաջ ընկաւ ըսգսից ասէլ (հա-
ջորդ էջերում կա իր երգած երգը):

№ 181

ԶԱՅՆԱԳՐԵԱԿ ՊԱՏԱՐԱԿ

Քերթերը՝ 125.—Պրակները՝ 15, յուրաքանչյուրը 12 թերթից։—Մեծությունը՝ 22,1×17,5×1,8 սմ.։—Նյութը՝ ղեղնած բարակ թուղթ։—Կազմը՝ լաթակազմ ստվարաթուղթ, որի առաջին երեսի վրա ճնշումով գրված է «Ձայնագրելու Բաժնի» հրդեհակային և ջրհրդեհակային ծառայության համար։—Վիճակը՝ ժիթիլ ճայքայված։—Գրությունը՝ յաջողությամբ։—Ցուցանիշները՝ 20—21։—Գծումները՝ սկզբից էջերը ապակի են զտվոր։—Գիրը՝ շագանակա-և հալանակա-ճառագրով։—Ձայնագրությունը՝ շառագրով։—Գրիչը՝ դպիր Բախչի Տեր-Գրիգորյան Տեր-Մարտիրոսյանց, ծամեմեկը՝ 8 փետրվարի 1898 թ.։—Վայրը՝ Բաքու։—Մանրագրությունը՝ սույն ձևագիրը մատյանը նվեր է ստացված Մոսկվայից՝ արժանապատիվ Տ. Խաչատուր ամսագրի ճանաչման Տեր-Նա-րայրյանցի կողմից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 1ա.— Ձայնագրելու քառանկյուն երգեցողությունը սրբույ պատարագի։ Դպիր Բախչի Տեր-Գրիգորյան Տեր-Մարտիրոսյանց, ներդաշնակություն Մ. Ծկմայանի 8 Բ 99 Բազու (այսինքն 8 փետրվարի 1899 թ.)։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. 1ա.—Սուրբ էջմիածնայ գրադարանին Սույն ձևագիրը ներում էմ ի իշխատակի իմ հարազատ ընկերույ Բախչի Տեր-Մարտիրոսյանցի, ի Տեր հանգեալ 1954 թ. 5 Նոյեմբ. Մոսկու։

Խաչատուր Լամանտ Տեր-Յուրիկանցից։
1 փետր. 1955, Մոսկու։

Ք. 1բ.—Փամար (4) սեփական տնտեսականից։

Ք. 175թ-ի պիմաց (կոնակի կազմի ներսի երեսում)՝ Գրիգոր Ժառանգյ Տեր-Մարտիրոսյանց։

№ 182

ՔԱՐՈՂԳԻՐՔ

Քերթերը՝ 107։—Պրակները՝ 2, յուրաքանչյուրը 12 թերթից։—Մեծությունը՝ 21,8×13,8×1,3 սմ.։—Նյութը՝ ղեղնած բարակ թուղթ։—Կազմը՝ լաթակազմ ստվարաթուղթ։—Պրակները՝ վերջում կա 20 թերթ թուղթ։—Վիճակը՝ սկզբից և վերջից թերթի։—Գրությունը՝ յա-սյուն։—Ցուցանիշները՝ 28։—Գծումները՝ թուղթը ինքնին զտ-վոր է։—Գիրը՝ շագանակա-և ցրիլը՝ անհայտ։—Ծամեմե-կը՝ Ժ. Դ.։—Վայրը՝ անհայտ։—Մանրագրությունը՝ սույն ձևագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից։

№ 183

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Քերթերը՝ 60։—Պրակները՝ 2, յուրաքանչյուրը 40 թերթից։—Մեծությունը՝ 22×18×0,7 սմ.։—Նյութը՝

բարակ թուղթ։—Կազմը՝ յաջողությամբ ծածկված ստվարաթուղթ։—Պրակները՝ սկզբից և վերջից մեկական թուղթ։—Վիճակը՝ յա-սյուն։—Ցուցանիշները՝ 28։—Գծումները՝ թուղթը ինքնին զտ-վոր է։—Գիրը՝ շագանակա-և ցրիլը՝ անհայտ։—Ծամեմե-կը՝ Ժ. Դ.։—Վայրը՝ անհայտ։—Մանրագրությունը՝ սույն ձևագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 1ա.— Վլադ. Նեմիրովիչ-Ռանչենկո
«ԿԵՆԱՆՔԻ ԱՐԺԷՔԸ»

Դրամա չորս գործողությամբ

Թարգմանություն

Ա. Մուրադեզյանից։

(Ներքևում նույնը գրված է ռուսերեն լեզ-վով)։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահանջի 1-ին էջում)

Աղաղակած է և հարազատ չէ թարգմանությանը քա-ղրի հետ։ Այ. Մուրադեզյանի (Վեյ զանազան էջերում 1ա, 2ա, 18ա, 37թ, 48ա և 88ա կնիքով տպված է հե-տևյալ անսեր՝ Ա. Մ. Խիբարեան)։

№ 184

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Քերթերը՝ 66։—Պրակները՝ 4, յուրաքանչյուրը 18 թերթից։—Մեծությունը՝ 22×18×0,7 սմ.։—Նյութը՝ բարակ թուղթ։—Կազմը՝ յաջողությամբ ծածկված ստվարաթուղթ։—Պրակները՝ սկզբից և վերջից մեկական թերթ թուղթ։—Վիճակը՝ բավարար։—Գրությունը՝ յա-սյուն։—Ցուցանիշները՝ 20։—Գծումները՝ թուղթը ինքնին զտ-վոր է։—Գիրը՝ շագանակա-և ցրիլը՝ անհայտ։—Ծամեմե-կը՝ 1896 թ.։—Վայրը՝ Թիֆլիս։—Մանրագրությունը՝ սույն ձևագիրը հանված է Մայր Աթոռի ար-խիվից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Ք. 1ա.— Ն. Օ. Րակչանին
«ԿՐԹԻ ԲՈՆԿՈՒՄՆ»

Դրամա 4 գործողությամբ

Թարգմանից ռուսերենից Ա. Մուրադ-յանից։

(Նույն էջում նույն տեքստը գրված է ռու-սերենով, ինչպես նաև այն մասին, որ սույն դրաման հրատարակվել է Վերտիստաի 12-րդ համարում։ Կա նաև երկու տող ռուսերենով մի գրություն, ինչպես նաև 80 կողմնակա-նոց դրոշմանիշ, վրան 1896 թ. գրված)։

Ք. 60թ.— (Դրամայի վերջավորությամբ կա թարգմանիչ-գրի ստորագրությունը՝ Այ. Մուրադեզյանի)։

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Ք. 1ք.—(Կա 10 առդ գրություն ուսանողներին լիցենզիա տրամադրված Գրության թվականն է 18 երեքամսյան 1896 թ. դրված թիվին քաղաքում):

№ 185

ՄԱՅՐ ՏՕՄԱՐ

Ս. ԷՋՄԻԱՇՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ

Քերտերը՝ 382 (381 + թերթ 217ա)։—Պրակները՝ 32, յուրաքանչյուրը 12 թերթից։—Մեծությունը՝ 50×35,5×4,5 սմ։—Նյութը՝ սպիտակ բարակ թուղթ։—Ուղիղը՝ կաշեպատ սալաքարաթուղթ։—Պահպանակները սկզբից 3, իսկ վերջից 2 թերթ թուղթ։—Վիճակը՝ բավարար։—Գրությունը՝ միասուն։—Տողերը՝ փոփոխական, 2—3 տողից մինչև 34 տող։—Գծումները՝ առանց նշման։—Գիրը՝ շեղագիր։—Ձառողագրություն՝ չկա։—Գրիչը՝ անհայտ։—Պատվիրատուն՝ Գևորգ Դ Կաթողիկոս Ամենայն Հայոց։—Ժամանակը՝ 1874 թ. Ս. Մակար, Տ. Մկրտիչ և Տ. Մառթնոս Կաթողիկոսների ժամանակ եւ կատարվել են բազմաթիվ լրացումներ։—Վայրը՝ Ս. Էջմիածնի վանք։—Մեծությունը՝ սույն ձևագիրը հասնում է Մայր Ընտրի արխիվին)։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ք.թ. 4ա—5ք.— Գևորգ Դ Կաթողիկոսի 1873 թվականի դեկտեմբեր 6-ի կոնդակը, որի մեջ գրում է հեղեղեցական իրերի անմխիթար վիճակի, թանգարանի երեք սենյակների շինություն (1869 թ.), արժաթեղեն և ոսկեղեն զարդերի և այլ իրերի նորոգության, նույնօրինակ երկու տոմարների պատրաստման, հեղեղեցական բոլոր իրերի, զարդերի և հնությունների ցուցակագրման, համարակալման և հատուկ պահպանմանը ցուցադրման, բանալիների պահպանման մասին, ինչպես նաև պատվեր գալիք սերունդներին՝ թանգարանն ու իրերը սրբությունը պահելու համար։

Ք.թ. 6ա—363ք.— Թանգարանի և Մայր Տաճարի սպասների, իրերի, զարդերի ընդհանուր ցուցակը, բաժանված 86 անվան տակ, որոնց զիսավորները նետելայններ են։

Ք. 13ա.— Աշտանակներ (79 հատ)։

Ք. 29ա.— Մագաղաթյա և թղթյա ձեռագիր և տպագիր Ավետարաններ (75 հատ), որոնցից 34 հատը՝ № № 1, 5, 6, 7, 10, 12, 13, 23, 24, 25, 27, 28, 30, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 44, 45, 53, 59, 60, 61, 67, 68, 69, 70 և 74 ձեռագիր Ավետարաններ են։

Ք. 44ա.— Բազալաններ (36 հատ)։

Ք. 61ա.— Գավազաններ (96 հատ)։

Ք. 96ա.— Ոսկյա դրամներ (21 հատ)։

Ք. 102ա.— Արծաթյա դրամներ (432 հատ)։

Ք. 110ա.— Պղնձյա դրամներ (410 հատ)։

Ք. 128ա.— Թագեր (74 հատ)։

Ք. 139ա.— Ժամացույցներ և այլ հնություններ (11 հատ)։

Ք. 141ք.— Խաչերի և պահպանների մեջ ամփոփված Ս. Գեղարդ, Կենաց փայտի մասունքներ, աչքեր և սրբոց մասունքներ (163 հատ)։

Ք. 155ա.— Զանազան շափսերի ոսկյա և արծաթյա խաչեր (347 հատ)։

Ք. 179ա.— Վեղարի և պարանոցի խաչեր (21 հատ)։

Ք. 204ա.— Կաթողիկոսական, եպիսկոպոսական և այլ կնիքներ (59 հատ)։

Ք. 217ա.— Զեռագիր և տպագիր Մաշտոցների (205 հատ), որոնցից № № 1, 2, 3, 4 և 5 ձեռագիր են։

Ք. 218ա.— Մատանիներ, զանազան կաթողիկոսների և եպիսկոպոսների (31 հատ)։

Ք. 222ա.— Տաճարի մատյանները, որոնք գտնվում են ավագ լուսարարի մոտ (36 հատ), որոնցից մեկը ձեռագիր է (№ 30)։

Ք. 253ա.— Թանկագին շուրջառներ (161 հատ)։

Ք. 264ա.— Հասարակ շուրջառներ (95 հատ)։

Ք. 274ա.— Զանազան պետական շքանշաններ (27 հատ)։

Ք. 282ա.— Պատկերներ և զարդեր (59 հատ)։

Ք. 290ա.— Հայրապետական պանակներ և արձիվներ (14 հատ)։

Ք. 300ա.— Սկիհներ և մազզմաններ (48 հատ)։

Ք.թ. 378ա—379ա.— ռեանկ պարունակությունները տոմարիս)։

Տրվում է ցուցակագրված 86 անուն իրերի, սպասների, զարդերի և այլ իրերի ցուցակը։ Գլխավոր իրերն ու սպասները մանրամասն կերպով նկարագրված են, թե դրանք որտեղից են բերված, ո՞վ է բերել, ո՞վ է նվիրել, ո՞ւմ է տրվել և այլն)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Ք. 1ա.— Մայր Տոմար պահպանելի իմանգարանի։

Ք. 4ա.— (Գևորգ Դ Կաթողիկոսի հայրապետական կնիքը, կարմիր)։

Գևորգ Դ Նախկապուստայետ և Կաթողիկոս Ամ. Հայոց. ՌՅԺԵ = 1866։

Ք.թ. 4ա—5ք.— (Տրվում է կոնդակի լրիվ տեքստը և Կաթողիկոսի ստորագրությունը)։ Գրեցաւ ի վնցն դեկտեմբերի հազար ութիս Գրեցաւ ի վնցն դեկտեմբերի հազար ութիս Տրեւմսեան ՌՅԺԳ ազգային թուակալն, ի Կաթողիկոսարանն Ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին, ի Վաղարշապատ)։

Թ. 357ր.— Վեհափառ Տ. Տ. Գէորգ Դ Կաթողիկոսն Ամենայն Հայոց ի մէջ անթիւ ազգային և եկեղեցական բարեկարգութեան գործիք տեսանելով՝ զի և շապիկք և ուրարք վկայից յատկացելոյ յաւուր ձեռնադրութեան եպիսկոպոսի ի Մայր Տաճարի Սրբոյ էջմիածնի՝ մարշալք են և կարկատեալք, քանզի դպիրք ի հնումն անխտիր ի գործ եղեալք են յեկեղեցական այլ արարողութիւնս. վասն որոյ ի նորոյ պատրաստեաց զեղեցկագոյնս և վայելելոյս մետաքսեայ և ծաղկեայ կերպաս շապիկս և ստոֆայ ուրարս, զորս և պատուիրեաց պահել առանձինն ի թանգարանի Աթոռոյ վասն յատկապէս գործադրելոյ միայն յաւուրս ձեռնադրութեան եպիսկոպոսաց, և են այսոքիկ (տրվում է ցուցակը):

Թ. 358ա.— 1881 մայիսի 12.

Թ. 359բ.— (Գնդեվանքի հնութիւնները, որոնք Գեորգ Դ Կաթողիկոսի հրամանով բերված են Ս. էջմիածին):

Այն ինչ Վեհափառ Տ. Տ. Գէորգ Դ Կաթողիկոսն ամենայն Հայոց ի թիւս ազգի ազգի բարերար մեծադործութեանցն յօգուտ և ի փառս Հայրենեաց և եկեղեցւոյ՝ հողայր նաև զմեծափառ յիշատակարանաց նախնեաց՝ զհոյակապ վանօրէից ասեմ և զմենաստանաց, և հնոստես տնօրէնութեամբ իմն կարգադրէր զնորոգութիւն մէն մի վանօրէից Հայաստանի, զոր օրինակ բազում ջանիւք ի հիմանց նորոգ կատարց զՍուրբ Խաչ եկեղեցին Արկազու, որ է ուխտատեղի, և բարեկարգելով զվանս Յովհաննու Որոտնեցւոյ որ ի Սիւնիս՝ կարգելով վանահայր և միաբանութիւն ի նմա, նոյնապէս և զՄակարայ վանս Գուգարաց, Ուլուր Սուրբ Սարգսի վանս և զայլս բարեկարգեաց և հաստատեաց զմիաբանութիւնս Յովհաննէս վարդապետ Տաթեւացի յամին 1872, շարժեալ ի նոյնպիսի կարգադրութեանց՝ զնաց նորոգել զՍուրբ Նախավկայի վանս (ոչ ի Պարսկաստանի եղեալն, այլ) Վայոց-Ձորոյ՝ անուանեալն Գնդեվանք, որ շինեալն է ի Սոփիա կնոյք մարտո իշխանի Սիւնեաց՝ ի թուին Հայոց 326 յայն է յամի Տեառն 936, առ Նդիշէ Ա Կաթողիկոսաւ, որոյ շինութեան արձանագիրն է ըստ այսմ Եմս Սոփիա տիկին՝ կին մարտայ Աստուածապահ տեառն Սիւնեաց և զուտոր Գրիգոր Դերենիկի շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգւոյ իմոյ. անակն մատանի էր Վայոց-Ձոր, շինեցի զսա և եղի ակն ի վերայս՝ Որպէս գրէ Ատեփանոս եպիսկոպոս Օրբէլեան ի Պատմութեան Սիւնեաց Գլուխ Ծ, յերես 306, ըստ Փարիզեան տպագրութեան:

Յիշեալ Յովհաննէս վարդապետն ի նորագին զՏաճար վանիցն և զսննեակս միաբանից ևս և զպարիսպն՝ զտեալ էր յամին 1875, առ դրան սննեկաց զերիս զանգակս եկեղեց-

ւոյ, և ի մէջ նորոյ միոյ զքանի մի պղնձեայ անօթեղէնս, զորս յայսմ 1881 ամի, ըստ հրամանի Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց երբ այսր ի Սուրբ էջմիածին, զերկուսն միայն ի զանգակաց և զայլս յիշեալ Յովհաննէս վարդապետն, որք և արձանագրեցան յերկուս տօմարս, ի Մայր Տաճարի Բանգարանի Աթոռոյս՝ որ և ի Վեհաբանի մնայ նոյն և նման նորին, և ունին նշանակել իւրաքանչիւրն յիւրում տեղւոյ:

Ձանգակ եղեկեցւոյ շափաւոր մեծ մի զոյգ՝ միանման որ կախեալ կայ ի զանգակատան Սուրբ էջմիածնի ի հարատեղողմն, յորոց վերայ միանման գրչութիւն յիշատակարանի այսպէս. «Յիշատակ է Գնդեվանի Սուրբ Նախավկային, թվ. ՌՅԽ». որ է յամի Տեառն 1691, առ Նահապետ Կաթողիկոսաւ):

(Ապա տրվում է բերված մյուս իրերի ցուցակը):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Թանգարանի Մայր Տաճարը կազմվելուց հետո հետագայում կատարվել են բազմաթիվ լրացումներ, Գեորգ Դ, Մակար, Մկրտիչ, Մատթէոս Բ Կաթողիկոսների և նույնիսկ այս վերջնույս վարձատնուից հետո: Օրինակ համար, 1871 թվականին Մեսրոպ վարդապետ Սմբատյանց նախիջեանցին, Գեորգ Դ Կաթողիկոսին նվիրում է մի ձեռագիր մագաղաթյա Ավետարան, գրված Հայոց ՌԿ (1211) թվականին): Տեսնել թ. 32բ, № 59, ներքև. վում ավելացված է հետևյալը.

Թ. 32բ.— «... և նովա թանգարանի Ս. էջմիածնի՝ ի յիշատակ ծնողաց իրոց, ըստ յիշատակադրոյն՝ որ ի կողս Անտարանիցն»:

Թ. 149բ.— (Մ 128 արձաթյա խաչի տակ գրված է).

Ի 19 ապրիլի 1903 ամի զսոյն զայս խաչ հանեալ ի ներքին մասանց խորանէն, ամփոփեցաւ ի նմա Ս. Մատն նշխարաց Ս. Առաքելոյն Թաղէոսի և յղեցաւ նուրբ և կողմանէ Վեհափառ Տ. Մկրտիչ Կաթողիկոսէ առ բարեպաշտօն Պ. Աղէքսանտր Յ. Մանթաշեան ի Տփլիս:

Թ. 180ա.— Մ 19 պարանոցի վարդապետական Թանկարձեք խաչը, որը զարդարված է բազմաթիվ զմրուխտ, հակինթ և այլմետ արձնազուր քարերով, եվներ է տրբված Խաչիկո թագավորի տղին, Խաչի նկարազարկանի կողքին, լուսանցքում, գրված է հետևյալը).

Ծանօթութիւն. Այս խաչ ի գալստեան արքայորդւոյն Խաչիկոյ զեռնեղելով զմասն ի կենաց փայտէն բնծայեցաւ նորին Արքայական Բարձրութեան ի կողմանէ Վեհափառ Հայրապետի ազգիս, ի 23 ապրիլի 1890 ամի (Նոյնն էլում գրված է):

20. Վարդապետական խաչ ականակուտ շղթայով.

21. Համալսարանական նշան:

20 և 21 յօդ. Նահապետ եպիսկոպոսի Նահապետեալ ի 24-ն հոկտեմբերի 1906 ամի:

Թ. 381բ.— (Մ 20 համարի տակ գրված է).

Տուփ ոսկեայ ձուռն Եմանյաւոր ծաղկոց և զձոյց զարդարեալ մի հատ, պատկանեալ ի Տէր հակադեցեալ Մատթէոս Կաթողիկոսի:

Ք. 383բ.—(Մ Ն 418—432 համարների տակ գրանցված 15 արժամյա դրամները նվիրել է Սարգիս հայկոսպոս Տեր-Գասպարյանը, որի համար կա հետույալ հիշատակագրությունը)։

Այսպիսի դրամք նույնիսկ ևս ի Սարգիս հայկոսպոս Տեր-Գասպարյան, ի 1887 ամի։

№ 186

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆ

(Պարսկերեն)

Քերբեր՝ 137.—Պրակներ՝ 19, Ա-ը 10 թերթ, Բ՝ 20, Գ՝ 3, Դ՝ 36, իսկ մեքայալ 15 պրակներից յուրաքանչյուրը 4-ական թերթ։—Մեծությունը՝ $35,5 \times 22 \times 1,5$ սմ.։—Նյութը՝ հասարակ սպիտակ թուղթ։—Պաշտպանությունը՝ թափված ստվարաթուղթ։—Պահպանակները՝ սկզբից մի թերթ հասարակ թուղթ։—Վիճակը՝ անբավարար։ Պրակները բաժանվել են միմյանցից։—Գրությունը՝ միասյուն։—Տողերը՝ փոփոխական, 14—24 տող։—Գծումները՝ առաջին մասը առանց ճնշման, իսկ երկրորդ մասը ճնշումով։—Գիրը՝ պարզ ձևագիր։—Ձադագրություն՝ չկա։—Գրիչը՝ Այի բեգ Վալիֆա—Ժամանակը՝ 1809 թ.։—Վայրը՝ Շուշի (կենտրոնի Ղարաբաղ)։—Մանրությունը՝ սույն ձևագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից։ Ձեռագրում կան պարսկերեն լեզվով զբաղված զանազան վեց թերթեր, զբաղված զանազան գրիչների կողմից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ք.թ. 3րդ—76ա.— Ասորպատականի վերաբերյալ կալվածների մասին արձանագրությունների մատյան, գրված պարսկերեն լեզվով, 794-ից 1310 Հիշրայի թվականին։ Կան ընդամենը 401 արձանագրություններ։

Ք.թ. 78ա—137ա.— Հողի և անասունների վերաբերյալ պարտագրերի պատճենները, գրված պարսկերեն լեզվով, ԺԶ—ԺԹ դարերի։ Կան ընդամենը 126 վավերագրերի պատճեններ։

Հիշատակարան՝ թ. 137ա։

Հիշատակագրություն՝ թ. 76ր։

№ 187

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆ

(Պարսկերեն)

Քերբեր՝ 76.—Պրակներ՝ 9, յուրաքանչյուրը 8 թերթից։—Մեծությունը՝ $22 \times 17,7 \times 1$ սմ.։—Նյութը՝ հասարակ սպիտակ թուղթ։—Պաշտպանությունը՝ թափված ստվարաթուղթ։—Պահպանակներ՝ չկան։—Վիճակը՝ մի մասը քայքայված է։—Գրությունը՝ միասյուն։—Տողերը՝ փոփոխական, 15—20 տող։—Գծումները՝ առանց ճնշման։—Գիրը՝ հասարակ ձևագիր։—Ձադագրություն՝ չկա։—Գրիչը՝ անհայտ։—Ժամանակը՝ 1899 թ.։—Վայրը՝ Թավրիզ։—Մանրությունը՝ սույն պարսկերեն ձևագիրը

հանված է Մայր Աթոռի արխիվից։ Ձեռագրում կան մեծ մասով տրցակ պարսկերեն նամակներ, պատճեններ, ձեռագրեր, հաշիվներ, որոնք պատկանել են հաշիվ վարող պետ Դադյանին, երբ նա 1899 թվականին եղել է առաջնորդական փոխանորդ Ասորպատականի թեմին։ Գրություններ կան Ասորպատականի գլխավոր զավառներից՝ Խոյից, Սալմաստից, Ուրմիայից, ինչպես նաև Մարաղայից, Երզնուց և Թահրանից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խաշիվ վարող պետ Դադյանի և ալլոց ուղարկված ձեռագրերի և նամակների պատճենները։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 1ա.— Արձանագրությանց ելից մատյան (1899 թվականի հունիս ամիս) գրված պարսկերեն լեզվով։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. 80ա.— Մակո (գրված հայերեն),

Ք. 87ա.— Խոյ " "

Ք. 75ա.— Սալմաստ " "

№ 188

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Պարսկերեն)

Քերբեր՝ 38.—Պրակներ՝ 5, յուրաքանչյուրը 6 թերթից, բացառությամբ Բ պրակի, որ 6 թերթ է։—Մեծությունը՝ $22 \times 18 \times 0,3$ սմ.։—Նյութը՝ հասարակ սպիտակ թուղթ։—Պաշտպանությունը՝ չկա։—Պահպանակներ՝ չկան։—Վիճակը՝ պրակները միմյանցից բաժանվել են 14ա և 15ա թերթերի մեջտեղից 5 թերթ ընկել է։—Գրությունը՝ միասյուն, գրված է թերթի աջակողմյան կիսում։—Տողերը՝ 16։—Գծումները՝ առանց ճնշման։—Գիրը՝ պարզ ձևագիր։—Ձադագրություն՝ չկա։—Գրիչը՝ Միրզա Աթոն խան։—Ժամանակը՝ ԺԺ դ.։—Վայրը՝ Թավրիզ։—Մանրությունը՝ սույն պարսկերեն ձևագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ասորպատականի համառոտ աշխարհագրություն էջ 28ա-ից մինչև 31ա տրվում են հողային, կենդանական, հանքային հարստությունների, շահերի և քանակությունների բացակայությունը։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Ք. 1ա.— Հիշրայի 1287 թ.։

Ք. 38բ.— Հիշրայի 1211 թ.։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. թ. 2ա, 3բ, 4բ, 9ա, 35ա, 25բ և 35ա։

(Շարունակելի)